



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17674

17675

591.99

U-94

1. 5/6 wly 2nd
2. P. wly and 0. 1/2 wly.

ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Առաջին անգամ ներկայացրած է Պատերասէրներէց, բարեգործական նպատակով, Թիֆլիզի ճմերային Պատրոնում

1873 Յուլի Ապրիլի 19-ին:

այս

ՔԱՆԴԱՆՑ ՕՋԱԽ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԵՐԿՐՈՐԳ ՏՊԱՐՈՒԹԻՒՆ

Ուղղած

ՓԱՐՈՍ ԳՐԱՏՈՒՆ
PAROS BOOK STORE
57 La Belle Ave., H. P.
Detroit Michigan

Թ Ի Փ Ղ Ի Զ

ԱՐԱԳԱՏԻԳ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ԳՈՒՂԳԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12

1905

3995

4320 634534

1888

1888

1888

1888

7757-57

Дозволено цензурою. Тифлиси, 5-го июля 1904 года.

1888

«Բանդած օջախ» կարուկերգութիւնը Առի-
րուած է Մեծարգոյ Պարոն Յովհաննէս
Տէր-Գրիգորեանին հետեւեալ ուղերձով:

ՎԱՆՑ ՁԱՆ,


Դու էիր, որ 1871 թուի ամառը, Կրժանխում, մէկ-մէկ
գրում էիր սասձներս « ԲԱՆԳԱԾ ՕՋԱԽԸ » հեղինակելիս:

Նրանից դէպ կարմնի սակով շատ ջուր անց կացաւ, բայց
ե՛ն արած լառերիւնը արժիցս չհետաւցաւ:

Սրա համար էլ այս աշխատանքս քեզ եմ նուիրում, որ կար-
դպիս միտք թե՛ս քեզ սիրող ու պատուող բարեկամ

Գարիէլ Սուրբուկեանցին:

Թիֆլիզ,
1882 թ. Յունիսի 29-ին:




ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ

ԿՆՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԾՈՎ

Թիֆլիզի թատրոն, 1873 թ. Ապրիլի 19-ին:

ԴՈՐԾՈՎ ԱՆՁԻՆՔ

- ԳՈՒԼԱՐԻՆՑ ՕՍԷՓԸ, վաճառա-
կան Պ. Ա. ՔԻՉՄԻՉԵԱՆՑ
- ՍԱԼՕՄԷ, նրա կինը Օր. Մ. ՔԱԼԵՆԹԵՐԵԱՆՑ
- ՆԱՏՕ, նրանց աղջիկը Օր. Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ
- ԽԱԽՕ, Օսէփի հօրաքայրը Տ. Կ. ԵՒԱՆԳՈՒԼԻԱՆՑ +
- ԳԷՎՕ, Օսէփի բարեկամ, վաճա-
ռական Պ. Ջ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
- ԱԼԷՔՍԱՆԳՐ ՄԱՐՄԱՐՈՎ, աստի-
ճանաւոր երկտասարդ Պ. Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ +
- ԼԷՊՐՈՒՆՑ ՄԱԹՈՒՍԻ ՎՈՒՐԹԻ
ՓԱՐՄԻՂԸ, վաճառական Պ. Մ. ԷԼԻՕՋՈՎ +
- ՔԱԼԻ, նրա կինը Օր. Ս. ԲԱՅԵԱՆԳՈՒՐԵԱՆՑ
- ԳԻԾ-ՄՕՋԻ, Լէւրօիկնց մօտիկ աղ-
դական Պ. Ա. ՄԱՆԳԻՆԵԱՆՑ
- ՄԻԽՕ, Փարսիղի դուքնի պստի աշ-
կերտ Պ. Ն. ՆԱԻԱՍԱՐԳԻԱՆՑ
- ԴԱՐՁՕ, Փարսիղի դուքնի մեծ աշ-
կերտ Պ. Մ. ՍՈՒԼԵԱՆՑ



ՄԱՐԹԱՅ, լատորագ այրի կին . . . Տ. Մ. ՄԷԼԻՔԵԱՆՑ
ՆԻՆՑ, հիւր Օր. Գ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Կ
ՓՕՓՕ, երգեցող հիւր Տ. Ա. ՊՈՉԸՆԱՆՑ

Լատո ու վէշէր, լատո խաղացող բողմաթիւ կանաք, օրիորդ-
ներ, Սուղէքնի-Պրիստաւ, նրա գրագիրը, սարտատէրեր, վկա-
ներ և ծառաներ:

Առաջին և երրորդ արարուածները կատարվում են Օսէփի
տանը, իսկ երկրորդը՝ Փարսիդի տանը:

Անցիւ պատահում է Թիֆլիզում 1871-ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՕՍԷՓ, 45 տարեկան բարձրահասակ աղամարդ
գեղեցիկ, գրաւիչ դէմքով: Երեսը ածելած, գլխի
մազերը փոքր ինչ սպիտակախառն, իսկ յօնքերը
և բեխերը սև: Տեղական բոլորովին սև հագուստ՝
կաբան և անգրավարտիքը մահուդից, փողպատը
և արխալուխը մետաքսից. մէջքին արխալուխի
վրայից արծաթէ նեղ քամար, կաբայի վրայից
մետաքսեայ կապոյտ գօտի: Ընդհանրապէս հազ-
նուած է թէև հասարակ, բայց մեծ ճաշակով: Գործ
է ածում բուխարու սև մորթէ գգակ՝ ծայրը փոքր
ինչ ներս ծալած, և մետաքսեայ կապոյտ ծաղկա-
խառն թաշկինակ: Շարժուածքը և խօսակցու-
թեան ձևերը ամենաազնիւ:

ՍԱԼՕՄԷ, 35 տարեկան փառահեղ կին սև մա-
զերով: Առաջին արարուածում՝ երկու ձեռք եւրո-
պական մօզայի հագուստ, մինը—սկզբում, ամեն-
օրեայ, իսկ միւսը—Մարմարովին ընդունելիս,
ընտիր: Երկրորդ արարուածում՝ բուն վրաց շքեղ
հագուստ դօշ ու գօտկով, գլխի սպիտակ փաթա-
թանով և քաթիւրայով, որ զարդարած է ոսկէ
կոճակներով և մարգարտէ լայն բաֆթայով. ձեռ-
նոցներ և զունաւոր փոքրիկ հովանոց: Երրորդ
արարուածում՝ դարձեալ վրաց ամենաշքեղ մի
ուրիշ հագուստ նոյնպէս դօշ ու գօտկով, բայց

առանց քաթիրայի: Գլուխը, նոյն իսկ առաջին արարուածից, միշտ զարգարուած է վրացնակ՝ զանազան չիքիլաներով և ոսկեկար ճակտի-ազլուխներով: Գործ է ածում թանկագին ակնիզէններ և ոսկէ ժամացոյց ոսկէ շղթայով: Շարժուածքը գոտոգ, խօսակցութեան ձևերը փքուն: Առհասարակ մեծ կարծիք ունի իր վրայ:

ՆԱՏՕ, 18 տարեկան, շատ գեղեցիկ, բայց թեթևալիկ օրիորդ: Երեք ձեռք եւրոպական մօզայի շքեղ հագուստ: Մինը՝ առաջին արարուածի սկզբում, գլխարկով, քօղով, ձեռնոցներով, վերարկուով և փոքրիկ հովանոցով. միւսը՝ նոյն արարուածի վերջում, ինչպէս յիշուած է իր տեղը. իսկ երրորդը՝ վերջին արարուածում, սպիտակ հովհարով: Գլուխը բաց, միշտ եւրոպական ձևով զարգարուած: Խօսակցութիւնը արագ և կրակոտ, շարժուածքը կենդանի:

ԽԱԽՕ, 65 տարեկան այրի կին: Վրաց հագուստ, գլուխը վրացնակ ծածկուած հասարակ չիքիլայով և մուգ-դաւամբարէ ճակտի-ազլուխով, առանց քորոցի: Մուգ-կապոյտ դօշ սև թաւիշէ ժապաւէնով բոլորած և մեծ փիրուզէ քորոցով ամրացրած: Մետաքսեայ սև դէրիայ, քիրմանէ սև շալ և նոյն շալից գօտի: Սկզբում՝ սպիտակ դաթիրայ և մետաքսեայ սև կապտախառն գլխիփաթաթան: Խօսակցութիւնը և շարժուածքը ծանր: Ամենապատկառելի անձն:

ԳԷՎՕ, 45 տարեկան, հաճելի դէմքով և սպիտակախառն սև մազերով: Երեսը ածելած, բեխերը միջակ: Տեղական համեստ հագուստ՝ սև մահուզէ կարայ և անդրավարտիք, մուգ-կապոյտ մետաքսեայ արխալուխ, մուգ-մանիշակագոյն մետաքսեայ գօտի և բուխարու սև մորթէ գլակ: Խօսակցութիւնը և շարժուածքը ծանր:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, 30 տարեկան, գեղեցիկ կազմուածքով, հաճելի դէմքով, սև մազերով և կարճ մօրուքով, բայց կղակը ածելած: Հագուստը բոլորովին եւրոպական, միշտ ձեռնոցներով. գլխարկը՝ սիլինդր: Երրորդ արարուածում՝ մուգ-կանաչ մահուզէ պաշտօնական Ֆրակ (վիցմուռդիր) սև թաւիշէ օձիքով և ոսկեգօծ կոճակներով: Գործ է ածում պէսնէ: Շարժուածքը և խօսակցութեան ձևերը անձնագով (Ֆատ):

ՓԱՐՄՂ, 55 տարեկան, միջին հասակով և տգեղ դէմքով հաստափոր մարդ: Մազերը սև, յօնքերը հաստ, բեխերը կարճ, երեսը ածելած: Եւրոպական հասարակ, անճաշակ հագուստ՝ սև մահուզէ լայն սերթուկ, երկար ժիլէտ և փոքր ինչ լայն անդրավարտիք. փողպատը սև մետաքսեայ թաշկինակից: Կրճքին արծաթէ ժամացոյց սև ժապաւէնով: Գլխարկը՝ փոքրիկ սև ֆուրաթկայ: Շարժուածքը և խօսակցութեան ձևերը ամենահասարակ:

ՔԱՆԻ, 40 տարեկան, սպիտակ բայց սպիտակ գեղերով և շէկ մազերով կարճահասակ, նիհար կին: Հագուստը բոլորովին վրացնակ՝ չիքիլայով, ձակ-տի-աղլուխով և դօշ ու գօտիով: Չարդարուած է զանազան թանկագին ակնեղէններով: Ընդհանրապէս հազնուած է հասարակ և անճաշակ: Շարժուածքը և խօսակցութեան ձևերը գոհնիկ:

ԳԻԺ-ՄՕԶԻ, 30 տարեկան, սև մազերով գեղեցիկ երիտասարդ: Բեխերը փոքրիկ, երեսը ածելած, աջ թշին սև նիշ: Տեղական համեստ, բայց ճաշակով հագուստ՝ սև մահուղէ կուրծքը բաց կարայ, նոյն մահուղից լայն անդրավարտիք, սպիտակ չիթէ արխալուխ, մէջքին արխալուխի վրայից արծաթէ նեղ քամար, կրծքին ժամացոյցի հասարակ կարճ շղթայ և դլխին սև փոքրիկ ֆուրածկայ: Գործ է ածում մետաքսեայ դեղին ծաղկախառն թաշկինակ, որ սկզբում գցած ունի պարանոցին, ծայրերը կրծքի կողմից քամարի տակ ամրացրած: Շարժուածքը կենդանի, խօսակցութիւնը կրակոտ:

ՄԻԽՕ, 16 տարեկան, կարմիր երեսանի, սև մազերով պատանի: Սև սերթուկ, դեղին չիթէ արխալուխ, կաշուէ սև նեղ քամար, շատ նեղ ու կարճ գունաւոր անդրավարտիք և փոքրիկ սև ֆուրածկայ:

ԴԱՐԶՕ, 25 տարեկան, սև մազերով, փոքրիկ

բեխերով և խորամանկ դէմքով երիտասարդ: Տեղական հագուստ՝ մահուղէ կուրծքը բաց սև կարայ: Մետաքսեայ արիւնագոյն արխալուխ, կուրծքը ոսկեթել ժապաւէնով բոլորած, մոխրագոյն մահուղէ անդրավարտիք, արծաթէ նեղ քամար արխալուխի վրայից, կրծքին ժամացոյցի ոսկէ շղթայ և ձեռքին փոքրիկ սև ֆուրածկայ:

ՄԱՐԹԱՅ, 50 տարեկան, կարմիր ու լիքը երեսով, սև մազերով հաստափոր կին: Բոլորովին վրաց հագուստ՝ մետաքսեայ մուգ-միխակագոյն դէրիայ և սև, բայց ծաղկախառն, լայն ժապաւէնից դօշ ու գօտիկ:

ՓՕՓՕ, 30 տարեկան, գեղեցիկ, կրակոտ կին, վրաց շքեղ հագուստով: Երգում է հիանալի:

ՆԻՆՕ, 35 տարեկան, նիհար կին, վրաց նոյնպէս չքեղ հագուստով:

ԲԱԶՄԱԹԻԻ ԿԱՆԱՅԲ (մօտաւորապէս քսան հոգի), զանազան հասակի, բոլորն էլ վրաց շքեղ հագուստներով:

ՕՐԻՈՐԴՆԵՐ, եւրոպական հագուստներով, երկու-երեք հոգի:

ՍՈՒԿԵՖՆԻ-ՊՐԻՍՏԱՎ, եւրոպական հագուստով և պաշտօնական շղթայով:

ԳՐԱԳԻՐ, ԼԵՐՈՎԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ:

ՊԱՐՏԱՏԷՐԵՐ և ՎԿԱՆԵՐ (մտաւարապէս հինգ հոգի), տեղական և ԼԵՐՈՎԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՆԵՐՈՎ:

ԾԱՌԱՆԵՐ, Փրակով և սպիտակ ձեռնոցներով:

Ք Ա Ն Դ Ա Ծ Օ Զ Ա Խ

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Ա Ռ Ա Զ Ի Ն

Օսէփի տանը բաւականին հարուստ սենեակ թանկագին կահ-
կարասիքով: Առաստաղից կախած է ջան հանգած մոմե-
րով. յատակը ծածկած է գորգով: Աջ ու ձախ գոներ: Խոր-
բում, աջ*) կողմը՝ լայն դուռը, փեղկերը բացուած, և
դռան ետեր նախասենեակ. իսկ ձախ կողմը՝ լուսամուտ,
որի միջով երևում է պարտէզ: Դռներն ու լուսամուտը
զարդարած են գեղեցիկ դրապրիներով: Սենեակի աջ
կողմը՝ բազմոց մեծ և փոքրիկ սեղաններով, որոնք ծած-
կած են թաւիչէ գունաւոր սփռոցներով. ձախ կողմը՝
գորգով, քէչալով և մութաքաներով զարդարած տախտ:
Ուր հարկն է աթոռներ և բազկաթոռներ: Ցերեկ է:

*) Աջ, ձախ, պէտք է ընդունել միշտ հոնդիսականների
գիրքից նայելով:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՍԱԼՕՄԷ, ԽԱԽՈ

ՍԱԼՕՄԷ, քեմի խորքում, նախասննակի դռանը:

Համեցէք, համեցէք... Այ, Տէրը բարի տայ քիզ, բառօնօ ջան, ջափա քաշեցիր:

ԽԱԽՈ, դամիրայով, գալիս է նախասննակի աջ կողմից:

Բարի լուս ձիզ: (Առաջ գալով եւ դամիրան վեր առնելով): Ի՞նչ իս հայ-հարա աղապրի:

Ղամիրայի մէկ ծայրը տալիս է Սալօմէին:

ՍԱԼՕՄԷ, դամիրան ձգելով:

Ի՛հ, բառօնօ ջան, հէտաիկ իմ, հէտաիկ իմ, վուր դանակ լափին սրտումս, մէ պուս արուն չի կաթի:

Խօսելով ծալում են դամիրան:

ԽԱԽՈ

Ի՞նչ է, չէ բլմամ:

ՍԱԼՕՄԷ

Արա վնրդանց *) կուլի, բառօնօ ջան. նրանք ութ հարուր թումնի վրայ դայիմ կանդնած ին, ու Օսէփն էնդագա չէ տալի. խօմ կու ճանշնաս ինչ մկրտան է:

ԽԱԽՈ

Նա էլ ուցնալուր է, քմ:

*) Ա տառը թաւով նշանակած (վ) պէտք է արտասանել որպէս Թուրքաց ٧ կամ Վրացաց 3:

ՍԱԼՕՄԷ

Ախար, Ատուձ կու վիկալնէ՛, բառօնօ ջան, վուր մէ էրկու հարուր թումնի խաթիր էս հանդի բունը մօշլա բլի՛, էն հանգի աղէն ձեռնէնկերէմէս պնայ, էն չնի ու վառքի աէրը՛:

ԽԱԽՈ

Էտէնց իր տաածութիւնն էլ ինչ է, քմ:

ՍԱԼՕՄԷ

Արմ, բառօնօ ջան, հէնց էտու համա ջափա ափի քիզ, վուր մէ Օսէփի հիզ խօսիս, էղէքա բան հասկացնիլ տաս, հէնց քու Սիտօն պրծնի ամեն ցաւէմէն:

ԽԱԽՈ

Կու խօսիմ, կու խօսիմ, բաս խօմ էտէնց չինք թողնի, վուրթի: (Նստած դամիրան դնելով տախտի քնշայի տակ եւ վրան նստելով): Վի՛հ, զէնացվա, էս քու չի քարիբը խօ վուանիրս կտարաից:

ՍԱԼՕՄԷ, նստելով աթոռի վրայ:

Ա՛յ, Տէրը բարի տայ քիզ, բառօնօ. Կամարկատարն բլի քու վուրթկերանց համա բարեխօս, վունցսր հիմի դուն բարի իս խօսում իմ նատօի համա:

ԽԱԽՈ

Նատօն կի իմը վուրթի չէ, թէ ինչ է. վէնացվալէ նրա պէտրած ջանին. ո՛ր է, տանը չէ՛:

ՍԱԼՕՄԷ

Վունց չէ, շուր է հաքնում... Արա դուն գիդիս, բառօնօ ջան, վունցսր կու խօսիս. էղէքա պուլիս բերիս էս բանը: Էսօր էւէտ կարական ջուղար ին ուղում. առուտեան վաղ-վաղ էտօի էր էն աղի քուրը, յօրէս էլի գու քայ:

ԽԱՆԹ

Է՛ս ստաթիւս, էս ստաթիւս, վուրթի, դուն դըն-
ջացի՛. սը է Օսէվը, վնւրթէնն է:

ՍԱՆՕՄԷ

Բան ունէ, յօրէս դուս դու քայ. կանգնիլ է թէ
քախկըցու պիտի տամ, կ'օսէ:

ԽԱՆԹ

Հա, ինչ է, վուրթի, լաւ քախկըցին ու վրօ լաւ
չէ, վուր ջիրուսը փուղիքը չըխշըխուսւմ լլի:

ՍԱՆՕՄԷ

Արա էս խօսիկ է, վուր դուն իս ասում, բատօնօ
ջան. վնւր քաղկըցին դու քայ Մարմարինց Ալէք-
սանգրի հիգ. քախկըցերու հանն ու կաուրն է. նրա
մարիփաթն ածէ մենակ տասը քախկըցի: Էն օրն էլի
էստի էր վիզիտով, խիլիս ծէրը դնաց, քու արիւր,
նրա արարմունքի վրայ. ինքն էլ խօսմ ջաճիլ, սիրուն,
ուսում ասած, լաւ տիղ, լաւ ածխուղ ու օրն օրվան
վրայ խիտա առաջ կ'էհայ, կ'օսէ, կուլի վիրշը գու-
րէնատօր էլ գառնայ, կ'օսէ:

ԽԱՆԹ

Դիփ լաւ, Սարօմէ ջան, ամա վուր լանը գլուխ
չգայ, շարէն ինչ է. վուրն էլ պիտի ազամարթուն
լիք, իր օրուսը քաղցած չին մնա, անկարիք կու
անց կացնին իրանց օրը: Ի՛նչ է, բան իք չինի ձիգ
համա՝ շինօվնիկ, շինօվնիկ:

ՍԱՆՕՄԷ

Լաւ իս ասում, բատօնօ ջան, ամա նատօն քախ-
կըցի չէ ուզում, գլուխը մահու է տալի... Ո՛ւր է՝ էրնէկ
չի լլի ուզէ, վուր գլխամեա չի ուրախանայ. ամա

քանգվի հիմնիկան ժամանակը. էս դուս էկաւ դրանց
ուսումէմէն, էլ հօրն ու մօրը չին լուսմ:

ԽԱՆԹ

Հէլր գիզի աշխարք, հայ-թէ փոխիցար. Բուռն
ու քարափը էլի էնդունք է ու մարթիքը ուրիշ գա-
ւան... Ի՛նչ իմացայ, Սարօմէ, Լէպրօինք էլ շայիշ ին
գալի, կ'օսէ. գնւրթ է:

ՍԱՆՕՄԷ

Բան, բատօնօ ջան, շարէշար մօցիլիք է, վուր
լանում է նրանց տանէմէն... Արա Աստուձ կու վի-
կաշնէ, վուր էն հանգի աղէն նրանց փետայ գառնայ
ու իմ ախշիկը մնայ, կուպէճի կնիկ շինի՛մ:

ԽԱՆԹ

Նրանք էլ վուր մարթ գառան... Լէպրօինց Փա-
սօն... Փանք քիզ, Աստուձ, փառք, էս էլ հալրաթ
ժամանակի հիզ է գայի: Էրէզ շէր մէկէլ օրը բա-
ղասխանումը աշկիբա էր, հէնց գիզիմ աճիկս առշիւր
կանգնած է. կանանչ կամբօտէ կարէն հաքին, նիզ
սօսանի գօղիկը, ախալուխի արմընդնիլը դուս թա-
փած, լափշըքնիլը շուրս տիզ կարկանած, շալակը
շալիին կու բարցէին վրէն խոզինը: Քանի ջէր*) է
թոփերով շթիլը գիզիլը բերի միւր տուն գազը ձե-
սին ու գրօշներով շաղիբգանա տարի միգմէն... Վայ-
ցէ՛ն, հիմի մարթ է գառի. գլխուսը փանփերով տասը
ջէր յիզ ու յիզ կու գրգէինք: Ամա սուա կու խօսէր,
սուա կու խօսէր, Սարօմէ, վուր Տէրը թափէ ու Ա-

*) Ջեր — անգամ. ջեր — դեռ:

տուձ ազատէ: Ի՞նչ անիս՝ հալալութիւնը քաղցած սպանում է մարթում:

ՍԱԼՕՄԷ

Հէնց էա Փատօն է, բատօնօ, վուր հիմի վասիլ Մաթվէիչ ին տում գիփունըրը:

ԽԱԽՕ

Նրա մամա Մաթուսին էլ վուր Մաթվէիչ ին շինի, ս'ի գիմնայ նրանցը: Փինաշի Մաթուսը, քանի ջէր է իմ քօշիրը կարկանի. դուքանը նորաշնի թադումն ունէր: Տէր Ատուձ, գիփ տակն ու վրէն էլաւ աշխարքը...

Տ Ե Ս Ի Լ Բ

ՆՐԱՆՔ, ՆԱՏՕ

ՆԱՏՕ, մտնելով ձախ դռնից, դրսի հստուստով:

Մամաշա՛... Մամիդա ջան, էտաի ի՛ն:

Փաթաթվում է եւ համբուրում կուրծքը:

ԽԱԽՕ

Մեանի մամիդէն պէտլած ջանիտ: (Համբուրում է:)
Ի՞նչ թլթլալի իս, քօժ, թօխլօ ձու իս: Էս սւր իս հաղրվում, քն. իմ գալը գաւր չէկաւ:

ՆԱՏՕ

Էա ի՞նչ իս տում, մամիդա ջան, էս սասաթիս դու քամ, փսղոցն իմ գնում. մէ էրկու իմքին պիտի առնիմ: (Գառնում է գէպի Սալօմէն:)
Մամաշա ջան...

Խօսում են ցածր ձայնով:

ԽԱԽՕ, առանձին:

Արա տուա իօ չէ տում սրա մամէն: (Բարձր:)
Նո*
գնամ մէ էրեխանցը տեսնիմ: (Ուզում է վեր կենալ:)
Մէ սրի, ազլաջիջի, ձեռա իս տու, ծնգնիրս չէ գալի:
Նատօն բարձրացնում է:

ՍԱԼՕՄԷ, օգնելով:

Նո էլ օտկիմ, բատօնօ ջան:

ԽԱԽՕ, վեր կենալով:

Ապրիք, վուրթիր, իմ տնրսը գառնար: (Նատօին:)
Մեանիմ քու պէտլած ջանին, մէ քու թագին ու փսակին արժանի անէ ինձ Ատուձ:

ՍԱԼՕՄԷ

Ատուձ լսէ քիզ, բատօնօ ջան:

ԽԱԽՕ

Գու՛լի, կու՛լի, վուրթի: (Գնալիս, գէպի հանդիսականները:)
Ի՛հ, Ատուձ, Ատուձ, պառվեցայ:

Գուրս է գնում ձախ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Գ

ՍԱԼՕՄԷ, ՆԱՏՕ

ՆԱՏՕ

Մի ուշացնի, է՛, մամաշա:

*) Ե տառը մակակէտով նշանակած (՛ե) պէտք է արտասանել իսկ և իսկ այնպէս, ինչպէս արտասանվում է յի վանկը բառի միջում կամ վերջում ձայնաւորից յետոյ, օրինակ՝ մա յիս, Դա յի անէ, երկնա յին, Եսա յի, և այլն:

ՍԱԼՕՄԷ

Էսդրազամին մէտի վուր չըլի, ինչ է, քան:

ՆԱՏՕ

Գլթաղվա, մամաշա ջան, հարկաւուր է:

ՍԱԼՕՄԷ, ձեռքը գրպանը դնելով:

Քիմէն իսօ չիմ պրծնի սէ... (Հանուժ է քսակը եւ փող որոնելով): Ընհա...

ՆԱՏՕ, ձեռքը տանելով դէպի քսակը:

Ա՛յ, մամաշա:

ՍԱԼՕՄԷ

Մնւլափի, քան: (Հանելով փողը եւ տալով Նատօին): Բռնէ, քու մամիմէն չիմ պրծնի:

ՆԱՏՕ

Վուր հարկաւուր է, վն, ՚ես ինչ անիմ:

ՍԱԼՕՄԷ

Հարկաւուր է, հարկաւուր, էլ վիրչ կի շկայ սէ... (Նատօի գլխարկն ուղղելով): Էս ինչ հանգն իս ծածկի-ծաղկներուն էլ մտիկ, մէկը վուրթէնն է, մէկէլը վուրթէնը:

Ուղղուժ է:

ՆԱՏՕ

Դիփ մէկ է, մամաշա:

ՍԱԼՕՄԷ

Ուցնափուր իս, քան: (Քօղն ուղղելով): Վօայն էսէնց-ջանս գնաց քու գրտակէմէն:

ՆԱՏՕ

Խիտա իս սիրունացնում, մամաշա:

ՍԱԼՕՄԷ

Սիրունացնիմ, շսիրունացնիմ, վիրչը կուպծի կնիկ պիտի դառնաս:

ՆԱՏՕ

Դիանի, դիանի, լատ ինչ իմ արի:

ՍԱԼՕՄԷ

Քու մամէն գիփ թիզ է հարցնում, գաննա չիմ գիփի:

ՆԱՏՕ

Բաս սմը կու հարցնի:

ՍԱԼՕՄԷ

Դուն էտէնց ասա ու, նա մկրատի պէս կանգնած է, վուր քախկըցու պիտի տամ, կ'օտէ:

ՆԱՏՕ

Վսւնց չէ:

ՍԱԼՕՄԷ

Աստուձ գիգենայ:

ՆԱՏՕ

Դսւրթ իս ասում, մամաշա:

ՍԱԼՕՄԷ

Քու արիւր. էսօր էլ էտ էինք խօսում:

ՆԱՏՕ

Իժում վճաւժ քան է:

ՍԱԼՕՄԷ

Ուրիչ ճար վուր շկայ, ինչ անիմ ՚ես. Էսդրազա փուղ շկայ:

ՆԱՏՕ

Էս է, կուպէծի կնիկ շինեցեր ինձ, վուր գիփունը վրէս ծիծաղին, (Աացի ձայնով): վուր գիփունը մասխարա զցին ինձ. էլ էտու համա էսէնց ինչի էիք մինձացնում ինձ: Նրան համա սորվեցայ ոսէվարը՝, ֆրանցուցէվարը՝, ֆօրտօպիանը՝. ինչ կ'օնէ նա ֆօրտօպիան, նրան բուխի քիլէք է հարկաւուր. ինչ կ'օնէ

նա ֆրանցուցե՛վարը, վննց պիտի խօսի հիդս, թէ-
զուգ հէնց ուսե՛վարը՝ մօյա պաշօլ, տփօյա վիզայ:

ՍԱԼՕՄԷ

Ի՛հ, լաւ է դուն էլ, թավրափխան:
ՆԱՏՕ, լաց վննիով:

Զի բլի, մամաշա, չէ, չիմ կանա, 'ես քախկըցի
չիմ կանա ուղի, չիմ ուղի, ջուրը կու ննգնիմ ու չիմ
ուղի, գլուխս կու ապանիմ ու չիմ ուղի: (Լաց է վննում
ևւ փողը վերադարձնում Սալօմէին:) Բռնէ, էլ ի՛նչ հար-
կաւուր է ինձ, էլ ս՛ւր գնամ, ինչի՛ համա գնամ, ս՛ւմ
համա գնամ...

Հովանոցն ու վերարկուն վայր է ածում, նստում է
բազմոցի վրայ եւ հեկեկալով լալիս է:

ՍԱԼՕՄԷ

Ա՛խ, Աստուձ, Աստուձ, էս ի՛նչ պատիժ է. վննը
մէ կրակին դիմնամ 'ես: (հատօին:) Սնւ, լաւ է, բէ-
հայա:

ՆԱՏՕ

Է՛սօրութիւն էլք մինձացնում ի՛նձ, ձիւր ամազն
ու աշխատանքն էստու համա է՛ր: (Լաց է վննում:) Նս
պիտի ինձ բուրվարի վրայ ման ածի՛, նս պիտի ինձ
Կուսթօկը տանի՛, նրս հիդ պիտի գնամ աէ՛տար:
(Լաց է վննում:) Հը՛, հը՛, հը՛...

ՍԱԼՕՄԷ

Լսւ է, լաւ, սիրտդ անմիդ մի շոււ բերի:
ՆԱՏՕ, յանկարծ վեր է թռչում տեղիցը ու փառանձու
է Սալօմէին:

Գէթաղիվա, մամաշա, գէնացիվալէ, մամաշա ջան,
աղատէ ինձ:

ՍԱԼՕՄԷ

Մամաշի գլուխը մեռիլ էր ու էս օրը չէր ննդի, հա՛:
ՆԱՏՕ

Գէնացիվալէ, մամաշա, աղատէ, թէ չէ ճէլքը կու
ննգնիմ, Աստուձ դիզենայ:

Աչքերը սքոււմ է:

ՍԱԼՕՄԷ, լացի ձայնով:

ձէլքը ննգնի հիմիկվան ժամանակը, հը՛:

Նոյնպէս աչքերը սքոււմ է:

ՆԱՏՕ

Գուդիս քու օրումը մարթու մի տա ինձ, մամա-
շա ջան. գուդիս տանը քօծութիւն կ'օնիմ դիվ ու
էս բանը մօշլա արս, գէթաղիվա, մամաշա ջան:

ՍԱԼՕՄԷ

Մօշլա արած է, մօշլա արած, վուրթի:

ՆԱՏՕ

Գէնացիվալէ, մամաշա ջան:

ՍԱԼՕՄԷ

Ասում իմ էլի, քս՛:

ՆԱՏՕ

Ղսւրթ, մամաշա ջան

ՍԱԼՕՄԷ

Քու արիվն իմ տտում:

ՆԱՏՕ, համբուրելով Սալօմէին:

Ա՛խ, մամաշա ջան:

ՍԱԼՕՄԷ

Պրծայ քիմէ՛ն. լացի գուդա իս դրուտա, կինա-
ղամ ինձ էլ լացըցրիք:

ՆԱՏՕ, ծիծաղում է:

Հը՛...

ՍԱԼՕՄԷ

Հիմի ծիծաղի:

ՆԱՏՕ, երկար ծիծաղում է:

Հն, հն, հն... վախեցալ, վա:

ՍԱԼՕՄԷ

Չսա քարափշուռէն իս: (Փողը Նատօի մտքը դնելով): Բռնէ, էլ մի ուշանա: (Նատօի մազերը ուղղելով):

Միշտ-մօշիէն մէշը գրբի:

ՆԱՏՕ, ազատուելով մօր մտքից:

Լնւ է, լաւ, մամաշա:

Վերցնում է վերարկուն եւ հովանոցի:

ՍԱԼՕՄԷ

Աճկիրդ լնւ սրբէ, ամութ է:

ՆԱՏՕ

Սրբած է, սրբած. իմ աճկերու մօդ սով ինչ բան ունէ:

Ուզում է գնալ:

ՍԱԼՕՄԷ

Չնսա արի, շուշանաս:

ՆԱՏՕ

Էս սասթիս, մամաշա ջան:

Կուրս է գնում նախասենեակի աջ կողմից:

Տ Ե Ս Ի Լ Պ

ՍԱԼՕՄԷ, մենակ:

Չէ, ուրիշ ճար չկայ. վառեցար բլի պիտի գլուխ բերիմ էս բանը, թէգուց գլուխս գրաւ դնիմ... Ո՛վ

քաղցր Աստուծաձին, Գուն բարեխօս բլիս իմ նատօի համա:

Տ Ե Ս Ի Լ Ե

ՍԱԼՕՄԷ, ՕՍԷՓ

ՕՍԷՓ, մտնելով աջ դռնից, առանց դուռի:

Էս նատօն սուր գնաց:

ՍԱԼՕՄԷ

Էստի, դէմուդէմը, մաղազիէն. ինչո՞ւր նօս է ուզում:

ՕՍԷՓ

Հէ՛յ դիդի ժամանակ, սրբի ու սրտ պէս արիւղի ճիւղի միւր քախկըցուն կնգութիւն արա:

Նստում է բազմոցի վրայ:

ՍԱԼՕՄԷ, մտնելով:

Նս էլ էս իմ ասում, Օսէփ ջան. (Ձեռքը ուսին դնելով): արար միտիկը չէ:

ՕՍԷՓ

Նս ուփրօ միտիկ իմ, սով է ինձ ինչ տալի:

ՍԱԼՕՄԷ

Բաս քախկըցու կնիկ շինիւր, էլ լի:

ՕՍԷՓ

Ի՞նչ է, քախկըցին փիս մարթ է, հա՛. Էս փիս մարթ իմ, հա՛, վուր գլուխս ձիւր գերի իմ շինի:

ՍԱԼՕՄԷ, փաթածուելով Օսէփին:

Արա էս վառնից իս ասում, Օսէփ ջան, ամա արար նատօն միտիկ է. սուր է, էրնէկ շէր բլի ինձ պէս էր մինձանցի:

ՕՍԷՓ, ժպտարով:

Մէ խելրով պատուդ էլ էնշախը կու'լէր:

ՍԱԼՕՄԷ, հեռացնելով ձեռքը:

Էս լաւ էր, քան, ինչ ուզում իս, ինձ իս ասում.
խել'դձ իմ գլուխ: Ասան, ասան, ինչ քէվդ տայ, էն
ասա. մէ էս նատօթի բանը պրծի ու իժում ինչ գ'ու-
ղիս ասան:

ՕՍԷՓ

Տօ, թէ պրծայ, ուրիշ ինչ իս ուզում:

ՍԱԼՕՄԷ

Ախար, վուր ինչ ուզում ին, թամամ շիս տայի':

ՕՍԷՓ

Վնւրդանց տամ, վուր էնդագա շունիմ:

ՍԱԼՕՄԷ, կրկին փաթաթուելով նրան:

Գէթադիա, Օսէփ ջան:

ՕՍԷՓ

Չիմ կանա, չէ:

ՍԱԼՕՄԷ, աւելի աղաչելով:

Գէնացվալէ, Օսէփ ջան:

ՕՍԷՓ

Ա կիսիկ, դուն հա ու չէ շիս իմանում, թէ ինչ է:
'ես քիզ մէ խօսիլով ասում իմ, վուր մէճկս չէ գալի,
չէ. մարթ իր լհէրի գօրա կու ձքէ վուարը թէ չէ.
սնիմ ու շիմ տայի', իննհում իմ, էն էլ իմ վնւր-
թու համա:

ՍԱԼՕՄԷ

Ունիլ-շունիլն սվ է հարցնում: Էն հանգի աղայ ըլի
նշնելու ու գլուխս գրան շիմ զնի': Ուրիշնիլը խիստ
չանա ունին վուր տայիս ին. բանս նրանք գօվիլ ին:

ՕՍԷՓ

Տօ, էզէրա գողնալի փուզ ունին, տայիս ին, քիզ
ինչ գալի: Անկճիա բամբակը հանէ. ասում իմ՝ շու-
նիմ, չէ, չէ, չէ ու չէ: Էսօր էքուց մէ բանի իմ
մնում, թէ գլուխ չէկա՝ հարով մարմնով բաթ միշ
էլայ, դուն կի էստի հարէհանի պէս կանգնիլ իս գլու-
խիս ու էլ ինձ շիս հարցնում:

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ իս շարանում, քան, մարթ չկանենայ քի մօզ
բերան բաց անի':

Անբաւական նստում է տախտի վրայ:

ՕՍԷՓ

Չարանում իմ. տօ, դուր հրիշտակ կու գօվեցնիր,
չէ թէ աթմարթու:

ՍԱԼՕՄԷ, կշտամբելով:

Լաւ է, խաշը զիզենայ. 'ես սրտայաւութենով
բան ըլիմ ասում միւր ախշկայ համա, դուն կի էտէնց
վրէս շարանաս... չէր իս, միթամ 'ես չկամ, չիս
փեքր անի քու ախշկայ համա:

ՕՍԷՓ

Փիքը չէ, տօ, սնաստուձ, վուր 'երկր-շուրս աղի-
բանց անում ավի', հագիր ազանշարով ուզում էի՛ն.
Չէհէլ, շնուրով, աշխատող ու իմ բար մարթիք: Անա
ձիր օխտէմէն սվ գու քուց. առանց այլի-վայլի չինօվ-
նիկ պիտի ըլի, կ'օսէ: Քու սիրտը քու ախշկայ համա
կի չէ ցաւում, փառասիրութենի համա է ցաւում:

ՍԱԼՕՄԷ

Արա ինչ խօսիմ քի մօզ, նրանք միւր լնյիզ ին.
սվ ին նրանք, սմ վուրթիք ին:

ՕՍԷՓ, տեղից վեր կենալով:

Տօ, դուն սիլ իս, դուն... դուն սում վուրթի իս, դուն սում կնխնին իս. էրէկէ-Խանի չամօմալլօրէն իս, թէ՛ Պարնի հարսը:

ՍԱԼՕՄԷ, նմանապէս կանգնելով:

Ի՞նչ է ասում, քս. դուն մինձ մարթու վուրթի իս ինձ վրայ:

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԽԱԽՕ

ԽԱԽՕ, մտնում է ձախ դռնից:

Էս ի՞նչ խարրհերումն իր, քս:

ՕՍԷՓ

Օ՛հ, մամիդա, դուն իս:

ԽԱԽՕ

Ճէնց ՚ես իմ, գլխովս ու վուտովս. վո՞նց իս, վուրթի:

ՕՍԷՓ

Փառք Աստծու. դուն վո՞նց իս, մամիդա:

ԽԱԽՕ

Ի՛հ, վաշանշալէր, վուրթի, էլի: Ամա էս ի՞նչ բաներումն իր, ձիր ձէնը քուչէն է գնում:

ՍԱԼՕՄԷ

Վունչիչ. չի՞ն գիցի մարթու կնգայ բանը՝, բանօնօ:

ԽԱԽՕ

Էնդադա տարի քիզ ումրը, վուրթի՝ «Յօլ դա

քմրիս չխուրի բէգվէն կացս գաղրա էգօնա»,*) կ'օսէ: Ամա ձիզ էլ ի՞նչ էլաւ, վուրթիք. էսդադա տարի է մարթ ու կնիկ իր, մէկմէկու խասիաթը չիմացմը:

ՕՍԷՓ

Նսալի, նսալի, մամիդա... (ախօն, բօշերը թողնելով ներքեւ, բարձրանում է տախտի վրայ): Դուն է՛ն ասա. մէ լուծ ՚եղումը մէկը վուր գէսը քաշէ ու մէկէլը դէնը, սէլն առաչ կ'էհմայ:

ԽԱԽՕ, ծալապատիկ նստելով:

Էնէնց կու վազի, վունցօր վուր ՚ես հիմի... Ի՞նչը կու ժած տայ ինձ հիմի էսդանցէն:

ՕՍԷՓ

Չէ վուր է մէկմէկու պիտի օտկին. թէ չէ մէկն ինչ գ'ուգէ դօշաղ ըլի, մէկէլը թէ հիզը չէկաւ, իր էգնէն մնալով համ իր գլուխը կու խիխտէ, համ դօշաղինը:

ՍԱԼՕՄԷ

Ղօշաղը դուն իս ու դամբլէն ՚ես իմ, էլի՛:

ՕՍԷՓ

Մնւլալի մէ, քու հօրն օղօրմի:

ԽԱԽՕ, Սալօմէին:

Ի՛ի, անդադա է ասում միթամ, վուրթի, քու դամբլութինն սի կանայ ասի:

ՕՍԷՓ, նստելով:

Ախար հագար-հագար թուճնանուց աիդիրն է ձքվում, դուն ինձ ասա՝ միր բան է՛:

ՍԱԼՕՄԷ

Ութ հարուրը հագար է՛:

ԷՍ - ԷՏԷԷ

*) Վրացերէնէ կ:—Ամուսինների վէճը յիմարը ապահարգան էր կարծում:

ՕՍԷՓ

Երկուսը մէ զահրումար է ինձ համա, բաս ինչ է:
ՍԱՆՕՄԷ

Ինչսը վուր է, ինձ համա խօ շիմ ուզում. էլի քու
ախշկայ համա իմ ասում:

Խոսված նստում է բազմոցի վրայ:

ՕՍԷՓ

Տօ, ախշկայ համա վուր ասում իս, չէ՞ վուր է
չափս ու ձիւ կայ: Ախար Երկուսն էլ ուրիշ ին մին-
ձանում. իժում նրանցն ինչ իս տալի:

ԽԱԽՕ

Օսէփ, վուրթի՛ր, ինչի՞ իս սատանի ձիւ վրայ
նստի:

ՕՍԷՓ

Սատանի ձիւ վրայ 'ես կի շիմ նստի, դուք իք
նստի. քշում իք ու էլ ինձ յիդ շիք մտիկ անում:

ԽԱԽՕ

Նո՛ւր իս սկուպօացի, Օսէփ. թումներով վուր շա-
բաշնիրը կու բախշէիր սազանդերուն, էնչանն էիր
դայրաթ արի՛:

ՕՍԷՓ

Էն վուխարը գնանց, մամիդա, ուզանքուրիսակէն.
Էնչախը կանէի, հիմի էլ շիմ կանացի. առուտուրը
կանգնեցաւ, բանս լաւ չէ գնում, մամիդա:

ԽԱԽՕ

Քու գուշմնի բանը գնայ փիս, վուրթի՛ր, քու բանը
փիս վճնց կ'էհայ:

ՕՍԷՓ, առանձին:

Արի ու հիմի սրանց առշիւրը դաւթըրնիրդ բնց

արա: (Բարձր): Գիդիս ինչ է, մամիդա, 'ես կարա-
կան խօսիլը կու սիրիմ. էն տղին հանում իք, ո՞ւ-
զում իք, իմ ախշկան դուք է գալի, 'ես էլ մէ էն
հանգի վուշիչ շունիմ փուարը գնելու: Գնացէք, թէ
բանը գլուխ գու քայ, մէ վից հարուր թուման կու
տամ, շինեցէք, թո՛ղ ջանս դուս գայ. ամա, մամիդան,
լաւ գիդացի՛ վիրշի խօսիկն է, դանարէս վուր քաշ
անին, էլ մէ գրօշ շիմ աւելցնի:

ԽԱԽՕ

Բն գագէմարթա քիդ, Օսէփ. վիցը վուր տալիս
իս, մէ խոսն ու հարուր թումնի համա խօ շիս մօշ-
լա անի բանը:

ՕՍԷՓ

Գիդիս ինչ է, մամիդա՛, 'երգնուց վուր ձէն գայ
վիրշի խօսիկ էր. մէ գրօշն ինչ է, մէ գրօշը, թէ-
գուդ կաշիս սլօկիք, էլ շիմ կանա:

Վեր է կենում:

ԽԱԽՕ

Մի չարանա, վուրթի՛ր ջան, կու՛րի վից հարուրով
գլուխ է գալի, ահանինք ջեր:

ՕՍԷՓ

Հն, էա է, էա:

ՍԱՆՕՄԷ

Վից հարուր թումնի մօդ էլ հարուրն ու Երկու
հարուրն ինչ յիշելու է, վուր անմիդ սիրտդ շուս իս
բերում:

ՕՍԷՓ, նեղանալով:

Կնգգերանց ձեռնէմէն Աստուձ ազատէ: Ախար
ասած է, վուր մէ կնիկարմատ Երկու տղամարթու

կու արտէ, 'ես կի մենակ էրկուսիս ճանգն իմ ննդի:
Վճարդանց վուրդի լուս ննգաւ էն անիծածը: Է'ս
դուս էկաւ էլի նրա վիղիաներէմէն... Մէ տէր հար-
ցնող ըլի, թէ նա սիվ, մինը սիվ. (Սալօմէինս) արայէր
չէ բունն ու բիձու աղայ. ինչ բան ունէ, ինչ, վուր
վիղիանիք է ման դալի էսաի. Չեր աւասա 'երիք Չեր
է էլի... էլ նրա հսւար շըլի էսաի:

ԽԱԽՕ

Հանգստացի, վուրթի, ինչ իս շարանում:

ՕՍԷՓ

Է'հ, մամիդա, դուն էլ չիս գա, չիս գա, ու հէնց
էսոր վճարդի էկար:

ԽԱԽՕ

Թէ իմ գալու վրայ խիստ իս նիդանում, վուրթի,
ձիր սարգըփումը լաւ սառը ջուր կայ:

ՕՍԷՓ

Տօ, արար մարթ իմ, գլխիս զգակ ունիմ, ստում
իմ վուր չիմ կանա, չիք աւասում:

ԽԱԽՕ

Ատում ինք, աւտում, վուրթի. ամա միր ասիլն
էն է, վուր արչկայ բաժինքը ուրիշ բան է. չիս զի-
զի վուր ուրիշ բան է: Տուն առնիլ խօ չէ, վուր մարթ՝
իր ջիրին մտիկ անէ: Էս բանումը, վուրթի, մարթ
էլ վունց ջիրին պիտի հարցնի, վունց զանդկին:
Քարբանջէլա Եագօրին խօ կու ճանչնէիր. վիրչի
անիրը արչկայ բաժնիքի համա ծախից ու իժում
ախկաա դադօ ապրեցաւ. վուր մեուա, թաղմէլա
չունէր, Ատում գիղենայ, խօ դուն էլ լաւ գիղիս:
Դուն նրա վրայ փիս մարթ իս, դուն նրա վրայ

խիղճ իս, վուր մէ էրկու հարուր թումնի համա խօ-
սում իս:

ՕՍԷՓ

Ա'խ, Ատում, էս ինչ պատիժ է թէ անչիկ մին-
ձացու, վրէն էնդագա փուղ միսէ, սուում աու ու
վիրչը մէ Չվալ էլ փուղ բարցէ շիրին, վուր էդէրա
օմրին ձեուր բունէ ու էնէնց տանէ... Փո՛ւ, միր նա-
մուսին:

ԽԱԽՕ

Ի'նչ անիս, վուրթի, միր հուուց ծէդ ու աղաթ
է, պիտի կատարինք. վա՛յ միր տիրուշ միխկը:

ՍԱԼՕՄԷ

Աշխրբի ծէսն ու աղաթը դուն խօ շիս կանա
բանդի:

ՕՍԷՓ

Չիր ծէսին էլ Ատում խոսով կենայ, ձիր աղա-
թին էլ: Տօ, թէ էտէնց դայիմ կանգնած իք ծէս
ու աղաթի վրայ, ամեն բանումն էլ էտէնց դայիմ
ըլիք, ամեն բանումն էլ ծէս ու աղաթ միար բերիք:
Ծէս ու աղաթ է, վուր ծուղի ու քօշի մագիէր բա-
տինկա իք հարնում ու աղամարթու կրնդնիրն էլ
տակը կոցնում: Ծէս ու աղաթ է, վուր արչիկը
իրաուրիմէն էլ կու բաշվեր ու հիմի եսդ աղի հիդ
կուրը կուանը զցած քօլթա է տալի: Վճարն է, վճարը
միր ծէսը՝ սպրիլը, սուրիլը, սունը, արիլը, հարուսար,
բայիրը, վէշերնիրը. վճարդի էր էստունք, էստունցն
էլ կ'օսիս թէ հին ծէս ու աղաթ է: Ա'նում ինք էս-
տունք, մօղնի ինք ժած գալի՛. սօ, թո՛ղ ամեն բանն
էլ մօղնի ըլի, է: էլ տասը ձեուր գողէնքն ինչ է, էլ
ծալքն ու թոնդիրն ինչ է, քէշն ու մափրաշն ինչ

է, ծնողդնի մօղ ամսներով կենալն ի՛նչ է, հարսնըբու-
մը հարուր հոքի մեծրիլն ի՛նչ է, քէլէլն ու շուրս
քսան կնիկարմատի սուք ու շիվանն ի՛նչ է, վուր
բայդուշի պէս դուռում ին. ի՛նչ է, ի՛նչ էստունը...
(Յոյց տալով տախտը:) Թէ էն ինք, (Տանելով ձեռքերը
տախտից դէպի բաղձոցը եւ ընդհակառակը:) էս ի՛նչ է,
ու թէ էս ինք, էն ի՛նչ է. էրկուսին մէտի դիմնալ
կու՛լի... (Գազար:) Միւր ապրելու ու կինքի օրինա-
կը միւր կնոզերանց հարսւտան է, վուր վուռէմէն
ինչըու բօղազը Փռանդստնու է ու (Ձեռքը ճակատին
խփելով:) դուրսը կի էլի էն է մնացի:

Լուռութիւն:

ՍԱԼՕՄէ, վեր կենալով տեղից:

Լաւ է, լաւ, մի շարանա, վիցը խօ տանիս իս, խօ
անիլ իս. ինչ կու պակտի, մնացածն էլ 'ես կու տամ:

ՕՍէՓ

Վնւրդանց կու տաս վուր կու տաս, քու հօր
բաժընքէմէն, դանա շիմ գիդի

ՍԱԼՕՄէ

Բաժինք շիմ ունեցի, ի՛նչ իս էտու համա քիքս
դալի. ամա ինչ ունիմ ու շունիմ կու ծախծխիմ,
դրաւ կու դնիմ, բաթիբիս բափթէն մօշլա կ'օնիմ,
օսկէ կօճկնիրը կու հալիլ տամ, դօշիս փօրմիալէն
կու մօշլա անիլ տամ, ախիրը ետքա կու ծախիլ
տամ, տատէրկու շաղա մարքրիտը ետքա, թէ ճակ-
տիս քորցնիրը պէտկ էկաւ, էն էլ շիմ խնահի, թնոյ
դիսի մէտի նատօի շարը տանէ, նրա շարի փուխ ըլի,
դուրխս էլ նրա շարի փուխ կ'օնիմ ու էն տղին ձեռ-
նէս շիմ թողնի:

Շտապով դուրս է գնում ձախ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Է

ՕՍէՓ, ԽԱԽՕ

ՕՍէՓ

էս թամաշէն աեսոր, մամիգա՛. արա օրէնք է,
քիզ իմ հարցնում:

ԽԱԽՕ

Ի՛հ, արա ի՛նչ այնումը գցելու է, վուրթի:

ՕՍէՓ

Սարի էժ է՛ անիծածը. արա հախը չէ՛՞ գնամ
քինթ ու պուռնիքը շարթիմ:

ԽԱԽՕ

Հիմի էտունք տաս, էսդաղա տարի է մէ՛ ծկիւարտ
չիտ խփի, հիմի նսւր շար, նսւր բարի: Սնոգ էլ գու
բայ քու ասլութենին:

ՕՍէՓ

է՛, մամիգա, գահէս դնացիլ է, տտում իմ, Աս-
տուձ գիդենայ. էն 'ես իմ, վուր համփիրում իմ,
թէ չէ ուրիշը վուր էլիլ էր իմ տիզ, հարուր ջէր կու
բաժնվէր ինչըու հիմի: (Նստում է:) Ախար սւմ վրայ
ինչ տեսնում է, սւմ տանն ինչ տեսնում է, թէ էն
տահաթին շառաւ ու շարքից, իրն իրան է հասնում.
մայմունի ջինս է անիծածը: Է՛՞ սէնց էլ բան կու՛լի:

ԽԱԽՕ

Դիփունանց կնոզիբըն էսէնց ին, վուրթի, դուն
սւր իս էտու համա նիղանում:

ՕՍԷՓ

Է՛նչ, բան իք շինի ձիգ համա՝ դիփուները, դիփուները: Տօ՛, դիփուները գլուխը քարն ին տալի, 'ես էլ քարը տանմ. 'ես ասում իմ՝ ինչ ինձ կու սաղ գայ, էնէնց ժաժ գայ:

ԽԱԽՕ

Ի՛նչ, Օսէփ, վուրթի, ինչի՛ր իս ասում, նէտայի դիգնում: Էս սաաթիս վուր էստի դալիս էի, մէ փէշարբի կնիկ իմ տեսի, փրփրալի գնում էր, վուր թափաղի կնիկը վիս էկադրէրա: Ետամանի դլասէն հարին, սիւ շարարա պլատօկը վրէն, (Շրթունքները սեղմելով:) կսիտա փէրչակնիլը դլած, աալասէ դօնտիկը՝ ձեռին, գնում էր, գնում էր, վուր խիլքիս ծէրը հիզը գնաց: 'Երիք արչին էլ կուզին՝ շէփ ին ասում, ինչ գահրումար ին ասում, թրևում էր էգնէն: Սրախ ծէրը մխտաց, քու արիւր, վուր էն արմազան գէրիէն գէգնին էնէնց թաւիլ-թաւիլ էր գալի ու ինչ ասիս հիզը տանում էր՝ շալա, փալաս, խուզ, գնում էր ու հիզը սրօտրօն սրփում էր. էրնէկ դիգնում էլ ցխի փօղրաթշիկին փուզ սւր ին տալի: Քու արիւր, վուրթի, խէլի ժամանակ կանգնեցայ ու էլ աձկս շկանացի հիւացրիլ էի. ասի՝ փա՛ւք Քիզ, Ատուձ, էս ինչ բարգուլթին իս դրգի միք գլխին, վուր էլ մինձ ու սրտիկ շէ ջողփում: Աբո՛, վուրթի, փէշարբի կնիկը վուր էսէնց է դուս գալի, մէկէլներու վրայ էլ մարթ ինչ ասէ:

ՕՍԷՓ

Տօ, 'ես էլ էա իմ ասում ախար, է՛, իմ ասածն էլ էտի է դալի, է՛: Ի՛նչ է՝ շինովնիկ է լուս ննդի,

կ'օսէ, ու ուրիշնիլը ախշիկ ին տալի, կ'օսէ, գլուխը սղոցում է, վուր դիփուներից առաջը կարէ:

ԽԱԽՕ

Դուն էլ ույնավուր իս, բո՛. էնդագա փուզ իս մխտի վրէն, օրինաուր ուսում իս տալի, մօզնի մինձացրիլ իս, պօրտուալիանի ածիլ իս սորվեցրի, ախար մէ փէրը արա, է՛...

ՕՍԷՓ

Ա՛յ, վու՛շ էր էլի էն ուսումը, հըա՛: Ի՛նչ կ'օնիմ էն ուսումը, թէ ինձ պիտի նիղացնի: Էս ինչ ուսում է, վոնրդանցի ուսում է. միզ էս հանգի ուսում կու սաղ գէր... Ա՛խ, սիս, իմ գրանիցա: (Խփում է ծնկանը:) Ա՛յ ուսում, սի լուսաուրուլթին. ամեն մարթ իք շափս ու ձիւր դիգէ, իք կարսուլթենի զօրա ժաժ գալի. վունցոր աշխատում է, էնէնց էլ մխտում է... Վոնրգի է, վոնրգի էն ուսումն ու լուսաուրուլթինը՝ հանգիտա ապրիլ էինք միզ համա... (Չախը փոխելով:) Էլի հինը լու էր, 'ես ու իմ հարին, էս կարք ու սարբի վրայ: Մամա-պապէուլ վունցոր ապրիլ ինք, էնէնց միք շոււմը պիտի մնացիլ էինք, վուր մարթ մէ թիքա համով հաց էր կերի: Հիմի էս ինչ է, էս ինչ բանիք է, էս ապրելուն թանաշա իս անում. էլ վոնրգի է էն համով հացը, դիփ հաղու ու դարբշխանա ինք ուտում... 'Ե՛ս սի, գալէն ու դատաինէն սի, պօփարն ու լարիէն սի, Լօնդօնի շուգունի պլատէն սի, պաղիեզն ու լամպէրն սի: Էս գաղին ախար կտան պիտի վուր դիմնայ թէ շէ:

ԽԱԽՕ

Չէիր ուզում՝ շէիր սարբի, սի ինչ անէ:

ՕՍԷՓ

Նոս իմ սարքի, ես. այ, սարքողի վրդը կտարե
 Աստուծ: Նս կի շիմ սարքի, իրան-իրան սարքվիցու:
 Վսնց էլաւ, Նս ինքս էլ շիմ գիգի. տմա հին ապ-
 րիւս ու հիմիկվան ապրիւս վուր մէկս մէկու վրայ
 շափում իմ, վսւրդի էր քսան տարի առաջ էստունք.
 կ'օսիս մինիստար քլիմ: (Տեղից վեր է կենում.) Գիփունքս
 էսէնց, դիփունքը, դիփ մէ բարաթ ինք. սւմ դուռը
 բաց անիս, սւմ տուն տուն գնաս, դիփունանց տանը
 էլի էս դանգ ու դվալը. ախար էստունցը դիմնալ
 գ'սւղէ թէ չէ: Հագար թումնի գէլուրի տէրը անում
 է էստունք, իրան հալալ, ախպէր. աօ, հւրուր թումնի
 տէրն էլ վուր չէ ջողվում նրամէն, էլ խալին ինչ
 սորվի միգմէն, ինչ օրինակ ինք նրանց համա: Հայիփ
 չէր վաղուցվան ժամանակը, մէ դարբըսումը մէտի
 ապրում էի'նք, երիք-շուրս ախպէր օղլուշաղով մէտի
 էինք կենում. նրանց ճրաքն ու մումն էլ բարաքա
 ունէր, գործի ու փէտն էլ բարաքա ունէր, Ասաձու
 աճկն էլ վրէն էր. հիմի կի մէ ախպէր վուր հինգ
 թուման է մխտում, մէկէլը նրա ջգրու ուզում է տասը
 փչացնի, վուր ինչ է, նրամէն վէր չգայ... էլ վսւրդի
 կայ ախպէր. ինչ ախպէր, ինչ քուր, ինչ հէր, ինչ
 մէր. ջնջլով էլ վուր ուզենայ մարթ, չի կանա դիփու-
 նանցը մէտի մէ շափաթ մօղ արած պահի. էս Ասաձու
 բարգութին չէ, բաս ինչ է:

ԽԱՆԹ

Իհ, Օսէփ ջան, հին դարդիրս մի աշլա անի:
 Չարփայի տախտը դրած կուլէր ու էրգէն ու մէկ
 խալին վրէն գցած կուլէր: Կու մթնանէր, լօնդի մաշ-

խալէն մէշաիդը կու վառէինք ու փարփնի պէս էրե-
 խէրը բոլորը պատուս գու քէինք. միւր լամպէն էլ էն
 էր, միւր ճագն էլ: Իժում տախտի վրայ մէ ծէրէմէն
 ինչքու մէկէլը մալի դաջած սուփրէն գաշլա կ'օնէինք
 ու աշխրքի լաւութինը վրէն կու դարսէինք: Կու նըս-
 տէինք բոլորը ժվժվալի՝ պապէն, մամէն, բիձէն,
 դէգէն, ձալօէրը, ախպրախքս, քվիւրախքս. մեղվինէն
 գինին կու գշգշեցնէր ու հագարփէշէն մէ ծէրէմէն
 մէկէլն էր անց կենում: Քսան հօրի աւել կուլէինք
 էն դրգեալ դարբըսումը. հիմի կի հինգ հարի վուր մէ
 օթախումը մօղ ին քլում, շունչը կրկնում է մար-
 թունը: (Չեքը բարձրացնելով:) Պօլօղակի ծակ ու-
 նէինք, վուր քսանուհինգ ախօշկէք ածէր. կու լուսա-
 նէր, 'երգնքի լուսն էնդանց էր դէվէր գալի, ու կու
 մթնանէր՝ աստղերու պապուցն էլ էնդանց: Իժում
 դիփունանց աիգիըը մէտի կու գցէին, քու արիփն,
 ու ծուլի-ծուլի կու խաղէինք. թէ լուսնիակ էլ կուլէր,
 լսօ դիփունանցս մէտի լուս կու տէր... Պղինձն ու
 շամփուրը տանը, շամշէն ու քափկիըը կշաին, մնա-
 ցածը աղլուխ-աղլուխ տուն էին բերում աղամարթի-
 քը մէկմէկու վրայ լաւը դիփ, քու արիւր: Եփոդն էլ
 մինք էինք ու շինսոյն էլ. հիմի կի լաւ թիքէրը պօ-
 վարն ու լարիէքն ին ուսում. կրի մ նրանց դածումալա
 արած գլուխը, հըս... Միւր տունը գաղարն ու կար-
 տօփիը քանդից, վուրթի:

ՕՍԷՓ

Ինչս ասում, ինչ, մամիդա, տաս տարի չի քաշի,
 Աստուծ գիղեհնայ, վուղչ քաղաքը կուար կու ննգնի.
 Թանգութինն ու մօղէրը մէ կուար, միւր յիմարու-

Թի՛նն ու աղաթի՛րը մէկէլը: Էսէնց անորիլ կու՛լի
ախա՛ր. մէ ցաւ է, էկիլ է միւր գլխին, էլի: Աստուծ
դիզե՛նա, մամիդա, ամսէնը մէ Թուման մենակ սու-
խարու ու դգօրնի բուլիու իմ տալի էրեխանց համա:

ԽԱԽԾ

Դուն էլ պակսեցրու, վուրթի, ինչ է...

ՕՍԷՓ

Ի՛նչ հիշա-հիշա ասում ի՛նչ՝ պակսեցրու. անի պակ-
սեցրու, տեսնիմ վննց իս պակսեցնում: Տօ, էն օրը
հարմունկումը՝ երիք արասի սովի էրեխի համա բա-
տինկէք առայ. էսդանց էնդի շարտից, անց. էրկուս
ու տաս շահնուց պիտի ըլի, կ'օսէ. էն վից տարեկան
(Ձեռքով ցոյց է տալիս երեխայի հասակը:) էրեխէն, անց.
լացու արարեցաւ կինագամ: Չէի գնացի, չէի առի.
էս էնչախը կու՛լէր, վուր գիտունքս մէ էրես էինք
կապի: Պակսեցու, *) կ'օսէ. սի կանայ պակսեցնի:
Քսան տարի է կինքի հիդ կուի իմ տալի ու վունցօր
մէ լաւ լիդնուրթ՝ Քսումը ննգած շատ լիդ տալէմէն
կունիքը գաթիլ ըլի ու դուս դալու ճամփա էլ չըլի
գլթնում, ննդիլ իմ գոչգոչանէքն ու, էսօր է թէ էքուց,
դլուխս նա քարի վրայ կու վշրվի, նա բըջի վրայ...
Տօ, պակսեցնիլ չէ, վուր ասում իմ թէ իմ բանը չէ՛,
ամա սումը կու հասկացնիս. անի պակսեցրու:

Նախասնենակի աջ կողմից մտնում է Նատօն՝ ձեռ-
քին չորս օրինակ նոտայի տետրակներով:

*) Պակսեցրու — պակսեցնու. երկուսն էլ ուղիղ են Թիֆլիզի
բարբառում: Այսպէս ասում են՝ մինձացրու — մինձացնու, աւել-
ցրու — աւելցնու, կայն:

Տ Ե Ս Ի Լ Ը

ՆՐԱՆՔ, ՆԱՏՕ

ՕՍԷՓ, շարունակելով:

Ա՛յ, պակսեցու:

ԽԱԽԾ

էս ինչ չուսա էկար, վուրթի:

ՆԱՏՕ

Էստի մօղիկ էի, մամիդա ջան:

Հովանոցն ու վերարկուն գնում է աթոռի վրայ:

ԽԱԽԾ

Մեռնի մամիդէն պէտլած ջանիս, էս ինչիք է,
վուրթի:

ՆԱՏՕ

Թաղա նօտիք առայ ինձ համա:

ՕՍԷՓ, առաջ դալով:

Պակսեցու... (Առնելով մի տետրակ Նատօյից:) Ի՛նչ
ավիւր էստուրը:

ՆԱՏՕ, շուարուած:

Չուրս արասի:

ՕՍԷՓ, առնելով երկրորդ տետրակը:

էստուրը:

ՆԱՏՕ, նայելով տետրակի երեսին:

էստուրը վից արասի:

ՕՍԷՓ, առնելով երրորդ տետրակը:

է՞ս:

ՆԱՏՕ, վրդովուած:

էս էլ մանէթ ու կէս:

ՕՍէՓ, առնելով վերջին տետրակը:

է՞ս էլ մանէթ ու կէս, էլի:

ՆԱՏՕ, դողալով:

Չէ... պտպաշա, էս էրկուս ու տաս շայի:

ՕՍէՓ, տարանալով:

Պակսեցու, անի պակսեցու. մէ աէր հարցնող բլի թէ ինչ իմ բան է: Չուրսը մէտի վուր չէրք առի, մէկը հերիք չէր, էրկուսը հերիք չէր:

ՆԱՏՕ, վախեցած:

Վուր հարկաւոր է, պապաշա:

ՕՍէՓ, աւելի ու աւելի տարանալով:

Արն, ասում իս, մամիդա. ինչը օխտա գու քայ, ինչ: էրանի մէ գրուտ ածիլ մայինց զիզենայ. մէ էրկու իմքին կու թխթխկեցնէ, պօրաուպիան ածիլ զիզիմ, կ'օսէ: Ածիլը 'ես չիմ զիզի, ամա ածողիլը տեսիլ իմ. ա՛յ, նրանցը սագ գուքա էստունք, թէ չէ ինչ իմ բան է. սրա մօղա գցողին էլ ինչ ասիմ: (Բարկացած դէն է ածում տետրակները:) 'ես ձեռքս կու կարիմ թէ սա գրուտ ածիլ կու զիզենայ:

Նատօն մնում է ապշած:

ԽԱԽՕ

Ի՛ի, լաւ է դուն էլ:

ՕՍէՓ, շարունակելով:

Կիսատ, զիվի կիսատ. ածիլն էլ կիսատ, սորվիլն էլ կիսատ, ուսումն էլ կիսատ, խօսիլն էլ կիսատ: Ի՞նչ զիզէ, ի՞նչ. կանայ մէ օրինաւոր իմքին կարի, կանայ իր զէրիէն ձեւի. մէքաշ Փռանգսանու արշկի-

բանց հիզ շգայ: Հինգ ջէր Աւայիլս իմ էլի, վերջի արկտի արշիկը սրա վրայ շատ բան զիզէ. ձեռի պաղունց իմ տեսի նրանցը, վուր բերանս բաց մնացիլ է: Կանայ գրուտ հայերէն խօսի, վուր իր հաւար լիզուն է, կանայ գրուտ մէ էրես բան զիբ գրի, կանայ տասը խօսկ վրանցուցէվար վրայ ու վրայ սոսի, վուր է՛նդաղա փուղ է նօտի: Ինչանցու է, ինչանցու սա, քիզ իմ հարցնում. մէքաշ էքուց տանդիկնութիւն շանէ սա... Ի՞նչ տանդիկիւն... հայի՛ փ աղայ, 'ես ու իմ հոքին, վուր սրա մարթ պիտի դառնայ. սո՛ պիտի նրա հիզ լուծ քաշէ, էքուց էլօր պիտի մէր դառնայ ու սո՛ էրեխէքը մինձացնէ. ա՛յ լուով կենայ ինձ սրա մինձացածը: Սրան հազիր հազարաքաշի մօղ արած փուղ պիտի բլի, վուր տիկնի պէս գուքիս ու գուքած ման ածիս, բալիլ ու վէշէր-նիլր տանիս. ինչանցու է սա, ինչանցու...

Նատօն լաց է լինում

ԽԱԽՕ

Օ՛սէփ, Օսէփ, վճարի՛:

ՕՍէՓ, շարունակելով:

Կանամ էստունցը ախտի, կանամ սրանց օխտէ-մէն գա՛: Պակսեցու, կ'օսէ. (Բռնելով Նատօի տիւնիկի ծայրերը:) էս ինչ է, էս տասէրկու էտաթ բանն ինչ է, մէճկը տարցնում է. էս վո՛ւնց պակսեցնիմ. պա-տըւտիմ, էստով քնիթան կուլի բանը՛. զիփուները կու պառուտի՛ն, սիվ է հիզս պատուտում տեսնիմ:

Նատօն շարունակում է լալ:

ԽԱԽՕ

Իմ գալուն էլի մնում, թէ ինչ է. թէ կ'օսէ զի-

փունքն ինչ գ'ուղէ անին. էլ ինչին իս մնում. խիղճ
ախշկայ սիրտը շուռ բերիր անմիղ, անգէթ:

Կուռ տեսարան:

ՕՍէՓ, ձեռքը տանելով դէպի ճակատը եւ ուշքի գալով:

Ա՛խ, Աստուձ, Աստուձ, էս ինչ իմ անում. խիղճ
խառնակեցաւ: (Մտտենալով Նատօին): Գնն չէ, գնն չէ,
Նատօ ջան, (Գրկում է:): Քիղ չիմ ասում, քիղ չէ, դուն
միղ շունիս, մինք ինք միղաւուրը, 'ես իմ միղաւուրը,
'ես՝ վուր աշխրթին մտիկ տալով, ինչ աշխրթին սաղ
գու քէր, էս ճամփի վրայ կանգնեցրի քիղ: Մի լաց
ըլի, մի. անմիղ շարացայ, ջգրած էի, աշխրթի ջրգը
քի վրայ հանեցի: (Հաւարում է տետրակները եւ տալիս
է Նատօին): Բանէ, վուրթի, (Նորից գրկում է:): գնն,
էլի առ, ինչ քէփոց տայ, էն արա, օշովիմէն մի գրնը-
վի. վունչինչ չէ պակսի քիղ ինչրու էսօր, Աստուձ
տայ էնդպա փուղ ըլի քիղ համա, վուր ինչրու վիրչն
էլի վունչինչ չպակսի:

Համբուրում է եւ ուզում է գնալ:

ԽԱԽՕ

Բարէմց մէ իմքին էլ աւելցու, Օսէփ, ու քն-
թահ արա:

ՕՍէՓ

Վուր գլխամեռ չի ուղի, ամա ինչ չիմ կանա,
չիմ կանա:

Գուրս է գնում աջ դռնից:



Տ Ե Ս Ի Լ Թ

ՆԱՏՕ, ԽԱԽՕ, յետոյ ՍԱԼՕՄԷ:

ՆԱՏՕ, տետրակները վայր է ածում տախտի վրայ եւ հե-
կեկալով ընկնում Խախօի դիրկը:

Ա՛խ, մամիգա ջան:

ԽԱԽՕ

Մեռնի մամիգէն քիղ համա... Սնւ, լաւ. քու հէքն
է, ինչ անինք... Հերիք արա, հերիք, վուրթի:

ՍԱԼՕՄԷ, ուրախ-ուրախ դուրս գալով ձախ դռնից:

Բնատօնօ ջան, ընտօնօ, պրծայ, քնթահ արի
բանը: (Յանկարծ կանգ է առնում): էս ինչ խարար է.
ինչի է լաց ըլում:

Նատօն աչքերը սրբելով գնում է դէպի բազմոցը:

ԽԱԽՕ

Վունչիչ, իս կու ճանչնաս սրա մամին, խօսե-
ցաւ, էլի, ու լացըցրուց:

ՍԱԼՕՄԷ

Թէ մամէն լացըցրուց, գէգէն կու ուրախացնէ.
քիղ նչնեցի, Նատօ ջան: (Նատօն զարմացած նայում
է:): Գնն ու գնա. ինչ սիրտդ ուզում էր, Աստուձ էլ
կատարից... Ալէքսանդր Պետրովիչ Մարմարովին ինչ
կ'օսիս:

ՆԱՏՕ

Ղնւրթ, մամաշա ջան:

ԽԱԽՕ, միեւնոյն ժամանակ:

Ղնւրթ իս ասում, քն:

ՍԱԼՕՄԷ, Նատոին:

Քու արիւր, քն:

ՆԱՏՕ, ընկնելով Սարժի գիրկը:

Ախ, մամաշա ջան:

ՍԱԼՕՄԷ, փաթածուելով եւ համբուրելով:

Ձիւ մէ պրծայ քու դարդէմէն. ուրախութենի ըլի, վուրթի: Գնն, շուտ ջնրբիդ հարի, էս սաաթիս գու քայ էն աղէն:

ՆԱՏՕ

էս սաաթիս:

ՍԱԼՕՄԷ

Տէնց էս սահաթիս. դուն գիղիս վունցոր կու սի-
րունանաս:

ՆԱՏՕ, չափից դուրս ուրախ եւ շուտ-շուտ:

Սիպտա բարէժը, մաւի բանար, սիւ բարխըանի լէտի վրայ պտաի խաշն ու մաւի լէնտով կօափիւր: (Գրկոււմ է Նատոին:) Մնմիդա ջան...

ԽԱԽՕ, փաթածուելով եւ համբուրելով:

Բարի սահաթի ըլի, շարդ տանէ մամիդէն:

ՆԱՏՕ, նորից գրկելով մօրը եւ համբուրելով նրան:

Գուշկա մամաշա... դարադայա մամաշա ջան...

Գուրս է վազում ձախ դռնից, տանելով հետը հո-
վանոցը, վերարկուն եւ տետրակները:

Տ Ե Ս Ի Լ Ժ

ՍԱԼՕՄԷ, ԽԱԽՕ

ԽԱԽՕ, աջ ձեռքը տանելով դէպի բերանը:

էս էրազ է թէ ինչ խարար է, չիմ գիղի:

ՍԱԼՕՄԷ

Էրազը վնւրն է, բատօնօ ջան, նրա քուր Նամի-
րին էս սաաթիս դուս գնաց էսդանց ու հինգ նմուտ
չի բաշի էն աղէն գու քայ. էստի էլէտ ին կենում:
ԽԱԽՕ

Ախար թէ էտէնց հիշտ բան էր, էն կու ու դա-
մադայն էլ ինչ էր, քն:

ՍԱԼՕՄԷ, կիսածայն:

Ինչս ասում, բատօնօ ջան, քարգուրձ անելու իմ.
օխար հարուր թումնով կարական արի ու մէ քսան
թուման էլ իրան Նամիերուն խոտացայ:
ԽԱԽՕ

Վոյ, քուանամ էս, առանց Օսէիին:

ՍԱԼՕՄԷ, կիսածայն:

Գանակով խօ չի մորթի ու, ինչ գուղէ ասէ,
ինչ անիմ: Վիկաց, վիկաց, բատօնօ ջան, գնանք էն
օթախը: (Վեր է կացնում:) Օսէիը չիմանայ:

Ուրախ-ուրախ դուրս է վազում ձախ դռնից:

ԽԱԽՕ, քօշերը հագնելով:

Տէր Աստուձ, էս ինչ ին գառի հիմիկիման կնգիւրբը:

Գուրս է գնում նոյն դռնից:

Տ Ե Ս Ի Լ ԺԱ

ՕՍԷՓ, մնակ: Գօտին կապելով՝ գլխարկը ձեռքին դուրս է
գալիս աջ դռնից. սկզբում խորը մտածմունքի մէջ ընկղ-
մուած՝ ձեռքերով զանազան շարժուարձներ է անում:

Տնւ, տնւ... Վնւրդանց տամ, վուր ինչ սաաթիս իմ,

էն էլ դժարս գայլիս է... Ամա թէ կի առանց էն չէ ըլլում, ինչ իմ 'ես էլ էսէնց բար կարվի, 'ես' վար իմ վարթկերանց համա հորիս էլ չիմ խնահի... Չէ, չէ, թային տղէն էնդադա քէիումն չէ գայլի, թէ չէ վունցոր վիցն իմ ասում, մէ էրիումն էլ էնէնց կանամ ճարի... Հն, էս է, էս. տղէն էն չէ, ինչոր սիրաս ուզում է... Լար վար ըլի, էս ասուտուրը չէր սարքի գլխիս: Նրա լաութինը, նրա մարթութինը հիմի կու էրեվայ, հիմի... Տեննինը, տեսնինը հալա թէ ինչ է ըլլում: Խօսկս ինչրի էսօր վունչըչումը չիմ կտարի ջեր ու քանի էս բանումն էլ հաստատ ըլլիմ իմ խօսկին, խէրն էնդումն է:

Գնում է դէպի նախասենեակը:

Տ Ե Ս Ի Լ Ժ Բ

ԳէՎՕ, ՕՍԷՓ

ՕՍԷՓ, հանդիպելով Գէվօին՝ որ մտնում է նախասենեակի աջ կողմից:

Օ՛հ, Գէվօ ջան, ինչն է բերի քիզ: (Մեկնելով մեռոր:) Համեցէր, համեցէր:

ԳէՎՕ

Գիզիս, էլի, ինչու հարկաւոր բան չըլի, չէի գա: ՕՍԷՓ

Ի՞նչ կայ դուլուզիւմ. համեցէր նստի:

ԳէՎՕ, նստելով:

Է՛հ, դուլուզը վնւրն է, ինչ իս ասում. մարթուս

բանը էրադ է դրուսա, Աստուձ գիզինայ: Ախար էն անիծած Սանթուրովը...

ՕՍԷՓ, ընդհատելով խօսքը եւ վահեցած:

Հըս... ինչ է պատահի:

ԳէՎՕ

Աստուձ վնչ գիզէ նրա գլուխն ու արիւր:

ՕՍԷՓ

Ի՞նչ խարար է:

ԳէՎՕ

Էլ ինչ խարար պիտի ըլի, Օսէվի ջան. սուվրէն վիր է քաղում:

ՕՍԷՓ, շփոթուած եւ ձայնը ցածրացնելով:

Էս ինչս ասում, Գէվօ ջան, խօ հագով մարմնով բաթմիչ էլայ:

ԳէՎՕ

Բաթմիչ ըլի նրա գլուխն ու արիւր: Արի մարթու աւատա. նրա ապրիլը մարթ տեսնէ, կ'օսիս պրաֆ ըլի:

ՕՍԷՓ, ցածր ձայնով:

Էս խօ սպանեցիր ինձ, Գէվօ ջան:

ԳէՎՕ

'Երգնային Թարաւուրը պիտի նրան վաղ էր սպանի, վար էս բանը չէր արի: Սատանէն դիզէ նրա գլուխը. օմրին տուն էր գնում նրա մաղազինը՝ օրինաւոր, կարքով, սարքով, խօսկի աէր, վաղա ճանչնող. արի ու իմացի թէ տակն ինչ կայ:

ՕՍԷՓ, նոյնպէս:

Տօ, ախար 'ես հէնց նրա ումիկով էի, Գէվօ ջան, ինչի՛ր իս ասում. հագար թուման աւելի փուղ պար-

տէ իմը, էն պիտի առիլ էի, վուր տէրէ տէր էի
արի, է: Էքուց զրա վաղէն էր ու էյօր իմ վաղէն,
ախար, է. ինչ ջուղար տամ հիմի, ինչ. մտիմ վուր
Սանթուրովը չէրիտ ու ես էլ չիմ տալի՛ր, 'ես էլ
Սանթուրովի պէս կուար ննգնի՛մ: Վնյ, գեղինը վուր
մանիմ, էն լաւ չէ ինձ համմ:

ԳԷՎՕ

Այ, գեղինը մտնի նա, վուր աշխարք չէր էկի:
Մէ-էրկու հարուր ձեռաց ունիմ, Օսէփի, թէ գ'ուզիս
էքուց էլէա:

ՕՍԷՓ

Լան, լաւ, շնորհակալ կու'լիմ. ամա իժում ինչ
է ասում էն սիւ-էրեսը. չի'ս տեսի, չի'ս խօսի:

ԳԷՎՕ

Բաւ չի'մ տեսի. հէնց էս ստաթիս նրամէն չի'մ
զալի՛ր:

ՕՍԷՓ

Թէ ինչ, կ'օսէ. իմքին աւալիս է:

ԳԷՎՕ

Թէ նրա խօսկին աւատայ մարթ, էլի թէ իմքին
տալիս է, քիզ է տալի մենակ միթամ. ուրիշնիքն ինչ
գ'ուզէ անին, ասում է: Գէ, չնոտ արա, Օսէփ ջան,
քանի բանը չէ աշքարացի, էգէքա իմքին օտկիս:

ՕՍԷՓ

Աբի, աբի, Գէվօ ջան, թէ չէ աշխարքի դէնօ ու
մասխարա պիտի դառնամ:

ԳԷՎՕ

Փնւ նրա նամուսին:

Գուրս են դնում նախասենեակի աջ կողմից:

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ

ՍԱԼՕՄԷ, մենակ: Գուրս է գալիս ձախ դռնից:

Վնյ, քուտնամ 'ես, պտաի ճամկով է գալի: (Գուրս
է նայում լուսամտից:) Դիւիր էկաւ բալիօնը: (Առաջ
գալով:) Սիրտս ինչ դնողնգում է... Անգսկածի վնւրդի
նիղացաւ էս գէրիէս:

Գնում է գէպի նախասենեակը: Ալէքսանդրը կրեւ-
լով լուսամտից, ներս է մտնում նախասենեակի
ձախ կողմից:

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ

ՍԱԼՕՄԷ, ԱԼԷՔՍԱՆԴՐ

ՍԱԼՕՄԷ, նախասենեակի դռնքում:

Համեցէք, համեցէք, գէթադիւս: (Զեռն է տալիս:)
Քու վուար բարի բլի, վուրթի, միզ համա:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, անտրաշա շինելով:

Ախ, Սալօմէ Աւետովնա, (Համբուրում է ձեռքը):
'ես բախտաւուր իմ, վուր արժանացայ ձիր վուրթի
յիշվիմ յօրէսի դէնը:

ՍԱԼՕՄԷ, ճակատը համբուրելով:

Աստուձ էնէնց բախտաւուրէ, վունցոր քու մօր
սիրարը գ'ուզէ: Համեցէք, համեցէք նստեցէք, գէ-
թադիւս, յօրէս նստօս էլ դուս գու քայ:

Նստում են:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Ի՞նչպէս իբր, Սալօմէ Աւետոյնա, Նատալիա Օսիփով-
նէն վննց է. էն գիշերովան գէսը էլ շինը ուստ էկի:

ՍԱԼՕՄԷ

Լաւ, լաւ, փառք Աստծու. 'ես շատ հաւնեցայ էն
գիշերովան կանցերաը: Տէրը բարի տայ, լաւ բան
մօղա էկաւ, նշնելու ախշկերանց համա լաւ բազար
բաց էլաւ. արա էն կանցերաը վուր շէր էլի, վո՛ւրդի
կու բարեկիմանէինը առչի գամը, եա վո՛ւրդի կու
տեսնէիք ու կու հաւնէիք իմ Նատօին:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Նատալիա Օսիփովնէն էն հանգի ախշիկ է, Սա-
լօմէ Աւետոյնա, վուր առանց կօնցերաի էլ գիփու-
նանց հաւնելու ու սիրելու է, ու 'ես իմ ասողէմէն
պիտի ըլիմ շնորհակալ, վուր նրա սիրտը ինձ ննդաւ:

ՍԱԼՕՄԷ

Բաս էտէնց հանուում իս, փեսայ ջան, իմ Նատօին:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Օ՛ճՕ՛, 'ես նրան սիրում իմ, սիրում, Սալօմէ
Աւետոյնա:

ՍԱԼՕՄԷ

Վուր էտէնց սիրում էիր, վուրթի, էլ ի՞նչ էիր
միդ շարչրում. հարուր թումնի խաթիր կինաղամ
բանը մօշլա էր ըլում: Քու քուր Խամփերին օրթում-
հաւատ արաւ, վուր թէ մինը շինը առ էնդադա,
էսօր էւէտ միթամ Լէպրօինց Փարսիդի ախշկայ վրայ
պիտի նշնովիլ էիր:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, կոտրատուելով:

'Նս գարմանում իմ ձիգմէն, Սալօմէ Աւետոյնա,

վուր աւատում իբ էդ հանգի բաներուն. արա 'ես
Լէպրօինց ախշկան գ'ուղէի: Նատալիա Օսիփովնին
թողած, նրա բարի սիրտը, նրա սիւ աչքիւրը թո-
ղած, մարթ վո՛ւրդի էգնէն ննգնի՛, ամութ շէ: 'Նս
ձիգ ճշմարիտն ասիմ, Սալօմէ Աւետոյնա, 'ես շատ
նիզացայ, վուր իմ քուրը ձիգ մօղ առուտուր է սար-
քի. ֆի՛, մօվէ ժանր... ամա էլ ի՞նչ փոյթ, Աստուծ
վիրշնեւուս բարի անէ:

ՍԱԼՕՄԷ

Անփոշիվնելի ըլի, վուրթի, անփոշիվնելի քիդ
համա էլ, միդ համա էլ: (Վեր կեճալով:) Էս սաաթիս,
փեսայ ջան, գէնացվալէ... Էս Նատօս ի՞նչ էլաւ: (Աւեր-
սանդրը եւս վեր է կեճում:) Համեցէք նստեցէք, գէ-
թաղվա, արա գուր ո՛ւր իք ջափա քաշում, էս սաա-
թիս գալիս իմ:

Գուրս է գնում ձախ դոնից:

Տ Ե Ս Ի Լ Ճ Ե

ԱԼԷՔՍԱՆԴՐ, մտնալ:

Վիրշը հասայ մուրագիս. սիրուն կնիկ ու փուղ,
երկուսը մէտի ձեռիս է... Փուղը, փուղը՝ խօսիլը
փուղն է, առանց փուղ մարթը մէ գրօշ չածէ...
Ի՞նչ գ'ուղիս շարչրովի, ի՞նչ գ'ուղիս ասանջվի, թէ փուղ
չունիս՝ օշով մարթահէսար չէ գցում... Ամա մէ բան
լաւ շարի վուր շաապեցայ... մէ թիշ էլ դայիմ էի
կանգնի, ութ հարուր թուման կու տէին. հարուր
թումանս կտրաւ... Ի՞նչ անիս, շէր ըլում... Հաջարթ

չէ, փունցոր կուլի, կու դուս դամ... (Աջ ու ձախ նայելով): Չաղ ախ դէվէր ննդայ. լաւ հարուստներ ին կրեկում, օղօնդ գլուխս սիրել տամ: Մէ ծուրրէլի սօլ շուր վունց շունիւմ. կպն՝ ծծեցի... Գնացէք արարվիցէք. սաղ կանցէլարիէն տակն ու վրէն կուլի էրուց: (Ուրիշի ձայնով): Գիդիք ինչ է՝ Մարմարովին օխար հարուր թուման ին տվի ու էնէնց սիրուն ախշիկ, էնէնց սիրուն ախշիկ, (Մատնեբու ծայրը համբուրելով): պծամ: (Գարձեալ ուրիշի ձայնով): Վասն: (Նր ձայնով): Տօ ար: Չարման, Սաշա, շարման...: (Զննելով իրան): Զիկ, ջէնարմէն, պրօստօ ջէնարմէն: Լաւ առաջ դնացիր. էրուց էլօր մաիկ թէ սր կէհաս, դուն օղօնդ փուղի դարբը զիդացի: Աւանց փուղ զիփ սուտ է, զիփ դարբակ խօսկիր է... էս փուղի շահը, էն տօնուղը, մէ-էրկու հարուր թուման էլ էսդանց էնդանց՝ էս տարէնը՝ Երկր-շուրս հարուր թուման փուղ է անուս: Տարէնը վուր հարուր թուման յիդ գցիւմ, էս օխար ութը տարումը հաղար թուման փուղ կ'օնէ, տանուհինդ տարումը՝ էրկու էնդագա, իժուս էլի էնդագա, իժուս էլի էնդագա. վօտ աէրէ ի մօսէօ Մարմարով. քէփ արա ու զիփունանց աճկը հանէ:

Տ Ե Ս Ի Լ Ժ Զ

ԱԼԷՔՍԱՆԴՐ, ՍԱԼՕՄԷ, ՆԱՏՕ

ՍԱԼՕՄԷ, Նատօի ձեռքը բռնած՝ մտնում է ձախ դռնից: Ա՛յ, վուրթի, քու մարթը. ա՛յ, փեսայ ջան, քու կնիկը:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Ա՛հ, Նատալիա Օսիփովնա, վուրջ գիշիր էրա- գումս քիզ էի տեսնում:

Համբուրում է ձեռքը:

ՍԱԼՕՄԷ

Թշին, թշին, վուրթի, ու բէլգէն էլ տուն:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Իմ վուրջ կեանքս քիզ փէշքաշ, Նատալիա Օսիփովնա: (Զեռքի մատանին տարով Նատօին): Համեցէք, յօրէսի գէնը դուն իմն իս, Նատալիա Օսիփովնա, ու՛նս քունը:

Համբուրում է:

ՍԱԼՕՄԷ

Բախտաւոր ըլիք, վուրթի, մէտի ծիրանար: (Համբուրում է Ալէքսանդրին, յետոյ Նատօին): Զնահաւոր ըլի, վուրթի: Համեցէք նստեցէք, փեսայ ջան: (Յոյց է տալիս բազմոցը, որի վրայ Ալէքսանդրը եւ Նատօն նըստում են): Յօրէս սրա հէքն էլ տուն գու քայ:

Յափշտակուած այս եւ այն կողմն է ընկնում:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, նայելով Նատօին:

Նատաշա ջան, ինչի՞ փունշիչ շիս տտում... մէ քու քախքը ձէնն ինձ իմաց արա:

ՆԱՏՕ

Լիզուս կապվեցաւ, մօսէօ Մարմարով:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Մօսէօ:

ՆԱՏՕ

Ալէքսանդր, Սաշա:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, Նատոի ձեռքը բռնելով:
 Սաշա, Նատաշա. ի՞նչ սող ի՞նք դալի:
 Համբուրում է ձեռքը: Չախ դռնից մտնում է
 Խախտն:

Տ Ե Ս Ի Լ Ժ Է

ՆՐԱՆՔ, ԽԱԽՈ

ՍԱԼՕՄԷ

Մէ արի, բատօնօ ջան, է:

ԽԱԽՈ

Է՞սէնց էլ բան կու՛րի: (Սալօմէին:) Քան, մէ մնալափ
 չէիր սա՛ կն մարթն էլ տուն էր էկի:

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ հաջաթ, յօրէս դու քայ, ջեր մէ դուն լաւ
 բարաթի օխնէ հալա:

ԽԱԽՈ

Աստուծ օխնէ. իմ միզաւար բերնով խնդրում իմ՝
 Կամարկատարն ըլի ձիր քօմաղը: (Ալէքսանդրը եւ Նա-
 տօն վեր են կենում:) Աստուծ անիտչիփնեյի անէ. ծլիք,
 ծախկիք, մէ բնրցի ծիրանար:

Օսէփը մտնելով նախասենակի աջ կողմից,
 մտնում է աղշած:



Տ Ե Ս Ի Լ Ժ Ը

ՆՐԱՆՔ, ՕՍԷՓ

ԽԱԽՈ, Հարունակելով:

Առչնիրը աղայ աղայ Աստուծ. մէկմէկու սիրիք ու
 պատվիր, թարաւորի ածիլը քաղցր ըլի քի վրայ,
 վուրթի... (Տեսնելով Օսէփին, որ մտնում է նախասե-
 նակի աջ կողմից:) Ա՛յ, մնացածն էլ իր հէրն օխնէ:

ՍԱԼՕՄԷ

Ա՛յ, Օսէփ ջան. Հնահաւուրէ քու ախշկայ բախ-
 տաւուրութիւնը:

ՆԱՏՕ

Պատվաշա...

Կօտենալով Օսէփին, ձեռքը համբուրում է: Օսէփը
 մտնում է անշարժ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, առնելով Օսէփի ձեռքը:

Յօրէսի գէնը, իմ հէր, ՚ես էլ ձիր վուրթիկերանց
 հէսարումն իմ: (Շփոթուած յետ գտնալով դէպի Նա-
 տօն:) Էս ի՞նչ բան է:

ՍԱԼՕՄԷ

Էս ի՞նչ քաղաքավարութիւն է, Օսէփ:

ԽԱԽՈ

Ի՞նչ էլաւ քիզ, Օսէփ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, Սալօմէին:

՚ես վունչիչ չիմ հասկանում: (Օսէփին:) Նիզացած
 իք էրեվում, իմ հէր:

ՕՍԷՓ, ուշքի գալով:

Ն՞ո... չէ... հան, գլուխս պատուս էկաւ մէրաշ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, ածող մօտ տանկով:

Համեցէք, իմ հէր:

ՕՍԷՓ, Ալէքսանդրին:

Մի նիզանա... անց կացաւ:

ՍԱԼՕՄԷ

Ախար փեսին էակնց կու հանդիրին ու էն էլ էս-
թաւուր փետրն. մէ իմրին ասա, է:

ՕՍԷՓ

Էլ ինչ ասիմ... նշնիլ իր, Աստուծ վիրշը բարի
անէ: (Ալէքսանդրին): Համեցէք նստեցէք:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Իմ հէր, արա նիվը կու հրամայէր նշվանակը.
էքոնց թէ էլօր:

ՕՍԷՓ

Քու քէփն է. վունցոր դ՞ուզիս:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Մէ քսան մարթով գու քամ. իմ նաշալնիկին էլ
պիտի ասիմ, չի ըլի:

ՕՍԷՓ

Վունցոր կու հրամայիս:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, Սալօմէին:

Կո՛ւլի բէզամազ է ինձմէն. թէ իմրին գէթ ունիմ,
ասէք ինզրում իմ:

ՍԱԼՕՄԷ

Չէ, ինչս ատում, վուրթի, վոնց կուլի:

Շարունակում են ցածր ձայնով խօսել բեմի աջ
կողմում:

ՕՍԷՓ, բեմի ձախ կողմում, Խախօին:

Տօ, անասառնիւր, մէ քիչ չէլիք կանա մուլափ աս:
ԽԱԽՕ

Ի՞նչ է պատահի:

ՕՍԷՓ

Աստուծ վուշ գիդէ իմ գլուխն ու արիւր. Սան-
թուրովը կուտրացաւ:

ԽԱԽՕ

Վճ, բուանամ 'ես:

ՍԱԼՕՄԷ, բարձր, Ալէքսանդրին:

Համեցէք, փեսայ ջան, գնանք գաստինէն:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, թեւն առաջարկելով հասօին:

Էստի մէ բան կայ, նատաշա.

Գուրս են գնում ձախ դռնից. Սալօմէն ան-
տիւում է նրանց:

ՕՍԷՓ

Ախ, Աստուծ, Աստուծ, ետար ինչ իս գրի ճակախ:
ՍԱԼՕՄԷ, ճանապարհից յետ դառնալով, Օսէփին:

Գ՞ուզիս ինձ սպանէ, Օսէփ, օխտը հարուր իմ
խոստացի: (Գնալով Խախօին): Համեցէք, բասօնօ ջան,
դէսը: Ա՛րի, Օսէփ:

Գուրս է գնում ձախ դռնից:

Տ Ե Ս Ի Լ ԺԹ

ՕՍԷՓ, ԽԱԽՕ

ՕՍԷՓ, սաստիկ նեղացած:

Էս ինչ իմացայ... զո՛ւրթ ասաւ... քիզ իմ հար-

ցնում, չիս իմանում, ինչ իս պատանձվի: (Լացի
 ձայնով) Աուրթ է էլի, դուրթ. տեսնում իմ վուր
 դուրթ է... Օ՛հ, Աստուծ, ինչի կէծակ չիս վէր գը-
 ցում էս անիծած տուն ու տիղիս վրայ, վուր դի-
 փունիս մէտի գեղինը գէվէր ասնէ... Աշխրբի վուր
 կորաւ իմն էս սահաթիս. տուն էի գալի վուր զիփ
 մէտի մօշլա անիմ բանը, ու դուք էս ինչ բերիք
 գլուխս, ինչ:

ԽԱԽՕ

Իմ միղն է, իմ միղը, վուրթի. մի շարանա, գէ-
 նացվալէ, հարուր թուման իմ թաղմելէն կու տամ:
 ՕՍԷՓ

Քու թաղմելէն... Փնոք Քիզ, Ատուծ, փնոք. հա-
 սայ էն տիղը վուր տիկաի պէս օղօրմութենի ար-
 ժանի էլ դառայ... Քու փուղիըը քիզ համա պահէ,
 ինձ հարկաւուր չէ... ինձ միխկա իտկի էլ մի բերի,
 նս հարուստ իմ, խիտ հարուստ իմ. ինչ անիմ թէ
 Սանթուրովը կուարացաւ, ինձ ինչ հաջաթ, սվ կա-
 նայ ինձ ժափ տայ՝ դար ու դամի՛նի պէս կանգնած
 իմ, տանս անհատանի փուղէ ծղարօ է դուս գալի:
 (Մազերը քաշելով:) Ա՛խ, Աստուծ, Աստուծ... (Բարկացած
 ման է գալիս:) Գնն, դնն, փեսին հանդերի, շնուս
 արա, ամութ է, մարթը շինովնիկ է, (Գտոր ծիծա-
 ղով:) հն, հն, հն...

Գուրս է գնում աջ դռնից:

ԽԱԽՕ

Տէր Աստուծ, Գնն թափէ ու ազատէ:

Գուրս է գնում ձախ դռնից: Վարագոյրն իջ-
 նում է:

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԳ

Փարսիղի տանը փարթամ սենեակ՝ անճաշակ կերպով կա-
 հաւորած. յատակը ծածկած է գորգով, առաստաղից կա-
 խած է բիւրեղեայ ջահ հանգած մոմերով: Աջ, ձախ և
 դիմացը դռներ՝ թաւիչէ դրապրիներով զարդարած: Ջախ
 կողմը՝ բազմոց, որի մօտ սեղան, հայելի և լուսամուտ.
 Իսկ աջ կողմը՝ գունաւոր սփռոցով ծածկած մի այլ սե-
 ղան: Խորքում՝ ընկողմարան [քուշէթ]: Ուր հարկն է
 աթոռներ և բազկաթոռներ: Յերեկ է:

ՏԵՍԻԼ Ա.Ռ.Ա.ՋԻՆ

ՓԱՐՍԻՂ, նստած է աջ կողմի սեղանի մօտ, որի վրայ
 զարսած են համարակալ եւ բաց հաշուեմատեան,
 ՄԻԽՕ, կանգնած, կտաւի մի կտոր ձեռքին, զազով
 չափում է:

ՄԻԽՕ

Էս էրկու, էս ներիք, էս շուրս, էս հինգ, էս վից,
 էս էլ... պակսեցաւ, ազա:

ՓԱՐՍԻՂ, վեր կենալով տեղից եւ Միխօի դիտին խփելով:

Ա՛յ, թէ պակսեցաւ. չնփիէ նուր մէկանց: Հոգիտ
 կու հանիմ թէ մէ վէրչօկ պակսեցրի իս օխանէմէն:

ՄԻԽՕ, սկսելով նորից չափել:

Ա՛խ:

ՓԱՐՄԻՂ

Անգճներէմէտ կու հանիմ էս ախր. դէ, չմտա
արա. (կամաց վզակոթին տալով:) հը՛:

ՄԻԽՅ

Ա՛յ, աղա. (Ձափում է:) էս մէկ, էս էրկու...

ՓԱՐՄԻՂ, աջ ձեռքը բռունցք արած բնամատով ՄԻԽՅ
զկից իբրև մի բան արմատախիլ է անում: [Գլխից

բռն: հռնռն:]

Ձքէ, սո անիծած, է՛:

ՄԻԽՅ, սաստիկ ձգելով:

էս 'երկը, էս շուրս...

ձակասից քրտինքը սրբում է:

ՓԱՐՄԻՂ

Հըմ, իշի բիռն ունիս շալկամ:

ՄԻԽՅ

էս հինգ...

ՓԱՐՄԻՂ

Ձքէ, ձքէ:

ՄԻԽՅ

էս վից, էս էլ... էլի 'երկը վերջով պակսեցաւ:

ՓԱՐՄԻՂ, ՄԻԽՅի ականջները բաշկով:

'Երկը վերջով պակսեցան... էստի կու աւելնայ:

ՄԻԽՅ, լալով:

Վայ մէ, վայ մէ, վայ մէ, վայ մէ...

ՓԱՐՄԻՂ

Իշի գլուխ, 'եփը պիտի գուն մարթ դառնաս:

ՄԻԽՅ

Վայ, դէղի ջան, վայ, դէղի ջան...

ՓԱՐՄԻՂ, աւելի ոլորելով նրա ականջները:
Պակաս է՛:

ՄԻԽՅ, աղաղակելով:

Ա՛ղա ջան, աղա, քու հոքուն մեռնիմ, աղա ջան...

ՓԱՐՄԻՂ

Ա՛յ, թէ պակաս է:

ՄԻԽՅ

Թ՛ամամ է, թ՛ամամ, աղա ջան, մէկ էլ թող,
աղա ջան:

ՓԱՐՄԻՂ

Դէ, վիկալ. ամա մնւղայիթ կաց:

ՄԻԽՅ, առանձին:

Ե՛մ սուրբ Կարապիտ: (Բարձրաձայն չափում է:)
Մէկ...

ՓԱՐՄԻՂ

Ուտիս կրկօէք:

ՄԻԽՅ

էրկու...

ՓԱՐՄԻՂ, քրթմնջում է. յետոյ:

Հայվան:

ՄԻԽՅ

'Երկը...

ՓԱՐՄԻՂ

Աճկիրդ բաց արա, էլի, անիծած:

ՄԻԽՅ

Չուրս...

ՓԱՐՄԻՂ

Տեսնում իս Դարչուն վունց է չափում:

ՄԻԽՅ

Հինգ...

ՓԱՐՍԻՂ

Գուն էլ սորվի, էլի:

ՄԻԽՅ

Հինգ...

ՓԱՐՍԻՂ

Թէ չէ՛ էտէնց մնացիր, դուքանս քարուքանդ կ'օնիր:

ՄԻԽՅ

Հինգ, հինգ...

ՓԱՐՍԻՂ

Էլ մէ օր չիմ պահի, Աստուծ գիգեհայ:

ՄԻԽՅ

Հինգ, հինգ, հինգ...

ՓԱՐՍԻՂ

Դէ, գնդըդ բանեցրու...

ՄԻԽՅ

Հի՛նգ... (Առանձին:) Են սուրբ Գէւորդի զօրութիւն: (Բարձր:) Էս վից... վից... Կու պատուի, աղա, խիստ իմ ձրում:

ՓԱՐՍԻՂ

Բանըդ ախ:

ՄԻԽՅ, յանկարծ:

Վնյ, վնյ, վնյ, վնյ, ինչոր ձէն հանից:

ՓԱՐՍԻՂ, տնողելով:

2է, վունչիչ չկայ. հորիտ կու հանիմ թէ պատուի իս:

ՄԻԽՅ

Էս էլ (Տնողելով:) օխանէմէն կէս վէրջօղ պակաս: Գիմացի դոնից մտնում է Գիծ-Մօղին եւ ետևը լուս կանգնում:

Տ Ե Ս Ի Լ Բ

ՆՐԱՆՔ, ԳԻԾ - ՄՕՁԻ

ՓԱՐՍԻՂ, Միխի դիտին խփելով:

Արա դուն ինչ շուք ունիս, վուր էս կէս վէրջօղն էլ չդուս բերիր:

ՄԻԽՅ, գոռալով:

Վուր չկայ, աղա, ես ինչ անիմ, վն:

ՓԱՐՍԻՂ, նրա մազերից ու ականջներից րաշելով:

Սնւա էլ վուր խօսում է:

ՄԻԽՅ, գոռալով:

Վնյ մէ, դէ դի ջան, դէ դի ջան... Աստուծ շունիս, խօ չիս կանա սղանի ինձ. արա դուն չափէ թէ օխան է:

ՓԱՐՍԻՂ, չարանալով վերցնում է դազն ու կտաւը:

Օխաը չէ. նյ, թէ օխաը չէ: (Չափում է:) Էս մէկ, էրկու, նրկը, շուքս, հինգ, վից, օխաը, էս էլ քի մէ շարէք աւելի փէշքաշ: Էս ինչ է թէ օխաը չէ. վուր մեռնիս պիտի սորվիս. շնգիրդանի համա ունիս աճկիրդ բնց: Դէ, շնստ արա:

ՄԻԽՅ

Ախ, Աստուծ, ինչ անիմ: Էս մէկ, էս էրկու...

ՓԱՐՄԻՂ

Կամայ չպատուխ:

ՄԻԽՅ, լաց լինելով:

Ախար, 'ես վնւր ջուրը ննգնիմ. քաշում իմ՝ պատրուվում է ու չիմ քաշում՝ չէ գուս գայլի:

ԳԻԺ - ՄՕՁԻ, առաջ գալով:

ԷՏԷՂ, կտօ գուլիահա... ԳԻԺ - Մօղի... (Ծիծաղում է:) Հն, հն, հն...

ՓԱՐՄԻՂ, առանձին:

Էս գիծ անիծածն էլ վնւրդի էր:

ԳԻԺ - ՄՕՁԻ, խլելով Միխօի ձեռքից դագն ու կտաւը:

'Ե՛ր, լաշաթըրիան, իս տու էստի: Էստի օխան էլ կայ, քսան ու օխան էլ: (Ձափում է շուտ-շուտ:) Մէկ, էրկու, 'երիք, շուրս, հինգ, վից, օխտը, ութ, ինը, տասը, տասնումէկ, տասէրկու, էս էլ տաս'երիք, էս էլ տասչուրս. հը՛, էլի գ'ուղիս. էս էլ տասնուհինգ, էս էլ տասնուվից. գ'սւղիս էլի գուս բերիմ... Սլլեցնւ, էլի, տօ, շիս իմանսմ: (Գաղը եւ կտաւը Միխօի վրայ անկող:) Բունէ, մանրթ դառի, էլի. սրա պէս ազա մարթու մօղ աշկիրտ իս, էստու շուր էլ շունիս, մէ կէս վէրջօկի գոդնալ էլ շտրվեցա՛ր ինչըու հիմի... Չարլսւթ...

Միխօն ուզում է աղատուել կտաւից, բայց աւելի է խանդարվում:

ՓԱՐՄԻՂ, ԳԻԺ-Մօղուն:

'Ես քիզ ատում իմ լպտամած - լպտամած մի լսօսի ինձ մօղ, թէ չէ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Էսէնց է աշխարքն, սյ. լաւութենին լաւութին

չկայ: (Մատնացոյց անելով Միխօին:) Ուզում իմ մարթ դառնայ: (Միխօին:) Գնն, գնն, վուրթի, գնն մարթ դառի. սնրվի, էլի, քու աղիմէն. տնտնում իս ինչ հագա փուղ է մօղ արի: (Փարսիդին:) Արն, կէսօրի վուխա է, սնւիրէն գցին, ասն, էլի. հօնաղ իմ էկի: Ի՛նչ ունիս ճաշին. դօշի ծվէնի թէ կօնչօլ, քէփ է վուր կու շանց տաս, օհ, հօ, հօ, հօ... Չարլսւթ:

ՓԱՐՄԻՂ, առանձին:

Էս անիծածը խիստ է հարկամ: (Միխօին:) Գնն կորի էսդանց:

Միխօն գնում է կտաւի մէկ ծայրը ձեռքին, միւսը ետեւից գետնին քարշ տալով:

ԳԻԺ - ՄՕՁԻ, հետեւելով վայր ընկած կտաւի ծայրին:

Է՛ստի մտիկ, է... (Փարսիդին:) Արի վրէն նստի, միթամ սանկա է քիզ համա, էլ սանկի փուղ շիս տա. խիստ ձուն է գալի, քու արիւր: (Ինքը նստում է կտաւի ծայրին:) Ա՛րի, էլի... Չարլսւթ... Քնչէ, տօ:

ՓԱՐՄԻՂ

Տէր օղորմած Աստուծ: (Ձարանալով Միխօի վրայ:) Չէիր կանա կարքի մօղ անի՛:

Խփում է Միխօի գլխին եւ քաշում է կտաւը:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Տարրըն...

Թափ է տալիս կտաւը:

ՓԱՐՄԻՂ, սր փոքր էր մնում վայր ընկնէր, բարկուծիւնից խփում է Միխօին:

Էս գիլի քու միզն է, անիծած:

Միխօն դուրս է վազում դիմացի դռնից:

Տ Ե Ս Ի Լ Գ

ՓԱՐՄԻՂ, ԳԻԺ - ՄՕՁԻ

ԳԻԺ - ՄՕՁԻ, շարունակելով:

Մնւլտի, էստի հարկաւուր է: (Տեղից վեր է թըռչում:) Էս ամերիկէն էլ սըր իս զրգում, օխնած հորի. էս օր է թէ էքուց պիտի մեռնիս, էստու վրայ լու պատանը սվ կու տայ քիղ: (Կտաւով չափում է փարսիղի հասակը ետեւից:) Էս մէկ, (Ձափում է առջեւից:) Էս էլ մէկ. էլի խէլի մնում է:

ՓԱՐՄԻՂ, ազատուելով:

Գժվիլ իս, տօ:

ԳԻԺ - ՄՕՁԻ, շարունակելով:

Խիստ հանգումն է, քու արիւր:

Տ Ե Ս Ի Լ Գ

ՆՐԱՆՔ, ՔԱԼԻ

ՔԱԼԻ, մտնելով ձախ դռնից:

Ա՛յ, թաղա խարար: (Տեսնելով Գիժ-Մօզուն, շուարվում է:) Վ՛ս՛յ, քուսանամ նս. էս ի՛նչս անում, տօ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Վան, չիս տեսնում, պատանը իմ ձեռն. սըրի, գ՛նւղիս քի համա էլ. (Պատրաստվում է չափել եւ նրա հասակը:) քանի գ՛նւղիս դուս գու քայ, էնդաղա քաշ-ըշվեցու էս խիղճ ամերիկէն:

ՔԱԼԻ, հեռանալով:

Գէ՛նը, դէ՛նը: Է՛լի սիվցար դէսը՛:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Վան, բաս առանց ձիղ կու դիմնէի՛: (Նորից մօտեցնում է կտաւը Քալինին:) Ա՛րի, է՛, տիս քանի պատանը է դուս գալի:

ՔԱԼԻ

Ի՛նչ Աստուծ է խռովի գլխիտ, քա՛:

ՓԱՐՄԻՂ

Էս ի՛նչ իշալարի հանար է, տօ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Քու քաղաքավարի ջանին մեռնիմ. մէ անգճնե-րուա էլ թմնաշա արա, Օրթաճալու էջն էլ չունէ էտ-էտդապա անգճնիր... Պատի վուանի՛րը... էստի մտիկ, կ՛օսիս էրեխի կուրօ ըլի: Ա՛փստս չէ իշի վուանի՛րը՝ սուփթա, լաղաթի. քու մատներու վրայ կի բարակ է ու. էս ի՛նչ է, դա՛թիլու վուանի՛ր է՛:

ՔԱԼԻ

Գժվիլ իս, տօ, թէ ի՛նչ խարրնեւումն իս էս:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Գիժը գնւն իս, սարսաղ, վուր էս թալուր մարթու պատիւը չիս իմանում:

ՓԱՐՄԻՂ, նստելով աջ կողմը եւ առանձին:

Ի՛նչ փիս է հարփած անիծածը:

ՔԱԼԻ

Ձէնըա, տսում իմ, է՛:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Խաշը գիղեհայ, հանար չիմ անում. արա ջիրումս ի՛նչ ունիս. հինգ մանէթ ունիս, բի իրան տանը՝

տասը կու շինէ. տասն ունիս՝ քսան կու շինէ: Գօ-
 դիկդ քանի արշին է, հինգդ. դ՛նդիս ձեւաց օխար
 դուս բերէ էս սասաթիս: Ա՛յ, ժոնով ուտիմ ձիդ էր-
 կուտիս մէտի, հըս: Խիղճ Միխօի անգճնիբը՝ Կրիբ
 գազ ձքից, վուր էս ամերիկի կտուրը օխան արշին
 դուս բերէ, ամա ինչոր չկայ, վ՛ննց կու դուս գայ:
 Ա՛րի ինձ խեղօք ասա, կու խեղօքանամ, սրի սրան
 ճրնանուր ասա, կանայ ճրնովի՛. սրի քիդ սիրուն ասա,
 օհ, հօ, հօ, հօ, ինչ իս: (Երգում է:)

« Զօ՛ր գարադրուլօ մթվարէ,
 Բնէլս վրի վար մօմէխմարէ,
 Մ՛նաթօրլազ գանմխարէ,
 Մէջ գանմինաթլէ արէ: » *)

Դուն էլ կ'օտիս՝ աթմօրթու պատկեր ունիմ. տարե-
 մուտ գիշերը միր Թամարօն վուր բատիէք է թխում,
 մասով էրկու արի քիչմիշ է ցցում, աճկիր է, կ'օտէ,
 ու մէշտիդն էլ կէս նուշը կպցնում է, գառաւ քինթ,
 կօ՛սէ. դրուտա էն շիս: Օ՛հ, շէնի կի ճիրիմէ. (Փա-
 թաթվում է եւ ուզում է համբուրել:) արեգապի շուխկը
 վրէմէզ վէր է գալի՛:

ՔԱԼԻ

Ի՛հ, խուղիմ քու գլուխը, շիրաշխանի հուտումը
 մլլում իս:

*) Վրացերէն է.—

Ո՛վ փառահեղ լուսին,
 Նստած եմ խաւարում, օգնիր ինձ,
 Զգիր քո փայլուն լոյսդ ինձ վրայ
 եւ լուսաւորիր բոլորի շուրջս:

ԳԻԺ - ՄՕԶԻ

Վա՛հ, գանա շիմ գիղի՛ ամեն օր վարթ-մա-
 նուշակի իս հուտ կալնում: (Շարժուածքով ցոյց է տալիս
 փարսիդի վրայ:) Մէ քինթ ու պուունգին էլ թմմաշա
 արա, է: (Ծիծաղում է:) Հն, հն, հն...

ՓԱՐՄԻՂ, առանձին:

Է՛սէնց էլ լպտամձ:

ԳԻԺ - ՄՕԶԻ, նորից փաթաթուելով Գալինին:

Մէ սրի, է: Է՛ստի մտիկ, վ՛նրդի իս գողցի էս
 ճախի աղուխը:

ՔԱԼԻ, հեռացնելով:

Մէ դէնը, հէնց ապրիս, թաւաթ սիրտս տրարած
 է ու պատռած:

ԳԻԺ - ՄՕԶԻ

Տրարվի ու պատռվի ամբախտ մարթու գլուխն
 ու արիւր: (Ցոյց է տալիս փարսիդի վրայ, որ այս միջո-
 ցին հաշուեմատեանին էր նայում, եւ հեղծօրէն:) Բնս
 էմարթլէրի խղճին, իր համա հալալ միամիտ, աէրօ-
 դորմէն առշիւր, Սաղմուս է կարթում:

ՓԱՐՄԻՂ

Գիժ-Մօղի, լիղվիս նղ արա, ասում իմ:

ԳԻԺ - ՄՕԶԻ

Վա՛, մէրաշ անգճնեբուս վրայ սուխ չկտարիս:
 ՔԱԼԻ, գնալով դէպի փարսիդը, Գիժ-Մօղուն չանչ է անում:
 Քու հարկած գլուխն էլ: (Փարսիդին:) Էս իմացնր.

ՓԱՐՄԻՂ

Թո՞ղնում է մարթու: Ի՛նչ խարար է:

ՔԱԼԻ

Էլ ինչ խարար պիտի ըլի. Մարմարինց աղէն ի-
 րիդուն նշնվիլ է:

ՓԱՐՍԻՂ

Վան, դմբթ:

ՔԱԼԻ

Աստուծ զիդինայ:

ՓԱՐՍԻՂ

Ո՞ւմ արշկայ վրայ:

ՔԱԼԻ

Գուլարինց Օսէփինը:

ՓԱՐՍԻՂ

Ղմբթ իս ասում:

ՔԱԼԻ

Բաս սնւտ իմ ասում: Հաղար թուման էլ փուղ ին տիր: Էնդաղա ասի՝ աւելցնւ, ասի. գնաց, էլի, ձեռներէմէս. իժում ինչ աղայ էր: Խիստ մինձ-մինձ ին պատուաւում. սի էրիտ նրանցն էսդաղա փուղը:

ՓԱՐՍԻՂ, վեր կենալով:

Վնյ քու աղիս աղայ. նս նրան հաղար թումանը կու շանց ամ... (կանչում է:) Միխօ, Միխօ. դնանց թէ էստի է: (կրկին կանչում է:) Միխօ:

Մտնում է Միխօն դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ՄԻԽՕ

ՓԱՐՍԻՂ

էս սատթիս դէվէր վազի Տափի-թաղը. Գուլարինց Օսէփի դուրանը խօ զիդիս:

ՄԻԽՕ

էն օրը վուր փնւղ էրի:

ՓԱՐՍԻՂ

Հն, հէնց նա: Գնն, վուրդիոր ըլի զթի ու ասա, վուր մնացածը էս սատթիս էւէտ բերէ. դէ, շնւտ արա: Ի՞նչ իմ ասում՝ (Մատնտնիշ անելով կտաւը:) էս պատանըն էլ տար:

ԳԻԺ - ՄՕՋԻ, ծիծաղում է:

Հն, հն, հն... սյ, Աստուծ լսէ:

ՓԱՐՍԻՂ

Նս էլ ինչ իմ ասում, խիլքս խտոնվեցաւ: (Միխօն, չարանալով:) Ի՞նչ իս բերանդ բաց արի, շիս իմանում. վիկալ էս ամերիկի կտուրը: (Միխօն աշխատում է հաւարել:) Արա-հըն, իժում գնն դուքանն ու Գարջօին կ'օսիս, վուր էս նմուտիս էւէտ էստի բսնվի: (Խփելով Միխօի գլխին:) Տօ, ձեռնիրդ փնփա է ուտում: (Միխօն աչքերը սրբում է:) Ըահն... (շաւարելով կտաւը եւ տալով Միխօն, որին կրկին խփում է:) Գէ, շնւտ:

Միխօն կտաւը ձեռքին դուրս է գնում դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ Զ

ՔԱԼԻ, ՓԱՐՍԻՂ, ԳԻԺ - ՄՕՋԻ

ՓԱՐՍԻՂ, շարունակելով:

Տեսնիմ վննց է տալի հաղար թուման... վուր տալիս է, ո՞ւմ փուղն է տալի:

ՔԱԼԻ

Թ՛անվլափիան Սալօմէ, փեսին ձեռնէն երէմէս խը-
լից, էլի:

ՓԱՐՍԻՂ

Տիւ թէ ինչ օրը հասցնիմ 'ես նրան:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Հէստի բան քօվլացի վուր շկանենաս, թէ չէ վա-
դութինը քու փէշակն է: Օսէփն ինչ միդ ունէ վուր
Ղիզըր նրա վրայ իս հանում: Քու ախշիկը վուր տու-
տուց ըլի ու 'երիք գաղ բերան ունենայ, Օսէփն ինչ
անէ էտումը, էլ Միխօի անգճներուն բնս էմարթլէ-
բի. պակասը թամամ կ'օնէիր, էլի:

ՓԱՐՍԻՂ, չարանալով:

Փիէ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Փիէ քիդ ու Աստձու կրակ. կու աէիր դուն էլ,
էլի. ինչի շէիր տալի, սւմ համա իս մօղ անում.
էքուց էլօր կու սատկիս, դիփ մունդուէկ կու մնայ:

ՓԱՐՍԻՂ

Ձէնդ թէ չէ:

ՔԱԼԻ, ԳԻԺ-Մօղուն:

Գուն էլ ինչ իս մէ կուռը տրաքեցնում, տօ. միր
գարդը միդ հերիք է:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Գարդ ցաւի գաք ու Աստձու պատիժի. 'ես ու իմ
Աստուձը, բախտաւուր է էն տղէն, վուր Օսէփին է
ուստ էկի ու ձիգմէն ազատվիլ է. գլխով վուտով
Օսէփի դունգը շաժիր:

ՓԱՐՍԻՂ, չարանալով:

Գնա գլխէմէս ուղ ըլի, թէ չէ էս չարացած
սրտիս ինչ Ղիզը ունիմ քիդ վրայ կու հանիմ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Վնա, (Բոունցքը բերանին մօտեցնելով): պըռըժ...
Ի՞նչ պիտի անիս, ճոնիրս դողում է քիմէն. մէքաշ իմ
դուքանն էլ չմհրիլ տաս: Ի՞նչ մարթ իս դուն, ինչ:

ՓԱՐՍԻՂ

Ի՞նչոր վուր իմ, քի վրայ իս լաւ մարթ իմ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Ինչո՞վ իս լաւը:

ՓԱՐՍԻՂ

Մէկ էս վուր 'ես խելօք իմ, դուն գիժ իս:

ԳԻԺ - ՄՕՁԻ, ծիծաղում է:

Հն, հն, հն... վուր խելօք ըլիս, էտ չիս ասի:
Ինչո՞վ իմ գիժ. վուր քու արարմունքն էրեսիտ ասում
իմ: (Ծաղրելով): Խե՛լօք իմ, կ'օսէ. աւտաս աէլէգրա-
փի մալթուր դուն մօգօնեցիր, ա՛յ:

ՓԱՐՍԻՂ

'Ես փուղ ունիմ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Քու փուղը տար ու... (Մի քանի խօսք է ասում
ականջին): Էսդանց, էնդանց փախցրիլ իս, ինձմէն
խլիլ իս, նրամէն գողցիլ իս, փուղ իս շինի ու էնդով
դրօշկա ու կալասկա իս սարքի ու մէշն ուսած ու
փքած սէիր իս անում. էս է քու փուղն, էլի... Քու
մամա Մաթուան էլ առանց կալասկա դուքանը չէր
գնում, հն քու արիւր... Փուղ ունիմ, կ'օսէ... Վուր
գլխամեռ քի վրայ հարուստ չէ. արա քու հալալ աշ-

խառանքն էլ հէսար անինք, իմն էլ... տեսնինք՝ սով
 շատ ունէ: (Գրգանից քսակը հանելով եւ աջ ձեռքով
 վրան խփելով): Ա՛յ, ս՛յ, ս՛յ, (Աջ ձեռքով իրբեւ ճակատի
 բրտինքը սրբելով): Ղիփի էսէնց, ս՛յ... Բաս չէ ու քի
 պէս էգեղեցու համա փուղ կու մօղ անէի ու ջիրս
 կ'օծէի... Ի՛ս տու իմ մէ մանէթը... Ի՞նչ տամ մէ
 ձեռաց սուտ կուտը ննգնիս:

ՓԱՐՍԻՂ

Միղայի Աստձու:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Օ՛հ, հօ, հօ, հօ, աւտաս տու զամբ կու՛լի, ս՛յ:
 Վուր մեռնիս ասպրըկներով դերեղմանդ կ'օծին. հա՛,
 քու գլխի արիւր դիղենայ:

ՓԱՐՍԻՂ, չարանալով:

Տօ, ձեռը շի՛ս վիկալնի ինձմէն:

ՔԱՆԻ, նոյնպէս:

Ձիս ամանշմւմ:

ԳԻԺ - ՄՕՁԻ, Փարսիղին:

Վուր մեռնիս, ձեռը շի՛մ վիկալնի. քանի սաղ իս,
 քիզ համա օրթունք է ստեղծի ինձ Աստուձ. պիտի
 ջանա ուտիմ ու՛ հփոր կու մեռնիս, էն շախը թա՛-
 մաշա արա՛ սիպտա-սիպտա օրթունքնիրը կու փա-
 թըթիլին վրէտ լօթիքը, անդճէմէտ տուն կ'էհան ու
 քնթէմէտ ու բերնէմէտ դուս գու գան... էհէ՛յ. կա՞ծ
 գուլիտեա... Չարլո՛ւթ: Ա՛փտուս չէ՛ քու սիրուն աճ-
 կիրը վուր մէջն օրթունք նստի: Ա՛րի մէ պաշ անիմ,
 գէթ աղվա:

ՓԱՐՍԻՂ, մեկնելով ձեռքը:

Ձեռիս պիտի պաշ անիս:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Վա՛հ, վարթապիտ խօմ չիս... էնէնց պուօշտի ա-
 նինք թէ գ'ուզիս: (Ձեռքը Փարսիղի ուսին դցելով): Է՛ստի
 մտիկ, կ'օսիս դժուխիկ մաշխալա ըլի: (Հեռանում է):
 Ղա՛րթ, հանաքը դէնը, աղա Փարսիղ, ամա կու լաց
 ըլի խալիսը քու մեռնելիս... վուրդի խղճի արաը-
 սունք կայ, Ղիփի էն օրը կու թափվի, ս՛յ... (Ծիծաղում
 է): Հա՛, հա՛, հա՛... Գէ, մեռի, էլի՛. կուրօի փուղը՝ հս
 կու բախշիմ:

ՓԱՐՍԻՂ, սաստիկ չարանալով:

Տօ, կ'սրի էսդանց, թէ չէ...

ՔԱՆԻ

Գնա՛, թէ չէ էս սասթիս բջերանցը կանչեցի, Աս-
 տուձ գիղենայ:

ԳԻԺ - ՄՕՁԻ

Բջերանցը... Ա՛յ, թէ բջերանցը... (Բռունցքները
 շարժելով եւ ծաղրածուծեամբ յարձակուելով աջ ու ձախ):
 սէհ, սէհ... սէհ, սէհ... (Փարսիղն ու Քալին այս եւ այն
 կողմն են վազվզում, իսկ ինքը կանգնում է մէջտեղը եւ
 յանկարծ փրթկում է): Փըս՛հ, հա՛, հա՛, հա՛... էս չիք...
 էս էլ դառաւ էն օրվան գիշերը, վուր դուռը չբաց
 անիլ տվիք: Չա՛տ հարկաւուր է ձիր գլուխն ի՛նձ.
 աշխրբին շարա էլաւ, 'ես կի շկանացի մէ ազատվի
 ձիզմէն... 'Ե՛փ կու՛լի ձիր քէլէլը բաժնիլ ըլիմ. առանց
 էն խօ վարցի չիք անում ու էգէբա էն օրվան ձիր
 շիլափլաւը Աստուձ վարցի համարէ ձիր հօքու հա-
 մա... (Փարսիղին): Ի՞նչ չիս արի դուն, ի՛նչ. ախպէք
 ասիս՝ դուն իս գընի, ննգիր ասիս՝ դուն իս խափի,
 պարտի ասիս՝ դուն իս հաշա կերի, զօռով պարտի

ասիս՝ դուն իս վիզը գրի՝ օմքնու վրայ, գուզուլթին
 ասիս՝ դուն իս արի, վուրթու բողազ ասիս՝ դուն իս
 դուս կարի, հարենի դուքան ասիս՝ դուն իս կրակ
 ավի: Ո՞ւր է, ո՞ւր, պիտի գիզենան սվ իս, վուր վու-
 տէմէտ քաշ անին քիզ: Աշխարքը քոռացիլ է ու քիզ
 համա հիշա ու հանգիստ գեպնի էրեսին ման իս դա-
 լի. ա՛յ, խուզիմ քու գլուխը, լաւ մարթ դուն իս, հրա՛:
 Փուրդ վուր հասապրիլ իս ու էլ օշովու այնուսդ չիս
 դցում. գնամ էս սաաթիս թէ աշխարք չգցիմ վուր
 ինչի համա էիր օլըբում Միխօի անդճնիքը, 'ես Գիծ-
 Մօղին չիմ ըլի: Գնամ, գնամ, չիտ՝ ուզի 'ես ձիր ճա-
 շը. գնամ, ման հալալ ու ջան ազատ ձիզմէն: Գնամ
 խիզճ Օսէփին ասիմ վուր իր գլխի շարէն տեսնէ,
 թէ չէ վայ նրա միխիը ձիր ձեռին: (Ահգերէն պարե-
 լով:)

Բրնխամա պուտրա, պուտրա, պուտրա... Չարլմլթ:
 Գուրս է գնում գիմացի դոնից:

Տ Ե Ս Ի Լ Է

ՓԱՐՄԻՂ, ՔԱԼԻ

ՓԱՐՄԻՂ

Ա՛յ, գնալը ըլի ու գալը վուշ:

ՔԱԼԻ

«Ծին ծղալի դա ուկան խմալի,»*) հըա՛...

*) Վրացերէն է:— Առջևդ ջուր, ետեղ սուր:

ՓԱՐՄԻՂ

Պատուհաս է անիծածը՛:

ՔԱԼԻ, լալով:

Պատիժ է ստիզծի ինձ համա Աստուճ, էլի:

ՓԱՐՄԻՂ

Ջհանդամը իր գլուխը, ինչ անում է էստի, թնդ
 անէ, թար խալխումը բէարբու չըլի անում:

ՔԱԼԻ

Դիփ քու միզ է, ինչ իս անմիզ էրես շանց տալի.
 նրա լպտած գլուխն էլ:

ՓԱՐՄԻՂ

Է՛ստի մտիկ, 'ես իմ նրան էրես շանց տալի. մէ
 Աստճու բարգուլթին է գլխիս, էլի՛. ուրոր գնամ, չը-
 վաքի պէս պիտի հիդս ըլի:

ՔԱԼԻ

Ախար չիս կանա մէ օր խտակ վուտը կարի
 նրանն էսգանց:

ՓԱՐՄԻՂ

Վուր փողոցումն էլ ճամփա շտայ ինձ: Ո՞ւզում
 իս մէ մատը միզը չիսէ քախկումը՛:

ՔԱԼԻ

էլ մի խօսի հիզը:

ՓԱՐՄԻՂ

Վուր գլխամեռ ուզում է նրա հիզ խօսիլը. խօսիս,
 չխօսիս, նրա համա դիփ մէկ է:

ՔԱԼԻ

Բաս ինչ պիտի անինք ախար:

ՓԱՐՄԻՂ, առանձին:

Չահրումար ու Աստճու կրակ. ձիր ուստ գալու
 սաաթն էլ անիծվի:

ՔԱԼԻ

Չիս իմանում:

ՓԱՐՍԻՂ, չարանալով:

Տօ, դուն էլ ինչ իս ձիու ճանջի պէս կպի, իմ ջիւղն էլ է հերիք ինձ: (Զեռքը ձեռքին խփելով): Գնաց, էլի. անշնուք իս, անշնուք:

ՔԱԼԻ

'Նս ինչ անիմ, վուր դուն փուղը լանահիս. արա մէ հազար թուման կու տէիր, տիս կու'լէր թէ չէ:

ՓԱՐՍԻՂ

Նրա հօրն օղորմի. հազարով իս նրա վրայ լաւը կայ:

ՔԱԼԻ

'Նս գիգիմ ումնոր ասում իս. դէ, բի, էլի, էսօր էւէտ շինինք:

ՓԱՐՍԻՂ, ծաղր անելով:

Բի, էլի. ինչ հիշտ-հիշտ ասում իս. թ-թան ծան է վուր մէ խփելով հազարը մէտի վէր թափի: Իմ մանէթնիրն էտէնց էժան չգիգենաս. ամեն մէկի համա քսան ջէր հօրիս ծախիլ իմ:

ՔԱԼԻ

Մուլափ տայ էն թաւափիան Սալամէն. հէստի շինիմ, հէստի շինիմ, խաչը գիգենայ, վուր աշխրբի լափը գլուխն ածիմ. մէ ոաստ դայ:

Բարկացած դուրս է գնում ձախ դռնից:



Տ Ե Ս Ի Լ Ը

ՓԱՐՍԻՂ, մենակ:

Վուրն ինձ թամաշա արա... Մնւափ, Օսէփ, հէստի օր կանգնեցնիմ գլխիս, վուր դիփ (Աջ ձեռքի բծամատը ցոյց տալով): Էս էսդադա ըլիս լաց ըլում: Չատ վուխտ էր մահանա էի պառում ու Աստուծ ուստ էրի: Էն հմպարտ-հմպարտ վուր խօսում իս, տիս թէ վուտիս տակը վննց իմ թաւիլ-թաւիլ բերում քիզ: Ինձ փինաշի Մաթուսի վուրթի Փասօ կ'օսին: Մէ-մէ ախմախ էլ վուր ասում է թէ՛ փլանը ես փոտանը վունչիչ շունէր, կ'օսէ, ու մէրաչ մարթ վննց դառաւ, կ'օսէ. էսէնց դառաւ, այ: Էս աշխարքը միղրէ կարաս է. ով շերեփը ձեռին՝ մէկին դէսը կու բօթէ, մէկէլին դէնը, ու շատ փային ինքը կու փախցնէ, դօշաղը նա է, անումն ու պատիւն էլ նրանն է. ամա ով հմպարտ Օսէփի պէս բողբոքը կու կանգնի ու հիրթին կու մնայ, դառաւ իշի մարտիրոս:

Մտնում է Գարջօն դիմացի դռնից:

Տ Ե Ս Ի Լ Թ

ՓԱՐՍԻՂ, ԴԱՐՉՈ

ՓԱՐՍԻՂ

Դարջօ... Էս ինչ չուստ էկար:

ԴԱՐՉՉ

Էստի էլէաւ աասա էկաւ Միխօն, աասա վուր կանչում իս:

ՓԱՐՍԻՂ

Հան, խիստ հարկաւուր բան ունիմ: (Նստում է:) Էս սուր իս էլի:

ԴԱՐՉՉ

Կօմբօստինց Եագօրի մօղ. մէ քիչ նիսիա կէր նրա վրայ, էս շափթին օխաը շէր իմ էլի:

ՓԱՐՍԻՂ

Խիստ ջանջալն է. իժոճւմ, էրլիս:

ԴԱՐՉՉ

Վան, ջանը շէր դուս պայ: էլ դուքնէմէն չհիւսացայ. ինչ մուշտարի էկաւ, նրա մօղ էրեսս ժէշտ շինեցի, Աստուճ գիղեհայ, գիփունի մօղ նուր մէկանց ուղեցի. չարէն կարվեցաւ, ամութու վուրղիւր էլաւ ճարից ու էրիս:

ՓԱՐՍԻՂ

Է՛տէնց, վուրթի, էտէնց. էտէնց ժաժ արի վուր մարթ գառնաս: Ա՛յ, ինճ թամաշա արա, վուրթի. մէ օր կէր գլխումս փամփիլով Փասօ էին կանչում, իժում դառայ Փարսիղ, իժում աղա Փարսիղ, հիմի Վասիլ Մաթվէիչ: Քու տօլ վուր էի, ինչ էի՛ հս. ամա հիմի մարթ իմ, ինչ մարթուն պիտի. իմ մամա Մաթուսը վուր սաղ ըլի, նա էլ կու վըրվի: Էսասուք էնդուր իմ ասում, վուր դուն էլ չալիչ գաս՝ Դարչի Կիրիլիչ գառնաս, քու մամի պօղօսկապանութիւնը գիփունանցը մտէն պցիլ տաս: Վուրթին էս հանգի բան է աշխրքումը. հօր անումը կու շինէ էլ, կու քանդէ էլ:

ԴԱՐՉՉ

Դուն էլ լաւ իս տեսնում, Վասիլ Մաթվէիչ, վունցոր չալիչ իմ գալի: Աստուճ գիղեհայ, դուքանը վուր րաց իմ անում առուակհան, էլ Միխօի գալուն չիմ մնում, աւիլը վիր իմ կալնում,՝ հս իմ աւիլում, ու մուշտրու մօղ վունցոր ժաժ իմ գալի, խօ դուն էլ տեսնում իս:

ՓԱՐՍԻՂ

Տեսնում իմ, տեսնում, վուրթի, ու էնդուր էլ սիրում իմ քիղ. էս տարին էլ թամամի, էկող տարի ննգիր կու շինիմ քիղ, Աստճով. փուղը իմը, ջանը բունը, վուրթի:

ԴԱՐՉՉ

Աստուճ վուրթիքը գօրացիէ,՝ հս էլ քու ճրաքն իմ. միթամ մէ ծառ իմ՝ անգիլիս, ումիկ ունիմ վուր լաւ խէր անիմ ու դուն էլ վրէս ուրախանաս: (Աջ ու ձախ նայելով եւ մտերմաբար:) Էն փթած ապրանքն էլ սաղացրի, ս՛յ:

ՓԱՐՍԻՂ

Է՛հ:

ԴԱՐՉՉ

Աստուճ գիղեհայ:

ՓԱՐՍԻՂ

Էս սում վրայ:

ԴԱՐՉՉ

Մէ սղնաղեցի էր: էրկու թօփ լաւը խառնեցի մէշն ու աճկիրն արլանդվա արի. դէ, տանէ հիմի ու վայ աէր կանչէ:

ՓԱՐՍԻՂ

Իժոճւմ, նիսիան:

ԴԱՐՁՈ

Վահ, գիժ իմ. վնւր օրն իմ փթածը նիսիա ծախի, վուր հիմի էի ժաժ էկի էնէնց: Մէ իմքին սուտ պակսեցրի, խաթրիչուն միթամ, ու փուղը թամամ առայ. գնայ վուրդիոր իրն ասէ, էնդի էլ իմն ասէ:

ՓԱՐՍԻՂ

Այ, դօշաղ Դարչօ ջան. էտէնց, էտէնց, վուրթի. 'ես քիզ ասում իմ վուր դուն մարթ կու դառնաս. թանյին, թանյին մարթ կու դառնաս:

ԴԱՐՁՈ

Ումիկ Աստձու: Ուրիչ մէ հրամայէ, Վասիլ Մաթ-վէիչ, է. դուքանը մենակ է:

ՓԱՐՍԻՂ

Ղււրթ, կինաղամ մաէս էր ննգնում. Գուլարինց Օսէփը թէ ձեռաց փուղ ուղէ դուքնէմէն, էլ մէ գրօշ շտաս:

ԴԱՐՁՈ

Վահ, ինչ է պատահի:

ՓԱՐՍԻՂ

Խիստ ջիգրն ունիմ նրանը:

ԴԱՐՁՈ

'ես էլ պակաս ջիգր չունիմ. մէ ասո՛ւ ինչ խարար է. ճշովու վուր մարթահէսար չէ գցում:

ՓԱՐՍԻՂ

Այ, 'ես նրան կու շանց տամ հիմի. նրա առուտուրը մէ շալակ խուտի նման բան է, մէ սալիչէն հերիք է, հրա՛. մէ նմուտումը կու բլբլայ:

ԴԱՐՁՈ

Տասն էլ չիմ խնահի. մէ ասո՛ւ՛ ձեռնէմէս ինչ պիտի գնյ, մնացածը 'ես գիղիմ...
ՓԱՐՍԻՂ

Այ, էս սաաթիս: Դուն ինձ ասո՛ւ, Դարչօ ջան, մէ շափաթ բան ու գուրձէմէտ վուր հիզ ըլիս ննգի ու շատ պտրտելով մէրումը մէ լաւ խնձուրի ծառ ըլիս գթի, էն լաւ թուրաշաուր խնձուր, վուր դորդի պէս կիտած ըլի, վուր դուն էլ ասիս թէ՛ հաս՛, էս էի ուղում, ու ինչու գնաս տուն վուր քթուցը բերիս, տեսնիս վուր քու հալալ քթուցը մէ անշուր մարթ բան ըլի ուղի տանէմէտ ու էկիլ ըլի քու գթած ծառը թափ ըլի ալի ու էն քու գողալ խնձուրը տանում ըլի, էն էլ քու քթուցով...
ԴԱՐՁՈ

Վնյ, վնյ, վնյ, վնյ...

ՓԱՐՍԻՂ

Օրէնք է:

ԴԱՐՁՈ

Ղււրդանցի օրէնք է:

ՓԱՐՍԻՂ

Դուն ինձ ասո՛ւ ինչ կ'օնիս:

ԴԱՐՁՈ

Վն, էնդի էէտ կինծումը կու խփիմ ու ձեռնէն կու խլիմ խնձուրն էլ ու քթուցն էլ:

ՓԱՐՍԻՂ

Ու թէ խնձուրը չկանացի:

ԴԱՐՁՈ

Վահ, քթուցը էլ մէ նմուտ չիմ տուր տա. էնդի

էւէտ վէր կ'օծիմ. կու թո՞ղնիմ վուր իմ ամազը մուրթ կորչի:

ՓԱՐՍԻՂ

Ա՛յ, զօրանաւ: Ասում իմ, է, վուր մարթ կու դառնաս: (Յօտենալով): Քիմէն ի՞նչ թախկացնիմ, Դարչօ ջան, տեսնում իս վուրթու պէս սիրում իմ քիզ:

ԴԱՐՁՈ

Գիզէ Աստուծ, վուր 'ես էլ քիզ հօր պէս պաշտում իմ:

ՓԱՐՍԻՂ

Գիզիմ, գիզիմ... Տօ, ախար ախշկաս համա մէ լաւ փեսացու էի գթի, մէ շափաթ աւելի խօսում էինք ու հէնց էն է, բանը պրծած էր, ուզում էինք էսօր-էքուց վրայ բերի. մի ասի դուն՝ էս քու Օսէփը մեր խոստացածի վրայ մէ իմքին աւելցնում է ու իրիգուն ախշկան նշնում է:

ԴԱՐՁՈ

Օ՛հ, հօ, հօ, հօ... ա՛յ, անաստուծ մարթ:

ՓԱՐՍԻՂ

Արա՛, իժում էն էլ սում փուզով. իմը կու՛լի, էլի:

ԴԱՐՁՈ

էտ է, էտ. ինձուրն էլ փախցրիլ է, քու արիվն, ու քթուցն էլ քունն է բանեցնում, էլի:

ՓԱՐՍԻՂ

Բնո, 'ես էլ էտ իմ ասում, Դարչօ ջան, է. խընձուրը տարաւ՝ նա փայգա, քթուցն էլ հիզը չկորչի ասում իմ:

ԴԱՐՁՈ

Վանհ, վսնց կանայ:

ՓԱՐՍԻՂ

Ո՛վ գիզէ, նրա բանը ուրիշ հանգն է էրևում. մէկ էլ տեսար ախշկան փսակից ու սուփրէն վիքազի՛ց. իժում գնն ու հիզը գնալի արա, էլ ի՞նչ կու դուս գայ:

ԴԱՐՁՈ

Վանհ, կ'էհամ էս սաաթիս էւէտ գ'ուզիմ:

ՓԱՐՍԻՂ

'ես Միխօին զրգեցի. ամա ումիկ չունիմ վուր էս սաաթիս էւէտ սայ, ու քիզ էնդուր ապսպրեցի վուր մէ լաւ օմքին գթնիս, փուզիրս չկորչի:

ԴԱՐՁՈ

Մէ անգլօկատ գիզիմ, մէ անգլօկատ, Վասիլ Մաթ-վելիշ, վուր 'երիք սաաթումը դուքանը կու մհրիլ տամ:

ՓԱՐՍԻՂ

Ղօշազ, ղօշազ, Դարչօ ջան. 'ես քիզ ասում իմ վուր մարթ կու դառնաս:

ԴԱՐՁՈ

Լաւ ուսաի աշխիտը լաւը կու՛լի, էլի:

ՓԱՐՍԻՂ

Դէ, գնն, մի ուշացնի:

ԴԱՐՁՈ, գնալով:

Մէ սաաթ չիմ քաշեցնիլ սա, քու ազիզ արիվն իմ ասում:

ՓԱՐՍԻՂ, յետեից:

Գնն, Տէր ընդ քիզ:

Դարչօն դուրս է գնում գիմացի դռնից:

Տ Ե Ս Ի Լ Ժ

ՓԱՐՍԻՂ, մենակ:

Դէ, գնահ, Օսէփ, ինչ ձեռնէմէս գայ, հիմի էն արա: Տասը մում պիտի վառիմ քիզ համա, վուր հոքիս ու մարմինդ գցեցիր ձեռս ու իմ ճանգը ննգար:

Դուրս է գնում աջ դռնից հաշուեմատեանը հետը տանելով:

Տ Ե Ս Ի Լ ԺԱ

ՔԱԼԻ, յետոյ ՍԱԼՕՄԷ

ՔԱԼԻ, դուրս գալով ձախ դռնից:

Մտիկ, մտիկ էս թաւափիւնին: (Բաց անելով լուսամուտը, դուրս է նայում եւ կանչում:) Է՛ստի արի, քան, էստի, չի՛ս իմանում. Սալօմէ, Սալօմէ, քան, Սալօմէ... Հան, 'ես իմ, 'ես իմ կանչում. մէ սաաթ էստի արի: (Հեռանում է լուսամուտից:) Գալիս է... Մնւլափ տու դուն, բէհայեա, չէ էլ ամանչում. թէ աչխրքի լափը գլուխդ չածիմ ու կու տեսնիս:

ՍԱԼՕՄԷ, նորաձե տարազով շքեղ հագնուած եւ ձեռքին հովանոց, մտնում է դիմացի դռնից:

Ի՞նչ էիր կանչում. բարի լուս, վո՛ւնց իք:

Ձեռք են տալիս միմեանց:

ՔԱԼԻ

Փառք Աստձու, համեցէք, նստի: (Նստում են): Ախրկատ նշնեցիր:

ՍԱԼՕՄԷ

Հան, Քալի ջան, քու նինօի բախտաւուրութենին էլ Աստուձ արժանի անէ, իրիգուն նշնեցի: Հէստի փեսայ ճարեցի, հէստի, վուր կ'օսիս խօխօք ըլի. ուրախու էլ վուտիս վրայ չիմ կանացի կանգնի:

ՔԱԼԻ

Էրեսդ պո՛րզ կենայ:

ՍԱԼՕՄԷ, այլայլուելով:

Ի՞նչ խաբար է, չիմ իմանում:

ՔԱԼԻ

Մէ լաւութիւն էիր պարտ, արիք, էլի:

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ իմ արի:

ՔԱԼԻ

Էլ ի՞նչ պիտէիր անի, փեսիս ձեռնէմէս խեցիր ու միթամ վունչիչ, էլի:

ՍԱԼՕՄԷ

Արան, Քալի ջան, էս խօսկ է, վուր դուն իս տանում:

ՔԱԼԻ

Սո՛ւ, սո՛ւ, Սալօմէ, վուր ի՞նչ անց է կացի, դիվ մէ-մէկ գիղիմ:

ՍԱԼՕՄԷ

Վո՛յ, քօռանամ 'ես. էտ ինչիր իս ասում, Քալի ջան:

ՔԱԼԻ

Ձէ, չէիր գիղի վուր 'ես էի տալի՛:

ՍԱԼՕՄԷ

Աբա էտ ի՞նչ խօսկ է. դուն ինձ բան ասիլ իս:

ՔԱՆԻ

Նա վուր շիմ ասի, ասողը խօ անաւ:

ՍԱԼՕՄԷ

Ինձ օշով վունչիչ չէ ասի:

ՔԱՆԻ

Սուա էլ վուր խօսում է, ուցխօ չէ, քան:

ՍԱԼՕՄԷ

Սուաը սատանինն է, ինչիւր իս շաւիր գցում վրէս:

ՔԱՆԻ

Արա դուն ու քու հօքին, դրնւսա ասա. չէիր իմացի վուր իս էի տալի նրան ախշիկ:

ՍԱԼՕՄԷ

Ինչ անիմ վուր իմացիլ էի. իր օրումը տղի համա տասը կու յիշվի, մէկը գուղէ:

ՔԱՆԻ

Տխ, ախ վուր գիգացիլ իս, էլ սուա սւր իս խօսում:

ՍԱԼՕՄԷ

Ուցնաւուր իս, քան. գիգացիլ իմ. մանրթ իս դրգի ինձ մօղ թէ օմքնու բերնով ապսպրիլ իս, վուր իս փլանին ախշիկ իմ տալի, դուն շաան: Ախար, իս ինչ միղ ունիմ էտումը. վունցսր իս իմ գիգացի, էնէնց էլ դուն իս գիգացի... Ինձ վուր քիքս իս գալի, էլ դուն սւր էիր խօսում ու մարթիք մէչ գցում:

ՔԱՆԻ

Աւշի գամը իս խօսեցրի:

ՍԱԼՕՄԷ

Աւշի գամը մարթ տափումը շատ ծաղիկ է տեսնում, ամա կարողը կարում է ու տանում է:

ՔԱՆԻ

Վուր մուլով շովիւր, էգէրա իս էի կարում:

ՍԱԼՕՄԷ

Իծում, ինչի շկարեցիր, քան:

ՔԱՆԻ

Տուր տվիր գանն. միր խոստացածի վրայ էլ կունձի փուղը վուր աւելցրիր ու իրան տվիր, հէնց գիգիս, չիմ գիգի:

ՍԱԼՕՄԷ

Վոյ, քօսանամ իս, Քալի շան, արա էս վունց իս ասում. դուք ինչ էիք տալի գանն:

ՔԱՆԻ

Ինչ էինք տալի, միթամ չիս գիգի. ութ հարուր թուման:

ՍԱԼՕՄԷ

Այ, Տէրը բարի տայ քիգ. մինք վուր օխտը հարըն աւելի շինք տվի, էս անւլցնիլ է:

ՔԱՆԻ

Գիանիս, գիանիս, գէմ էր բերում:

ՍԱԼՕՄԷ

Վոյ, իմ նատօն պրծնի ամեն շարէմէն, վուր դուրթ իմ ասում:

ՔԱՆԻ

Էս է վուր աւտացի:

ՍԱԼՕՄԷ

Ինչ է ասում, քան. իմ ախշկայ անումը սնւա իմ օրթում ուտում:

ՔԱՆԻ

Բաս չէ ու դուրթ իս ուտում. ութ հարուրն էթոզ ու օխտը հարուրն ուղից:

ՍԱԼՕՄԷ

Նոյն ինչ անիմ էտումը, քան հալըաթ քու ախշկանն չհաւնեցաւ ու էնդուր չուզից:

ՔԱԼԻ

Ի՞նչն է պակաս, վուր չհաւնեցաւ. քու ախշիկը կու՛լի լաւը, թաւալափիան, չէ էլ ամանչում:

ՍԱԼՕՄԷ, վեր կենալով տեղից:

Թաւալափիան էլ իս ու չիս էլ գիղի. էտու համա էիր կանչում, քան: Քու ախշկայ հատն ու կտուրը կու՛լի իմ նատոն. Նոյն ինչ անիմ, վուր քու ախշիկը լէն բերան ունենայ:

ՔԱԼԻ

Լէն բերան էլ ունիս ու չիս էլ գիղի, բէհայեա. քու լպստած ախշիկը կու՛լի լաւ:

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ է ասում՝ լպստած. նրա քաղաքավարի խօսկ ու ջուղարին էլ կու սազ գայ: Քու ախշկան ասիս, վուր գիփունքն ասում ին թէ տուտուց է, ու գրուտը թէ գ՛ուզիս, հէնց էտու համա չուզից:

ՔԱԼԻ

Հն, քու գլխի պատուիլը գիղենայ. խիղճ աղին ճանգիլ իք ու խափում իք. մէրաչ շտաք ինչոր խոստացիլ իք:

ՍԱԼՕՄԷ

Միք բանը մինք գիղինք: Վուտս կոտրվիլ էր ու չէի էկի էստի:

Գնում է մինչեւ դուռը:

ՔԱԼԻ

Ինչու բողազը պարտկումը վուր խիխտում իք, մէրաչ չհամբրիք:

ՍԱԼՕՄԷ, յետ դառնալով:

Պարտկումն ինք թէ պարտկումը չէ, ձիգ պէս գոյնսլի փուղիլը խօ չունինք:

ՔԱԼԻ, վեր թռչելով տեղից:

Գուզ էլ իս ու չիս էլ գիղի. չիքիլէն վրէտ կու պատուիմ, բէհայեա, թաւալափիան:

ՍԱԼՕՄԷ, մօտեցնելով իր չիքիլէն:

Արա փօրցէ, էլի, փօրցէ, տեսնիմ վո՞ւնց իս պատըռում: Մինձի մինձ չէ պատուովում, քան, (Ձգուանքով:) փի՛նաչի Մաթուսի հարսը:

ՔԱԼԻ, երկու ձեռքով չանչ անելով:

Ը՛հ, խո՛ղիմ քու բէղովաթ գլուխը. սա էլ վուր օմքնու մասխարա ըլի գցում, բանգմնչու ախշիկը. կնապկտրած, աննամուս:

ՍԱԼՕՄԷ

Կնապ-կտրածն էլ դուն իս ու աննամուսն էլ: Հաղար վուր ճիկըվիս, գիփունքը գիղին վուր աշխարք ու Նրգիլ իք թալի ու էնդով առաչ էկի. քու դածումսլա արած գլուխն էլ խուղիմ:

ՔԱԼԻ

Մէ մալիկ էս թաւալափիանին... (Յարձակվում է եւ չիքիլէն պատուում:) Կնապ-կտրած...

ՍԱԼՕՄԷ

Քան, քան, քան...

Բռնում է Քալինի կաւքը եւ քաշքշում:

ՔԱԼԻ

Քան, քան, քան, քան...

ՍԱԼՕՄԷ

Մէ մաղ չիմ թողնի գլխիս...

Ապշած նայում է ձեռքումը մնացած կաւքին:

Տ Ե Ս Ի Լ Ժ Բ

ՆՐԱՆՔ, ՕՍԷՓ

ՕՍԷՓ, մտնում է դիմացի դռնից:

Վան:

ՔԱԼԻ, խլելով Սալօմէից կաւքը:

Վո՛յ, քոռանամ 'ես:

Ամօթանար դուրս է վազում աջ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ

ՍԱԼՕՄԷ, ՕՍԷՓ

ՍԱԼՕՄԷ, չիքիլէն ուղղելով, առանձին:

Մայմուն...

ՕՍԷՓ

էս ի՛նչ խարար է:

ՍԱԼՕՄԷ

Աստուծ վնչ գիգէ իմ գլուխը. քուչումը ինձ համա միամիտ գնում էի, հայ-հարա դիվիր կանչից ու չիքիլէն գլխիս պատուտից. փեսիս ձեռնէմէս ինչի՛ խլեցիր, կ'օսէ:

ՕՍԷՓ

Չատ լաւ էլ է արի, աճկտ էլ է հանի. էտ էն գիգենայ վուր ինձմէն թաքցրիր ու առանց ինձ վիցը օխտը չի՛նեցիր:

ՍԱԼՕՄԷ

Վուտս կոտորվիլ էր ու աուն չէի եկի էս քար ու

քանդ տանը. միթամ էրես պահեցի. քանդվի ու բրիչակ բլի սրանց տունն էլ ու տիղն էլ: (Զիքիլի պատուածը գնդասեղով կպցնում է:) Աճկը հանեցի, 'ես էլ կաւին գլխէն վէր բերի. գնայ վուրգիտը իրն ասէ, էնգի էլ իմն ասէ: Մէքաչ վուր դուս փախաւ. օշով չիմանայ միթամ, վուր կաւքնիրն էլ էնէնց դալը ունէ, վունցոր ամեն բան:

ՕՍԷՓ

Ինչի՛ գեգինը չէ պատուվում ու դէվէր չէ տանում ինձ էս սաաթիս, քիզ էլ հիզը:

ՍԱԼՕՄԷ, լաց լինելով:

'ես ի՛նչ միզ ունիմ, քմ:

ՕՍԷՓ

Քնիկըցու կնգան թամաշա արէք. էտ ի՛նչ է քու հալը: Գնան, գնան, վուր էլ օմքին շտեսնէ քիզ էսաի. քիմէն մէ բալումը չիմ ու էրկուսումը. գնան, Աստուծան անգանչաք արա, վուր կէսօրը կէսգիշեր չինէ ու քուչէքը մութն ու խաւարով լքցնէ, վուր օշով շտեսնէ թէ գլխիս պատուած չիքիլա ունիս:

ՍԱԼՕՄԷ, աչքերը սրբելով:

Վայ իմ միխկը քու ձեռին:

Գուրս է գնում դիմացի դռնից:

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ

ՕՍԷՓ, մենակ:

Ա՛խ, Աստուծ, էս ի՛նչ հանգն իս ստիղծի աշխարքը. մէ ցաւ վուր տալիս իս մարթու, մէկէլն էլ հիզն

իս վրայ բերում, վուր ինչրու մէկիմէն աղատվի մարթ, մէկէլը դռանն է կանգնած, վուր պակասը թամամ անէ: Իմ պարտկը հերիք չէր, վուր կընդդե- րանց կուխն էլ վրէն աւելցրի՛ր:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ե

ՕՍԷՓ, ՓԱՐՍԻՂ

ՓԱՐՍԻՂ, մտնելով աջ դռնից, բարկացած:
Բնս 'ես մարթ չիմ ըլի...
ՕՍԷՓ

Բարի լուս, պարուն:

ՓԱՐՍԻՂ

Էլ ինձ վունց քու բարիլուսն է հարկաւուր, վունց քու Աստձու բարին: Էկիլ իս կնգատ քօմագ անելու, Էլի. սրի, Էլի, սրի, դուն էլ ինձ ծեծէ, պակասը թամամ արա, էտ էլ իմ փուղի շահը կու՛լի:

ՕՍԷՓ

Հանգստացի, պարուն, ինչի՛ր իս ասում:

ՓԱՐՍԻՂ

Մաղիբը վուր գլխէն գջլտիլ է, էս անպատու- թի՛նը կու բնխչիմ 'ե՛ս:

ՕՍԷՓ

Ի՞նչ է մնացի բախչելու, հէր օխնած, վուր բախ- չիս. նա նրա չիքիլէն է պատուի, նա էլ նրա կաւին է վէր բերի:

ՓԱՐՍԻՂ

Աբա չիքիլէն կաւքներու մաղերու հիդ գու քմյ:

ՕՍԷՓ

Է՛է, ձեռը վիկալ, քու հօրն օղորմի. կընդդերանց կուլը ի՛նչ քու լայիդ, ետ իմ լայիդ բան է:

ՓԱՐՍԻՂ

Գուն էտէնց ասա ու տիս թէ լիօրի ասողին չիմ կպցնի 'ես ձիդ:

ՕՍԷՓ

Գնջացի, գնջացի, պարուն Փարսիդ:

ՓԱՐՍԻՂ

'Ես ձիդ գնջանալ կու շանց տամ:

ՕՍԷՓ

Ախար, վուր քիդ չէ սազ գալի էտ բանը՛:

ՓԱՐՍԻՂ

Չիքիլէն պատուից, կ'օտէ. չիքիլէն ի՛նչ է, մէ առ- նովի իմքին է, Էլի. շատ ըլի նրա գինը էրկու մանէթ:

ՕՍԷՓ

Է՛է, հէր օխնած դուն էլ, վունց թէ քու կնգայ կաւքնիլն է Էլի մօրուց, ի՛նչ իս էտու համա նիդա- նում: Էրկու մանէթանուց չիքիլումը էրկու զրօշանուց լէնտ է կարվի վիքչն, Էլի... Էնդի չէ՛ էն լէնտը՛, կպցնէ ու կապէ, Էլի:

ՓԱՐՍԻՂ

Չէ, չէ, 'ես էս անպատուութի՛նը չիմ բախչի:

ՕՍԷՓ, առանձին:

Ա՛խ, Աստու՛ձ:

ՓԱՐՍԻՂ

Մնւլափ տվէք հալա:

ՕՍԷՓ

Գէ, ի՛նչ քէփդ տայ, է՛ն արա, ախպէր... 'Ես էս- տու համա լսօ չիմ էկի. Միխօին զրգիլ էիբ...

ՓԱՐՄԻՂ

Հնա, բերբեր փուղոս, իս տու էս սաաթիս:

ՕՍԷՓ

Ի՞նչ հանգն իս խօսում, պարուն. քու բիջ խօ չիմ, վուր վրէս բղաւում իս. սւմ վրայ իս բղաւում: Բղաւիլ չըլի թէ չէ, հէսաի կու բղաւիմ վուր լիղուա փուրը ննզնի:

ՓԱՐՄԻՂ

Վահ, փուղը դուն իս պարա ու էլի դուն իս հարբա գալի:

ՕՍԷՓ

Փուղը վուր պարա իմ, գլուխս խօ բիղ վրայ չիմ ծախի: Օրինաւուր հիղղ խօսում իմ, օրինաւուր ջնղար տու, հէք օրնած:

ՓԱՐՄԻՂ

Նս վուչինչ չիմ գիղի. փուղս բերբիլ իս թէ չէ, դուն էն ասա:

ՕՍԷՓ

Վուր օրն իմ քու փուղը կերի, վուր հիմի ուտիմ:

ՓԱՐՄԻՂ

Դէ, բի, էլի:

ՕՍԷՓ

Ախար, էն օրը...

ՓԱՐՄԻՂ

Ախար-մախար չիմ գիղի:

ՕՍԷՓ

Պարուն Փարսիղ, էրազ իս տեսի թէ ինչ խարար է:

ՓԱՐՄԻՂ

էրազ իմ տեսի թէ չիմ տեսի, փուղս տն էս սաաթիս:

ՕՍԷՓ, աթոռ վերցնելով եւ նստելով:

Եանդլիչ իս, պարուն Փարսիղ, եանդլիչ. համեցէք նսալի:

ՓԱՐՄԻՂ

Փիէ:

ՕՍԷՓ

Դուն ինձ սսա՝ մարթ իս ու գլխիս գղակ ունիս ծածկամ թէ չէ:

ՓԱՐՄԻՂ

Դղակ ունիմ թէ չունիմ, փուղս տն էս սաաթիս, հէնց էս սաաթիս:

ՕՍԷՓ

Տօ, գժվիլ իս թէ ինչ խարար է:

ՓԱՐՄԻՂ

Հիմի գիժ էլ ասա. իմ հախն է, 'ես ու իմ Աստուծը:

ՕՍԷՓ

Ախար, էն օրը հինգ հարուր թումանը վուր ավի, դուն չասիլ վուր մնացածը մէ ամսվան էդնէն ըլի, կ'օսէ:

ՓԱՐՄԻՂ, նստելով:

Ի՞նչ անիմ վուր ասի, հիմի ինձ հարկաւուր է:

ՕՍԷՓ

Հարկաւուր էք, ախպէր, էնչախն էւէտ կ'օսէիր, էլ տիղ է տիղ չէի անի. էս նմուտիս վուր ուղում իս, 'ես վճարղի ստիղծիմ, Աստուծ խօ չիմ:

ՓԱՐՄԻՂ

Վուրղիոր գ'ուղիս, ինձ էս նմուտիս հարկաւուր է:

ՕՍԷՓ

Տէր օղորմած Աստուծ: Տօ, էլ մէ ամիս վաղա սըր էիր տալի ու էրկու շահի շահը վրէն սըր էիր դալի էս գլխէն, թէ էտէնց էր:

ՓԱՐՍԻՂ

Ի՞նչ վաղա. արա թուխտ սննիս, հանէ:

ՕՍԷՓ

Վա՛յ, խօսկը թուխտ շէր, էլ ի՞նչ թուխտ էր հարկաւոր:

ՓԱՐՍԻՂ

Նս վունչինչ խօսկ չիմ տլի:

ՕՍԷՓ

Խօսկ չիս տլի. տօ, էս սաաթիս շէր վուր էլի սալի:

ՓԱՐՍԻՂ, վեր կենալով:

Չէ, չէ, վունչիչ չիմ սաի:

ՕՍԷՓ, նոյնպէս:

Օ՛հ, Տէր Աստուծ, էս ի՞նչ տեսայ ու էս ի՞նչ իմացայ: (Մօտենալով փարսիղին:) Է՞տ է վաճառականի խօսկը բաս, վուր գեղնի հիւ հաւարում իս: Մէ խճալաթ քաշէ, է: (Կոնիցը բռնելով առաջ է տանում դէպի հայելին:) Մալիկ, մալիկ, մէ էրեսարքիտ մալիկ. ինչի՞ իս կանանչում ու մաւանում, թէ չիս սաի:

ՓԱՐՍԻՂ

Թո՛ղ, թո՛ղ ձեռս:

ՕՍԷՓ, փարսիղի կուռը ամուր բռնած:

Խճալաանքդ վուր խուրը թաղիլ իս ու հոքմէտ ձեռը վիր իս կանում, մէ էս հալիլէմէն էլ է մայլինց ամանչի, է: Ինչի՞ է պուօշնիրդ դիղնում, ինչի՞:

ՓԱՐՍԻՂ

Տօ, թո՛ղ ասում իմ, է: (Թափ է տալիս կուռը եւ աղատվում:) Կ'օսիս թէ պարտկան տէրը դուն ըլիս:

ՕՍԷՓ

Դուն իս, դուն, պարտկան տէրը. գեղինը մտնիմ էն լաւ է, կանց թէ քու հանգը պարտկան տէր ըլիմ. էլ ի՞նչ մարթ իս դուն յօրէսի դէնը իմ աճկումը. գիղացի վուր վուտի ցիխը լաւ է քի վրայ. փո՛ւ քու նամուսին: էլ ի՞նչ կ'օնիս դուն աճկիր, պուօշնիր, թշիր, մէ ժէշա վիկալ էրեսիտ կպցրու ու էնէնց մանն արի յօրէսի դէնը:

ՓԱՐՍԻՂ

Նս քիղ ասում իմ փուղս ըլի էս նմուտին, թէ չէ վէկսիինիրտ էս սաաթիս տարայ սուղը... էն ախշկատ վուր մարթու իս տալի ու էնդաղա փուղը խոստացիլ իս, իմ փուղերով դանա: Փուղիլը համրիս, տաս ու ինձ դառ ու դարդակ թողնիս:

ՕՍԷՓ

Մի վախենա, մի վախենա, պարուն. դուն էլ վուր աղանչաք անիս, էլ քու փուղը չիմ պահի, Աստուծ մի արասցէ: Էքուց ինչրի էս շախը դիվ մէտի թամամ կու ստանաս ու էքուցվան դէնը էս էրեսը սիւնայ թէ քու էրեսը տեսնէ:

ՓԱՐՍԻՂ

Չէ, չէ, հէնց էս սաաթիս էւէտ:

ՕՍԷՓ

Ա՛րի, ա՛րի, թո՛ղ հէնց էս սաաթիս էւէտ ըլի. ցաւէմէն մարթ քանի շուստ աղատվի, լան էն է: Իս տու էն շարչու բարաթը... Ամա մի տա, դուն ինձ

չիս աւտա, չաժիս վուր ինձ աւտաս. դուն ինքդ վիկալ, սրի հիդս, գնանք էս սաաթիս էւէտ փողոցումը խուրդա անինք ու քու փուղը թամամ վիկալ... Թո՛ղ մէ իմքին դարար էլ անիմ, հաջաթ չէ, էն դարարի դիմնալը հիշտ է ինձ համա, կանց քի մօդ խօսիլը, էնդուր վուր ամեն մէ քու խօսկը հազար դարարի վրայ վաթար է: (Առուժիւն:) Զիս իմանում, քիզ իմ ասում, սրի, էլի:

ՓԱՐՍԻՂ

Հըմ:

ՕՍԷՓ, առանձին, ցածր:

Զանհրումար: (Փարսիդին:) Զարչու բարաթը վիկալ, ասում իմ, չիս իմանում:

ՓԱՐՍԻՂ

Ի՞նչ շարչու բարաթ:

ՕՍԷՓ

Ռոստոմի բարաթը:

ՓԱՐՍԻՂ

Ռոստոմի բարաթը՝ էն բարաթի մօդ դուն ինչ դաւի ունիս:

ՕՍԷՓ

Վո՛ւնց թէ՛ ինչ դաւի ունիմ. էտ էլ խօ խօսկ չէ վուր հաշա իս ուտում. թո՛ւլիտ է, թո՛ւլիտ ձեռիտ:

ՓԱՐՍԻՂ

Իմ ձեռին վուր թուլիտ ըլի, քիզ ինչ դաւի, ախպէր. 'ես դիդիմ ու Ռոստոմը:

ՕՍԷՓ

Դո՛ւն գիդիս ու Ռոստոմը... (Առուժիւն:) Տօ՛, դուն դարթնի հաշա ուալը, թուրմէ գուղ ու աւազակ իս

էլի: Թուրմէ դուրթ ին էլի ասում, ինչ վուր ասում ին քիզ համա: Թուրմէ դուրթ է էլի վուր դուն մարթիք իս թալնի ու էսէնց մօդ արի կայինքդ: Թուրմէ դուրթ է էլի վուր դուն քսանուհինգ օջախ իս քար ու քանդ արի, նրանց մումը հանգցրի ու էնդով քու մումը վառի... Հի՛մի իմ իմանում, հի՛մի, վուր ինչ ասում ին, դուրթ ին էլի ասում... Հի՛մի ամեն բանին կու աւտամ. կու աւտամ վուր էս կուէսլէքը, էս դիվանը, էս սաօլը, էս հալիլէն, քու սերթուկը, քու դղակը, քու շապիքը, ամեն մէկը մէ-մէ մարթ է քիմէն թալնած. սնր իմ օսկրտանքն էլ վրէ՛ն աւելցրու ու պակասը թամամ արա... Խճպտանքդ վուր քար իս շինի ու վունչիչ չիս իմանում, լաւ դիդենաս, մէ օր կու դարթի ու ամեն մէկին՝ ինչ էստի դարսած է, ինչ վրէտ հաքիտ է, ամենին լիզու կու տայ ու մէ-մէկ մէ-մէկ միտդ կու բերէ քու արարմունքը: Գնա՛ ու էնշախը ջո՛ւղար տու քու Ստիդոդին: Փո՛ւ, քու մարթ ասողին էլ ինչ ասիմ:

Գուրս է գնում դիմացի դոնից:

ՓԱՐՍԻՂ, մենակ, բարձրաձայն ծիծաղելով:

Փհա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛... Մո՛ւլափ, մո՛ւլափ, զօ՛ղն էդի գամն է... Տիս թէ ինչ բան իմ բերում 'ես ձիբ գլուխը... (Շարունակելով ծիծաղը:) Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...

Գնում է դէպի աջ կողմի դուռը. վարագոյրն իսկոյն փջնում է:

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Ե Ր Ր Ո Ր Պ

Օսէփի տանը եւրոպական ճաշակով զարդարած շքեղ հիւրասենեակ և նրա ետեւը նոյնպէս շքեղ մեծ դահլիճ, որը բաժանվում է հիւրասենեակից հոյակապ լայն կամարով: Հիւրասենեակի յատակը ծածկած է գորգով, իսկ առաստաղից երկու սենեակներումն էլ կախած են ոսկեզօծ ջահեր վառ մոմերով: Հիւրասենեակի առաջին կարգում [պլանում], աջ կողմը՝ բազմոց, ձախ կողմը՝ ընկողմարան. երկրորդ կարգում, աջ կողմը՝ մեծ հայելի և ծաղիկներ, ձախ կողմը՝ վառարան, որի վրայ դարձեալ հայելի, ժամացոյց և անօթների մէջ ծաղիկ փնջեր. երրորդ կարգում՝ կողմնակի դռներ: Այս սենեակի մէջտեղը՝ սպիտակ սփռոցով ծածկած երկայն սեղան, որի վրայ դրած են մի քանի կանդէլաբրներ վառ ու հանգած մոմերով և 1080ի արկղը իր պարագայով: Կամարի աջ ու ձախ անկիւններում դարձեալ կանդէլաբրներ հանգած մոմերով: Դահլիճի մէջտեղը նոյնպէս սպիտակ սփռոցով ծածկած և կիսով չափ վառ կանդէլաբրներով լուսաւորած մի ուրիշ երկայն սեղան, որի վրայ դարսած են գեղեցիկ վազաներով զանազան քաղցրաւենիք, շաքարիզէն, պաքսիմատներ, պտուղներ, անօթներով ծաղիկներ, շիշերով ըմպելիքներ և այլն ըստ սովորութեան: Խորքում՝ գաշնակ իր բոլորակ աթոռով և լուսամուտներ, որոնց միջից երևում է լապտերներով լուսաւորած պարտէզը: Երկու սենեակներումն էլ, ուր

հարկն է, աթոռներ, բազկաթոռներ, փոքրիկ սեղաններ զանազան զարդարանքներով, վառ ու հանգած լապտերներ, ծառեր, ծաղիկներ, պտուկներ և այլն: Բոլոր դռները, լուսամուտները և կամարը զարդարած են թանկագին դրապրիներով և վարագոյրներով:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՆԱՏՕ, մենակ, գեղեցկապէս զարդարուած: Վարագոյրը բացուելիս, աջ կողմը կանդնած, մեծ հայելու առաջ ուղղվում է և կիսածայն երգում եւրոպական մի եղանակ. յետոյ հանում է ծոցից մի փոքրիկ լուսանկար և սկսում է հետը խօսել հայելու մէջ:

Ա՛խ, դ՛ս՛ւշկա, դ՛ս՛ւշկա: (Լուսանկարը սեղմում է կրթօրին և համբուրում:) Մ՛օն շէք, ս՛րի տանցալատ անիւր: (Լուսանկարի հետ սեղանի շուրջը պար է գալիս պօլկա:) Տրա, լա, լա՛... տրա, լա, լա՛... տրա, լա, լա, լա՛... տրա, լա, լա՛... (Նստում է աջ կողմը,) Ո՛ւհ, դաթրեցայ: (Չննում է լուսանկարը և իւրաքանչիւր անգամ համբուրելով:) Սա՛շա, Սա՛սէշկա, Սա՛շէնկա, Սա՛շուրկա, Սա՛շուրէշկա... (Նորից զննելով:) Պատի հոքի իս դրուստ: Ինչի՛ իս էտէնց սիրուն. սիւ աճկիր, իմ աճկիրն էլ սիւ է. բարակ ունքիր, (Իր յօնքերը շօշափելով:) իմ ունքի նման է. պատի կօկօր բիւիւր, 'ես վուր բիւիւր չունիմ... Դ՛նն սիրուն իս թէ 'ես:—2է, 'ես սիրուն իմ:—2է, 'ես իմ սիրուն:—2է, դ՛նն իս սիրուն:—

2է, 'ես իմ սիրուն... (վեր թռչելով տեղից:) Աբան, արան...

Վազում է դէպի նոյն հայելին, որի մէջ իրան համեմատում է լուսանկարի հետ: Ալէքսանդրը մըտնում է դահլիճի աջ կողմից, գլխարկը ձեռքին:

Տ Ե Ս Ի Լ Բ

ՆԱՏՕ, ԱԼԷՔՍԱՆԴՐ

ՆԱՏՕ, չնկատելով Ալէքսանդրին:

2է, դուն իս սիրուն, դուն: (Եռանդով համբուրում է լուսանկարը: Ալէքսանդրը ծածուկ մօտենում է Նատօին և նոյն եռանդով պինդ համբուրում է: Նատօ, վախեցած:) Ա՛խ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, ողջունելով:

Դուն իս սիրուն, դուն, Նատանչա, մա շէր Նատաշա: ՆԱՏՕ

Ա՛խ, մօն շէր Սանչա, ինչ հանդի վախեցրելը ինձ: ԱԼԷՔՍԱՆԴՐ, գրկելով:

Ա՛րի, մէկ էլ պաշ անիմ, կու անց կենայ: (Համբուրում է: Դուն էլ պաշ արա, է՛:

ՆԱՏՕ, համբուրելով:

Ա՛յ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Էտէնց, ա՛յ. 'ես ուրիւր լաւ չիմ էա թխտի վրան: (Գլխարկը վայր դնելով և Նատօի ձեռքը բռնելով:) Էս ինչ խաբար է... լօտօ:

Նատում են աջ կողմը բազմոցի վրայ, այնպէս որ Ալէքսանդրը գտնվում է Նատօի ձախ կողմը:

ՆԱՏՕ

Մօդ ին էլի շնահաւուրելու: Բախչէն լիքն է դօնադներով:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Ա... մադամ դէդիդան, մադամ մամիդան, մադամ ձալօ... Դուն էլ կու սարքիս էս հանդի վէշէրնիր, Նատաշա:

ՆԱՏՕ, բմծիծաղ տալով:

Հը, հը... մինք էսէնց վէշէրնիր շինք սարքի, մօն շէր Սանչա... սէ մօվէ թօն: Մինք տանցավանի վէշէրնիր կու սարքինք. էրկու շարթէնը մէ ջէր, ժուր ֆիքս, հինգզափթէքը կամ 'երկըշարթէքը. վուրը լաւ կու'լի, 'երկըշափթէն լաւ է, հըն, Սանչա...

ԱԼԷՔՍԱՆԴՐ, առանձին, երեսը ծամածռում է:

Վանցոր գ'ուղիս, շէր Նատաշա. գ'ուղիս ամեն շափաթ:

ՆԱՏՕ

2է, էրկու շափթէնը մէ ջէր լաւ է: Ա՛յ, Սօնիշկէն, հիմի վուր մադամ Զանրինսկայեա է, նա էլ էրկու շափթէնը մէ ջէր ունէ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Լան, լաւ, Նատաշա:

ՆԱՏՕ

'երկըշափթէքն, ա՛յ, Սանչա, ու հինգզափթէքը Կուլժօկումը տանցաւատ կ'օնինք: (Ալէքսանդրը, առանձին, նորից ծամածռում է երեսը:) Ամեն հինգզափթէ, ա՛յ, Սանչա:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Խիստ իս սիրում Կուլժօկը, Նատաշա:

ՆԱՏՕ, արագ-արագ եւ ձեռքը Ալէքսանդրի ուսին:

Կռուժօղին սիլ շի սիւրի. էն հանգիլ տիղը կընլի վուր մարթ շսիւրէ: Էն էրզէն զալէքը, շէր Սաշա, էն բուզուարը, էն օթախնիւրը, էն դադա ախշկիւրը, էն մուզիկէն, էն զուքսը, ախ... (Գրկում է:) Տանցաւատ կ'օնիւր, կու դաթիւր, տուն կ'էհանք հալիլի օթախը, էնդի կու նստիւր, կու դնջանանք, կու խօսիւր, կու ծիծաղիւր...

ԱԼԷՔՍԱՆԳԻ

Իժում էլի տանցաւատ կ'օնիւր, էլի կու դնջանանք, էլի կու խօսիւր, էլի կու ծիծաղիւր:

ՆԱՏՕ

Պրէլէստ պրօստօ: (Համբուրում է:) Լաւ կու հանքնիւմ, լաւ կու դնքիւմ, ա լա դէքնիէր մօղ, վուր դիվունքն առում ըլին թէ՛ մախի, մախի, մօսիօ Մարմարովը ինչ կնիկ ունէ: Մէկ էլ, Սաշա ջան, ուրփաթնիւրը արօնիւմէնտ կ'ունենանք տէաարումը:

ԱԼԷՔՍԱՆԳԻ, առանձին, կրկին ծամածուկով երեսը:

Հիմի էստունը:

ՆԱՏՕ, շարունակելով:

Վերլովն, այ, ձախ կուռը, Ֆուայիէն մօղիկ է էնդի:

ԱԼԷՔՍԱՆԳԻ

Չափթէնը վուր էրկու արօնիւմէնտ ունենանք, ուրիւր լաւ շէ, նատաշա:

ՆԱՏՕ

էտ մէ քիչ թանգ շի նտախ, Սաշա:

ԱԼԷՔՍԱՆԳԻ

Ի՞նչ անիւմ թէ թանգ կու նստի. քիզ համա 'ես վիճկ կու խնահիւմ. դլուխս զրաւ կու դնիւմ քիզ համա:

ՆԱՏՕ, գրկելով:

Դուն ինձ խիստ իս սիրում, շէր Սաշա:

ԱԼԷՔՍԱՆԳԻ

Խիստ, խիստ, շէր նատաշա: Տեսայ թէ չէ, էն օրն էլէտ սիրեցի քիզ:

ՆԱՏՕ

Չիմ աւտում, չիմ աւտում, Սաշա, կալալէրնիւրը դիկ էաէնց ին խօսում:

ԱԼԷՔՍԱՆԳԻ

Ախ, նատաշա, գանա 'ես նրանց նման իմ. նրանց լիղուն ուրիչ է, սիրտը ուրիչ. ամա իմ լիղուն... (Ձեռքը կրծքին խփելով) սյ:

ՆԱՏՕ, հեղձուժեամբ:

Գի՛ղիւմ, գի՛ղիւմ... 'ես վուր բաժինք չէի ունեցի, խօսմ չէիր ուզի ինձ...

ԱԼԷՔՍԱՆԳԻ

Նատաշա, նատաշա, ինձ անպատիւ իս անում, մա շէր: Բաժինքն ի՞նչ է, ֆի՛:

ՆԱՏՕ

Բաս խիստ իս սիրում ի՞նձ:

ԱԼԷՔՍԱՆԳԻ

Խիստ, խիստ, նատաշա. ինչումը գ'ուզիս փորցէ ինձ:

ՆԱՏՕ

Գիղիս ի՞նչ է, Սաշա. իմ պիանիսօն պէտկը չէ...

ԱԼԷՔՍԱՆԳԻ, զուխը բորելով եւ առանձին:

է՛լի թազա իմքին:

ՆԱՏՕ, շարունակելով:

Մէ լաւ ուսեալ սո ինձ համա, էսօր մագաղինումը տեսայ, իսուն թուման ին ասում:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Ի՛սու՛ն թու՛ման, էս լաւը չի ըլի, նատա՛շա:
ՆԱՏՕ

Դո՛ւշինկա, Սա՛շա:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Մէ քիչ մուլափ տո՛ւ դուն, նատա՛շա. իմը մէ բա-
րեկամ դազրանիցէմէն կու բերէ հէսաի ոօյեալ, հէս-
աի ոօյեալ, վուր հարուր թու՛ման, հարուր ու իսու՛ն
թու՛ման կու աժենայ:

ՆԱՏՕ, համբուրելով Ալէքսանդրին:

Ա՛խ, Սա՛շա, դո՛ւշինկա, պտա՛շէշկա, դարագո՛ի,
իմ հոքի: (Ա՛խր կենալով:) Էս սաաթիս զալիս իմ,
դնամ լօտօի համա լօքի բերիմ, թէ չէ մամաշէն կու
ջգրվի... (Կիսածայն երգելով:) Թրա լի՛, թրա լի՛, թրա
լի լա լա լա լա՛...)

Դուրս է գնում հիւրասենեակի ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Գ

ԱԼԷՔՍԱՆԴՐ, մենակ. տեղիցը վեր թռչելով, ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛... Վէշէր, բալիք, Կրուժօկ, արօնի-
մէնա, զուքսիք, հա՛, հա՛, հա՛... միլիօն ունիմ թէ
ինչ է... Ե՛ս կի չիմ ուզի, վո՛ւրդի է. հէնց զիդենաս
հինգ հազար թու՛ման ըլի բերում: Էս իժում, իժում,
նատա՛շա, մէ տաս տարուան էդնէն, քսան տարուան
էդնէն, կալեասկա էլ կու սարքիմ, ամա հիմի գլխէ-
մէս հանէ էսունը... Հիմի ամեն օր դուրթ վուր
էսէնց ուզէ ու ուզէ, էս ո՛ւր կ'էհայ... Կախ, դալմա-

դալ. ա՛րի ու էնշախը յիդ գցէ տարէնը հարուր թու-
ման: Զէ, չէ, դժար պահելու իս, նատա՛շա... Ինչի՛
էստունը վաղ փիքը շարի... Է՛հ, ի՛նչ գ'ուզէ ասէ.
Նա իրն ասէ, 'ես իմը կ'օնիմ:

ՏԵՍԻԼ Գ

ԱԼԷՔՍԱՆԴՐ, ՆԱՏՕ

ՆԱՏՕ, մտնելով հիւրասենեակի ձախ դռնից, ձեռքին ափ-
սէով լօքի, դառնում է դէպի կուլիսը:

Է՛ս սաաթիս, էս սաաթիս, էս նմուտիս գնում
իմ: (Ափսէն դնելով սեղանի վրայ:) Էս էլ լօքին... Ա՛րի,
Սա՛շա, դու քան, դնանք բախշէն. մամաշէն զիվիւր է
զալի, դօնադնիքը մենակ ին էնդի: Ա՛րի ախ՛ս՝ ինչ
սիրուն ստօլ ունինք սարքած էնդի շայու — ա լա
գէրնիէր մօգ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Ե՛ս քու հօրն իմ մնում, նատա՛շա, հարկաւուր
բան ունիմ հիզը խօսելու:

ՆԱՏՕ

Ի՛նչ կայ, հիմիսկ էւէա յիդ կու գառնանք: Գնանք,
չայ իմինք էնդի, ինչքու պապաշէն էլ դու քայ. ի՛նչ
կու շինիս էստի մենակ: (Թուրից բռնելով:) Զո՛ւտա, է՛,
գնում իմ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Լա՛ւ, գնանք:

ՆԱՏՕ

Ա՛րի, ա՛րի, մէ իմ նէժնի ձալօի հիդ ճանչցնիմ քիդ:
Ծաղրանքով ներկայացնում է իր քնքուշ քեռակնո-

ըր: Ալէքսանդրը ծիծաղելով, գլուխը շարժում է: Թեւեակցած եւ բրբռալով դուրս են գնում դահլիճի ձախ կողմից:

Տ Ե Ս Ի Լ Ե

ԽԱԽՕ, ՍԱԼՕՄԷ, մտնում են հիւրասենեակի ձախ դռնից:

ԽԱԽՕ

Ձէ, քու արիւր, Սալօմէ, լաւ չէ անում, պիտի խրատիս. նշնած ախշկայ համարցակութիւնն ս՛վ է իմացի:

ՍԱԼՕՄԷ

Մօղէն էտէնց է, բատօնօ ջան, ի՛նչ անիս:

Լօտօի արկղը բանալով՝ Թղթերը կարգի է բերում:

ԽԱԽՕ, նստելով ձախ կողմը, ընկողմարանի վրայ, ոտները կախ գցած:

Հէյ գիդի ժամանակ, չարխի պէս պտուտ իս գալի... Ես վուր նշնած էի, Սալօմէ, դունչս կ'օսէիր կոխաքով էր կոխպած ու աճկերով վո՛նց կանէի օմքնու էրեսին մտիկ անի, կ'օսէիր գեղնումը ցցած է:

ՍԱԼՕՄԷ

Ենթադ վո՛նց էիր դիմնում էնչախը, բատօնօ. աթմորթին աճկիր ունենայ ու չկանենայ օմքնու մրտիկ անի՛, լիզու ունենայ ու չկանենայ խօսի՛. կուճիս կու տրաքի, Աստուճ գիդենայ: Լաւն էն է, պրծանք էն ժամանակէմէն, թէ չէ ճլէքը կու ննգնէի:

Գնում է կարգի բերում դահլիճի սեղանը:

ԽԱԽՕ

Ձի՛ր ժամանակը կու՛լի լաւը. արա էս ի՛նչ բան

իր սարքի. տղամարթիքը շափթնելով դադում ին ու դուք կի մէ գիշիրումը խժուում իր: էն աժդահա *) վուրփնէրին էլ պիտի խաղան, շումպօ փուրս՛վ. խոուն տարեկան աւել կու՛լի:

ՍԱԼՕՄԷ

Առանց նրան լօտօ կու՛լի, քա՛:

ԽԱԽՕ

Կը՛մ նրա սատանի գլուխը. քու տարսը փսակած ախշիկ ունէ:

ՍԱԼՕՄԷ

Ի՛ի, բատօնօ, նա հալա ունէ, խաղում է, դուն քօռ Գիգօլու կնգան սոսա, վուր նրա մարթը հաց շունէ ուտելու ու ինքը կի միզ մօղ է ձրվում. վո՛նց կու՛լի նրա բանը:

ԽԱԽՕ

Ի՛հ, Սալօմէ, վուրթի, նրա բանը ինձ հարցու. քու արիւր, մէ շարաթ չի բլի էրծթէ բադիէն բերիլ է, մարթումէն թաքուն, միր հարկնի մօղ գրաւ է դրի հինգ մանէթով, ամսէնը պիտի էրկու շայի էլ շահ տայ, էս թոււանը մէ արասի կ'օնէ: Գնացիլ է ու աճկը դուս է էկի, էն գիշիրն էւէտ գիփ մէտի տանուլ է ալի լօտօումը, քու արիւր. տեսնիմ թէ՛ նփն է թափում:

ՍԱԼՕՄԷ, հայելումը ուղղուելով:

Ի՛իհ, օշովու համա չափս ու ձիւ չկայ, բատօնօ ջան:

*) Խօսքը Մարթայի մասին է:

Տ Ե Ս Ի Լ Զ

ՆՐԱՆՔ, ՕՍԷՓ

ՕՍԷՓ, մտնելով դահլիճի աջ կողմից, նեղացած:

Հը՛... էս ի՞նչ իս սարքի, էլի:

ՍԱԼՕՄԷ

Բաս ի՞նչ էի արի, յօրէն աշխրբի դճնադնիւր ին մօդ էլի բախշումը:

ՕՍԷՓ

Բէհէսար նամադուլ ին արի, վուր մօդ ին էլի. ո՞վ էր ասում նրանցը վուր մօդ ըլին. մէ ինձ էլ հարցնին, է՛:

ՍԱԼՕՄԷ

Ունցնաւուր իս, քա՛. ախշիկ ինք նշնի, շգան, շշնահաւուրի՛ն:

ՕՍԷՓ

Չնահաւուրին... Դիփ իմ ուրախութեանի համա ին ուրախանում, դանա շիմ գիդի. նրանց ուրախութիւնն էն կու՛լի վուր մարթ բէրախտանայ, նստին, վրէն խօսին ու ծիծաղին:

ԽԱՆՍՕ

Ի՛նչ խիստ իս ժանգոտի սիրտդ, Օսէփ. ախար էտդդա նիդանայ ու շարանայ կու՛լի, վուր էս էրկու օր է դուն իս նիդանում ու շարանում, վուրթի՛:

ՕՍԷՓ

Ա՛խ, մամիդա, նէտայի մէ ըլելու բան ըլի, դօշս

դանկով կէս անիւմ ու սիրտս հանիւմ քի շանց տամ, վուր էնշախն իմանաս թէ ի՞նչ իս ասում:
ԽԱՆՍՕ

Մամիդի սիրտը կէս ըլի, վուրթի, ու էտ շտենէ:
ՕՍԷՓ

Արա ասում իս, ի՞նչ անիւմ ախար. լօտօի վնւխս է վուր շօկրօկվիլ ին ու համեցէք ին էլի: Աւտաս քսան հօրի աւել ըլին: Ճնահաւուրի էին ուզում, ամեն մարթ իր համա էր էկի շնահաւուր արի, թէ չէ դիփոռնանցը մէտի հէնց մէ վուխտը վնւրդի միան էկանք: Կու զրգէին էլի մէկս մէկու մօդ թէ՛ արա, Սալօմէն ախշկան նշնիլ է ու չի՛ք գալի՛, գնանք. վիրշը՛ էս մոռնդուէկ լօտօի համա, էլի: Վուրին էլ սա կու կանչէր թէ՛ փլանինք էտի ին ու դուք էլ համեցէք: (Սալօմէին:) Ասա՛ չէ, էլի:

ՍԱԼՕՄԷ

Ի՛նչ է ասում. բաս քու բիճանցը չէի իմաց արի:
ՕՍԷՓ

Է՛լ:

ՍԱԼՕՄԷ

Էլ ո՞վ. քու բիճանցն իմ իմաց արի, քու դէղիդի ախշկերանցն ու էստի քու ախպուր կնգայ մօդ զըր-գեցի հիմի:

ՕՍԷՓ, չարանալով:

Ինչի, ինչի. նրանք էլ մէ ուրիշ օր էին էկի:

ՍԱԼՕՄԷ

Արա՛, դուն միր հէսարն ինչ գիդիս, վուր խօսում իս անմիդ. թաւաթ ինչ ասիս վրէս ին ասում ու

չէի կանչի, վուր խուզիլ էին ու մէ տարի հիդս խը-
ուով էին կացի:

ՕՍԷՓ

Ա՛խ, Աստուծ, Աստուծ, էսդնդա էլ քուութի՛ն...
(Յարձակուելով դէպի լոտօի սեղանը՝ սփռոցի ծայրը քա-
շուծ է:) Սիրտս ասում է՝ էս սաաթիս փուլուփանդը
մէջը դի:

ՍԱԼՕՄԷ

Ի՛ր, քու գլուխ շունիմ, քա՛:

Գժգո՞ն դուրս է գնում հիւրասենեակի ձախ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Է

ՕՍԷՓ, ԽԱԽՕ

ՕՍԷՓ

Ա՛խ, Աստուծ, կնիկարմտին գանա է՛նդուր իս
ստիգծի աշխրբի էրեսին, վուր տղամարթու արու-
նը խմէ:

ԽԱԽՕ

Համփիրէ, համփիրէ, Օսէփ ջան, վնւրթի ջան,
դուրթ իս ասում, դի՛փ դուրթ իս ասում. ամա վուրն
էլ պիտի եօլա տանիս. ի՛նչ անիս, էկիլ ին, տանէն
խօ շի՛ս կանա գուս անի ու աշխրբի խօսելու շիս
դառնա էտու համա:

ՕՍԷՓ

Աշխրբի խօսելուն վուրն էնչախը թամաշա արա
դուն, վուր էքուց էլօր դու քան, դուանս պուրլիկա-
ցիա կ'օծին:

ԽԱԽՕ

Ի՛րհ, լաւ է դուն էլ, քա՛:

ՕՍԷՓ, նստելով լոտօի սեղանի մօտ:

Լաւէն վուրն է, ի՛նչս ասում. հէնց զիղիմ օճօռը
զլիսիս քանգվում է:

ԽԱԽՕ

Ի՛նչ է պատահի, Օսէփ:

ՕՍԷՓ

Աստուծ վուր զիղէ իմ գլուխն ու արիւր. յօրէն
Լէպրօինց Փասօն, ասում ին, գանգատ է տուն տա-
րի ինձ վրայ:

ԽԱԽՕ

Ի՛նչ գանգատ:

ՕՍԷՓ

Փուղ իմ պարտ ու հոքէհանի պէս ուզում է:

ԽԱԽՕ

Վո՛յ, քուանամ՝ ես:

ՕՍԷՓ

Էն անաստուծը, դարթնի իմ բարաթը, ձեռին
չարչու բարաթ ունէ իմը գրաւ ու հաշա է ուտում:

ԽԱԽՕ

Ննարար նրա պէս էլ անաստուծ մարթ կու՛լի:

ՕՍԷՓ

Անաստուծ ասիր ու պրծար: Ա՛յ, կու կանչին ու
կու տեսնին. ամա ինձ էս սաաթիս փուղ է հարկա-
ւուր, փո՛ղ, ու շիմ կանացի ճարի. ումէն ուղեցի՛
էլ բարաթով օջով շմավա գնաց, ու ապրանքս խօ
կիտագնով շիմ կանա ծախի: Հալրաթտան, ափալս
իմացան ու դիփուները գլխնիրը վերաշեցին: է՛ս արաւ

ինձ Սալօմէն, էլի. էն օխտը հարուր թումանը վուր խոտոացաւ, տեսնիմ հիմի սլ է համբրում:

ԽԱԽՕ

Ախար էտ ինչի՛ր իս ասում, Օսէփ. ախշկաա բողազը խօ դնւս կու կարվի:

ՕՍԷՓ

Իմ բողազն ուփրօ վաղ է դուս կարվում: Տեսնիմ թէ էքուց Աստուձ ի՛նչ է տալի. մէ տիղ էլի ումիկ ունիմ:

ԽԱԽՕ

Ախար դուն էն անասաձուն վո՛ւնց էիր մափա գրնում. աջար քու խիլքին, Օսէփ:

ՕՍԷՓ

Ե՛հ, մամիդա... Կարիքն իր խիլքն ունէ... Բաս... 'ես վուր ասում էի թէ հիմիկվան ապրելուն մարթ չի կանա դիմնայ, էս էի ասում, ա՛յ: Հալալ առուտրումը խէր չկայ, հառամ առուտրի շնուք 'ես շունէի, ու էկաւ, էլի, տարէս տարի աւելցաւ ու վուրգիտր բարկեցաւ, էնդի կարվեցաւ:

ԽԱԽՕ

Վո՛յհ, վո՛յհ, վո՛յհ, վո՛յհ, ինչի՛ գեղինը չիմ մըտնում:

ՕՍԷՓ, վեր կենալով:

Միր առուտրումը դիփ հինգ-վից մարթ չկայ վուր իրանց փուղով ըլին առուտուր անում, էն փուղն էլ հալալ է թէ հառամ, Աստուձ գիղէ, մնացածը դիփ նիսիա, դիփ նիսիա. քու ապրանքը ծախեցի՛ սրա փուղը տվի, սրա ապրանքը ծախեցի՛ նրա փուղը տվի. էտէնց գնում է շարխի հանգն, էլի, ինչրի

մէկը կու աասա գայ ու գուլքը շխիը կու հանէ՛ գնաց մէ ծէրէմէն մէկէլը, դիփ մէտի քար ու քանդը մէշը գնվեցաւ: Ախար մարթ համ դուրնի քրիհին դիմնայ, համ պրիկաշիկներու ուտիլ խմելուն ու տօնլուղին դիմնայ, համ փուղի տիրուշ շահին դիմնայ, համ կորած նիսիին դիմնայ, համ փշացած ու փախցրած ապրիքին դիմնայ, համ էլ իր տանը (Աօտօի սեղանին ձեռքով խփում է:) էս դազկին դիմնայ ու սրա հիղ էլ մէկէլներո՛ւն: (Նօրից խփելով:) Դիփ կնգդիրքը, դիփ կնգդիրքը... Իմ կնիկը վուր առանց ինձ վից հարուրը օխտը չէր շինի, խօ դիփ մէտի մօշալ կու՛լէր ու էս բանը շէր գայ գլուխս: Ո՛ւր է, ո՛ւր էն ուսումն ու լուսաւորութիւնը, վուր միր կնգդիրքը միղ պէտկը գան: Հայի՛փ, հայի՛փ, հայի՛փ իմ դրանիցա: Ա՛յ կնգդիրք... Ի՛նչ գ՛ուգէ բանումն ըլի աղամարթը, իմ դարաջի մարթու կնիկը հալալ հիղը ննգիր է. էփողի կնիկը էփող է, գրողի կնիկը գրող է ու վաճառականի կնիկը վաճառական. մէտի գագում ին, մէտի ուսում ին, դարդն էլ կէս է, ուրախութիւնն էլ. էստի կի հազիր հազրարաշի*) դադած փուղ պիտի ըլի, վուր նստին ու էս (կրկին խփելով սեղանին:) մունգուէկ բանի վրայ մաշին իրանց կինքը: Էրնէկ գիղենամ ի՛նչ է դուս գայի էսդանց... (կանացի ձայնով եւ ծաղրելով:) Սէմդիսէտ սէ՛մ, սէմդիսէտ դի՛ւմ... Ա՛յ չօռ ու ցաւ ու Աստձու կրակ:

ԽԱԽՕ

Դուն ժամանակն ասա, վուրթի, ժամանակը, թէ

*) Թիֆլիզի բարբառում ասվում է և՛ հազիր հազրարաշի:

չէ յօրէն մանթիբը չին վուր գիշերն ինչկի լուսը նստած կլուրերումը թուխտ ին խաղում:

ՕՍԷՓ

Օհ, հօ, հօ, հօ, թէ չէ կնգղիբը խօ լայիղ չին անում թուխտ խաղայն, ա՛յ: էտ մէ թուխտն էր, էտ էլ խլեցին ձէւնէնեբէմէս, փառք Ասածու. մի վախենա, էքուց էլօր բիլխարդ էլ կու խաղան Ասածու կարող զօրութենով: Ի՞նչ իս ասում, ի՞նչ մարթիբը խնդում ի՞ն, հնգրէնը մէկը, հնգրէնը մէկը. ամա կնգղիբը՝ հաղարումը ինը հարուր ինըսուն ու ինը դօմարբաղ ին. արա վուր տղամարթը դու քայ հիմիկվան կնգղիբանց մօղ, ի՞նչս ասում: էլի աղբաթը խէր ըլի տղամարթկերանցը. տեսան վուր ապրիլը դժարացաւ, շատ բանէմէն ձեռը վիկալան: էլ վուրդի է վաղուցվան բիգիսպուրիբը, թայիսմէլէբը, զուռնով քէփիբն ու զօղիբը. թարղը տվին, գիփ թարղը... ամա կնգղիբը ինչ կէին, կէին, ինչոր չէ ու (Ձախ ձեռը բարձրացնում է եւ իբրեւ մէկ ծանր առարկայ բռնած վայր է թողնում:) վիկալան ու մէ բան էլ վրէն աւելցրին: էս պիկնիկ է, կ'օսէ, էս վէշէր է, կ'օսէ, էս 'երբօր օրով բաղումը մէձաբը է, կ'օսէ. մարթիբը մնացիլ ին տարեկուս արած ու էրեխերը մէ ձէն վա՛յ դէգի ին կանչում դուլուղչերու ձեռին: Ո՛ւր է, ո՛ւր, դադաստանը պիտի ինձ տան վուր է...

Չարացած ման է գալիս:

ԽԱԽՕ, դժուարութեամբ վեր կենալով, առանձին:

'Ես ու իմ հորին զրուստ է ասում, զի՛փ զրուստ է ասում:

Գուրս է գնում հիւրասննակի ծախ դանից:

Տ Ե Ս Ի Լ Ը

ՕՍԷՓ, յետոյ ԱԼԷՔՍԱՆԴՐ

ՕՍԷՓ

Ա՛խ, ա՛խ, ա՛խ...

Արմունկը յենելով վառարանի զէնին, զուխը բռնում է եւ մնում անշարժ, տխուր դրուժեան մէջ: Երկար լուռութիւն:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, մտնում է դահլիճի ծախ կողմից:

Ա՛խ, իմ հէր, էկա՛ք: (Լուռութիւն: Մօտենում է Օսէֆին:) Իմ հէր...

ՕՍԷՓ

Օհ, Ալէքսանդրէ, (Ձեռք տալով:) համեցէք, նստի՛: չիմի էկա՛ր:

Նստում են:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Չէ, շատ վուխտ է էստի իմ, բախշումն էի:

ՕՍԷՓ

Ուրիշ, թաղա ի՞նչ խարար:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Թագէն էն է, իմ հէր, վուր էն շափթին ուզում իմ փսակվի:

ՕՍԷՓ

էտէնց շո՛ւստ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Հա՛, իմ նաշալնիկը գնալու է Պետերբուրգ ու խէշախպէրս պիտի նա ըլի:

ՕՍԷՓ

Լնու, վուր յիդ գայ, էնչախն ըլի, ինչ հաջաթ:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Չէ, էտ խիստ կու ուշանայ, իմ հէր:

ՕՍԷՓ

Լնու, քու քէփն է, վունցոր գ'ուզիս:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ, կակազելով:

Սխար... իմ հէր...

ՕՍԷՓ

Հն, հն, իմանում իմ. փուղիլը համըրիմ էս սասթիս:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Հն, իմ հէր, թէ կարելի է:

ՕՍԷՓ

Քիդ դրուսան ասիմ, Ալէքսանդրէ, ձեռաց շունիմ, պիտի մէ քիչ մուլափ տաս, ու թէ առանց փուղի իս ուզում փսակվի՝ էտ դուն գիգիս, ախպէր:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Վն, էտ ինչի՛ր իս ասում, իմ հէր:

ՕՍԷՓ

Լան էն է ասիմ քիդ, ախպէր, կանց խափիմ: Գուն ինձ ասա՝ հիմիկվան օրէնքը վննց է, 'ես վուր բարաթով օմքնու փուղ պարտենամ ու նա ինձ վրայ գանգատ տուն տանէ, ջեր պիտի կանչին ինձ, խօսեցնին թէ չէ:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Բարաթը ինչ հանգի բարաթ է:

ՕՍԷՓ

Վէքսիլ:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Հաստատամ:

ՕՍԷՓ

Հաստատամ:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Էտու օրէնքն էնէնց է վուր կարող ին մէքաշ տուն գա էստի, ու թէ էն սասթին չհամըրեցիր, տուն ու արիդ կու մհրին:

ՕՍԷՓ

Մռանց ինձ կանչելու:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Հն, առանց կանչելու: Էտուրը կ'օսին՝ արէզպէ-չէնիէ իսկա:

ՕՍԷՓ

Իմ վէքսիլումը վուր նա ուրիշի բարաթ ըլի ստացի ինձմէն զրան:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Հն, էտ ուրիշ է. թնխա ունիս էտումը:

ՕՍԷՓ

Չէ, ամա օրթումով կու հաստատիմ:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Էտու օրէնքն էլ էնէնց է վուր ջեր քու վէքսիլի փուղը կու համըրիլ տան ու իժում, թէ կանաս, հաստատէ վուր նա քունը ուրիշի բարաթ ունէ ձեռին:

ՕՍԷՓ, սաստիկ շփոթուած:

Ղնւրթ իս ասում:

ԱԼԷՔՍԱՆԳԻՐ

Ղուրթ:

ՕՍԷՓ, ծնկանը խփելով եւ տեղից վեր թռչելով:

Բաս, տունս քանդվեցաւ:

Լոուժիւն: Դահլիճի ձախ կուլիսից լսվում է Կատօի ձայնը՝ Սնչա, Սնչա, ովոր կանչում է քիզ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, մօտենալով Օսէփին:

Էտ ի՛նչ խարար է, մէ դրուստ ասան ինձ:

ՕՍԷՓ

Կ'օսիմ, կ'օսիմ, հալա գնան, կանչում ին:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, զլսարկը վերցնելով եւ առանձին:

'Ես վուր տեսնում իմ, իմ տունն էլ է քանդվում:

Դուրս է գնում դահլիճի ձախ կողմից, բայց իսկոյն վերադառնալով անհետանում է դահլիճի աջ կողմից:

Տ Ե Ս Ի Լ Թ

ՕՍԷՓ, մենակ:

Էս ի՛նչ իմացայ: Տիմի դուրթ վուր գան էստի, էս լսօ գեղինը մտայ 'ես: Ինչի՞ հիմիսկ էւէտ դէվէր չիմ բշկվում էստի: Վո՛ւրդի ճարիմ էս սաաթիս էն-դադա փուղը. էստուրը ժամանակ է հարկաւուր ու նրանք կուլի էսօր էւէտ գան, հէնց էս սաաթիս. լսօ գնացի, խարար էլայ, էլ ո՞վ ինձ ինչ կու տայ: Մէրաչ կու փաթըթվին պարական տէրիքը գլխիս, բողազումս հուփ կու տան, էլ չին խօսեցնի, էլ ձէն չին հանիլ տա... «Ի՛ս տու, իս տու էս սաաթիս»... (Մազերը բաշելով:) Ա՛խ, Սա՛լօմէ, Սա՛լօմէ...

Դահլիճի աջ կողմից մտնում է Գէվօն:

Տ Ե Ս Ի Լ Թ

ՕՍԷՓ, Գէվօ

ՕՍԷՓ, շարունակելով:

Ա՛յ, սա էլ, ա՛յ...

Գէվօ

Բարիգուն, Օսէփ:

ՕՍԷՓ, իրան մոտանալով:

Դո՛ւն էլ էկա՛ր, դո՛ւն էլ քու փուղն իս ուզո՛ւմ: Դէ չուստ արա, չուստ, հոգիս հանէ, քանի բերնումս է, մէկն էրկու շինէ պարակս: Ասան, ասան... ասան վուր էրկու հարուր պարա չիմ, ասան վուր չուրս հարուր իմ պարա, ասան, էլի, պարտկան տէր իս: Ասան, մի խնահի ինձ, պիտի քու փուղը սաղանայ, էլ ինչի՛ն իս մնում, պլօկէ կաշիս, հանէ ջիզարըս սաղ-սաղ, մաս-մաս արա ու ամեն մէ կտուրը մէ-մէ գրօշով ծախէ վուր փուղդ չկորչի... (Գէվօն աչքերը սրբում է:) Լաց ըլի, լաց, կո՛րաւ փուղիքդ... (Խփում է ճակատին:) Կո՛ւտրացայ, կո՛ւտրացայ...

Գէվօ, փառածուելով Օսէփին:

Օ՛սէփ ջան, Օ՛սէփ:

ՕՍԷՓ

Դո՛ւն իս ասում ինձ՝ ջան, թէ՛ վուր դուն էլ իմը պարտկան տէր իս:

Գէվօ

Քու շարը տանէ, Օսէփ ջան, քու շարը:

ՕՍԷՓ, ուշքի է գալիս եւ լացի ձայնով:
Փշանցայ, Գէվօ ջան, (Գրկում է Գէվօին): փշանցայ:
Լուռ տեսարան:

ԳԷՎՕ

Սիրտդ բռնէ, հէր օխնած, տղամարթ չիս:
ՕՍԷՓ

Էլ ի՞նչ տղամարթ, մէ անմիղ շուրի կտուր իմ.
դիւի մէտի ձեռնէս գնում է... Գնաց, գնաց նամուսս.
(Լալով): իմ պատուական նամուսը թնայեցի:

Աչքերը սրբում է:

ԳԷՎՕ

Աստուծ օղորմած է, Օսէփ ջան:
ՕՍԷՓ

Աստուծ էլ խռով կացաւ գլխիս ու 'Երգինքն էլ:
էս արաւ ինձ, էլի, էս, իմ ախշկայ մարթու տալը:
Նէտայի մէ քու փուղը թամամ մայինց կանենամ
տա. կու տամ, վունցոր կուլի կու տամ, մի վա-
խենա:

ԳԷՎՕ

Ի՞նչս ասում, Օսէփ, նէտայի ունենամ, վուր գըլ-
խամեռ էս սաաթիս էրես չի ըլի դիփունանցը. բաս
էլ ինչի՞ բարեկամ իմ:

ՕՍԷՓ

Վուր ունենաս, Գէվօ ջան, էլ բարեկամ չիս ըլի
իմը, էտ սիրան էլ չէիր ունենայ էնչախը. թնղ էլի
էտէնց խիղձ ըլիս, վուր կանենամ քիզ բարեկամ
ասի: էտ քու մէ սրտացաւ ձէնն է մնացի ինձ աշ-
խըրքումը, թնղ էտումէն էլ է մայինց չգրգվիմ: Փոր-
ցեցի, դիփ մէ օրումը փորցեցի. էլ օշով շխնահից

ինձ՝ վունց բիձա, վունց ախպէր, վունց բիձու աղէն...
Տեսան վուր հորեվարք իմ, դիփունքը մէտի թողին
ինձ ու դռնիքը վրէս դայիմ կոխպեցին:

ԳԷՎՕ

Ա՛րի, էգէրա էլի մէ իմքին շարա ըլի:
ՕՍԷՓ

Քու դուշմնին շարա ըլի էնէնց, վունցոր ինձ շա-
րա կուլի:

ԳԷՎՕ

Ա՛րի, սրի հալա, բան կայ:
ՕՍԷՓ

Էլ ի՞նչ բան պիտի ըլի:
ԳԷՎՕ

Ա՛րի, մի ուշացնի:
ՕՍԷՓ

Ի՞նչ է, մէ ասա, է՛:
ԳԷՎՕ

Ա՛րի, սրի, ճամփին կ'օսիմ:
ՕՍԷՓ

Ուրիշ հանգն իս ասում. ասա՛ ի՞նչ խարար է,
ի՞նչ է պատահի. ասա, մի վախենա, մի խնահի ինձ,
ինչ էլաւ, էնպու վրայ աւելի ի՞նչ պիտի ըլի. թօփի
գուլէն դիրիլ է սրտումս, ի՞նչ հաջաթ հիմի թէ
դօշս էլ կու պատուտին ու սպանած սիրտս մէշէն
կու դուս գջլին. ասա՛ ի՞նչ է, ի՞նչ. դուքանս խօ չի՞ն
մհրում:

ԳԷՎՕ

Ա՛րի, սրի ու կու տեսնիս:

ՕՍԷՓ

Մհրոնմ ին բան:

ԳԷՎՕ

Ասում իմ, էլի:

ՕՍԷՓ

Այ, գեղինը մտի, Օսէփ: (Մոռանալով իրան յարձակվում է դէպի լօտօի արկղը, միջից թղթերը հանում է եւ անկարգ այս ու այն կողմն ածելով:) Խաղացէք, հիմի խաղացէք... (Մի քանի թղթեր թափվում են յատակի վրայ: Գնալով:) Խաղացէք, խաղացէք...

Գուրս է գնում դահլիճի աջ կողմից:

ԳԷՎՕ, հետեւելով:

Հայիփ, հայիփ մարթ:

Գուրս է գնում Օսէփի ետեւից: Գահլիճի ձախ կողմից երկու ծառայ, հազնուած ինչպէս ցոյց է տուած նկարագրութեան մէջ, *) բերում են մեծ վաղաներով դարձեալ մի քանի տեսակ պտուղներ եւ գնում են այնտեղ սեղանի վրայ. յետոյ երկու սենեակներումն էլ բոլոր հանգած մոմերն ու լապտերները վառում, լօտօի սեղանի շուրջը ամոռներ դարսում, վայր թափած թղթերից զարմանքով մի քանիսը հաւաքում, սեղանի վրայ են գնում ու դուրս գնում հիւրասենեակի ձախ դռնից:

*) Տես գրքիս վերջում բեմական ցուցումները յաւելուածը:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՍԱԼՕՄԷ, ՄԱՐԹԱ, ՆԻՆՕ, ՓՕՓՕ, ԲԱԶՄԱԹԻԻ ԿԱՆԱՅՔ, գեղեցկապէս զարդարուած. մտնում են դահլիճի ձախ կողմից:

ՍԱԼՕՄԷ, մտնելով:

Համեցէք, համեցէք, գէթաղվա, անուշ արէք, սվինչ կամենաք, լօտօն հաղիւր է:

ՄԱՐԹԱ, առաջ գալով:

Ուցիսօ չէ, քան, թխտիրն էլ բաժնած:

Միւս կանայք ցածրածայն խօսելով եւ ծիծաղելով մօտենում են դահլիճի սեղանին:

ՍԱԼՕՄԷ, առաջ գալով եւ տեսնելով որ լօտօի թղթերը անկարգ ածած են:

Էս ի՞նչ խաբար է, էս սվ է արի:

ՄԱՐԹԱ

Թային կատու է ման էկի վրէն, քու արիւր, Սալօմէ:

ՍԱԼՕՄԷ

Չիմ իմանում թէ էս ի՞նչ է:

ՄԱՐԹԱ, Սալօմէի ձեռքը բռնում է եւ առաջ բերելով:

Ի՞նչ իմ ասում, Սալօմէ, (Միւս հիւրերը խուճախուճա հաւաքուած դահլիճի սեղանի շուրջը, ուտում, խրմում, խօսում, ծիծաղում են:) կազնաչէի Մաշինկին չչինիս, գէթաղվա:

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ խաբար է:

ՄԱՐԹԱ

Քան, չիս իմացիւ. էն օրը Խնդօինց տանը պօլուիմ-
պէրիալը ձեռաց ծըպըպից:

ՍԱԼՕՄԷ

Միթամ էտ գնըթ է, ինձ Քանիկէն ասաւ:

ՄԱՐԹԱ

Ինչ է ասում, քան, աչքարա իմ անկերով տեսայ:

ՍԱԼՕՄԷ

Վո՛յ, գեղինը պատուէ, նրա սատանին դէվէր տա-
նէ. նս վուր չէի աւտում:

ՄԱՐԹԱ

Խիստ գուղն է, ասում իմ, է: Մէկէլ օրն էլ
Խիրքօինց տանը էրկու մանէթը նրա առչիւր ստօլի
տակը գթայ. (Ձեռքով ցոյց տալով:) էսէնց դէվէր էր
քաշի: Ստօլի տակը մտիկ անիմ, տեսնիմ, էրկու
վուաը վրէն ղայիմ վրայ է հարի: (Ծաղրելով:) «Վո՛յ,
քօռանամ, ասում է, էս վո՛ւնց է դէվէր ննգի վուր
չիմ տեսի», կ'օսէ:

ՆԻՆՕ, մօտենալով Սալօմէին միւս կողմից:

Ի՞նչ իր քչփշում, քան:

ՄԱՐԹԱ, Սալօմէին, ծածուկ:

Գէթաղվա, Սալօմէ ջան, դրան վունչիչ շասիս:

ՍԱԼՕՄԷ, Գարթային:

Աբան, քիմէն չիմ արմնում:

Գարթան հեռանալով Սալօմէից, մօտենում է դան-
լիճի սեղանին, ուտում, խմում է. յետոյ վեր-
ցնելով մի ափսէի վրայ զանազան մրգեր եւ
քաղցրաւենիք, գնում խառնվում է միւս հիւրե-
րի հետ, որոնցից մի քանիան արդէն լօտօի սե-
ղանի մօտ տեղ են բռնել:

ՆԻՆՕ, Սալօմէին:

Ի՞նչ էր ասում. ո՛ւմն էր բամբասում:

ՍԱԼՕՄԷ

Վունչիչ, մէ բան էր, նինօ ջան:

Գնում է դէպի լօտօի սեղանը:

ՆԻՆՕ, չձողնելով Սալօմէին:

Հալա, Սալօմէ ջան, գէթաղվա:

ՍԱԼՕՄԷ

Վունչիչ, քու արիւր, նինօ ջան, Մաշինկի վրայ
էր խօսում:

ՆԻՆՕ

Ի՞հ, կրիմ դրա աճկը. ինչ դա ասէ, դուն էլ աւ-
տան. իրան ասիս վուր ղայր փուղը վէր է գալի ու
իժում հաշա է ուտում:

ՍԱԼՕՄԷ

Ի՞իհ, դուն էլ, նինօ:

ՆԻՆՕ

Աստուձ գիղենայ: Մնւղայիթ կաց, Սալօմէ, դրա
փուղին:

ՄԱՐԹԱ, ափսէն ձեռքին, խնձոր կրծելով եւ ծամելով,
հեռուից կանչում է:

Աբան, չի՛նք կցում, Սալօմէ. անրի, էլի:

ՍԱԼՕՄԷ, հիւրերին:

Համեցէք, համեցէք, գէթաղվա. (Նինօին:) անրի,
նինօ:

Գահլիճի ձախ կողմից մտնում են Նատօն եւ նրա
ընկերուհիները թեւ-թեւի տուած:

ԲՈՂՈՐԵՔԵԱՆ, ծափ տալով:

Բրնվօ, բրնվօ, բրնվօ, Փօփօ:

Նատօն եւ նրա ընկերուհիները թեւակցած ման են դալիս դահլիճում եւ յետոյ նստում են լօտօից հեռու, աջ կողմը:

ՍԱԼՕՄԷ, տալով վերջին թուղթը:

Աբն, թնմամ է:

ԲՈՂՈՐԵՔԵԱՆ

Թնմամ է, թնմամ, դիփուներս ունինք:

ՍԱԼՕՄԷ, նստելով սեղանի աջ կողմը:

Աբն, վէր էկէք, ախշկիրք, ձիր կազնաշէին 'ես իմ, դմբուլ էք:

ԲՈՂՈՐԵՔԵԱՆ

Ղարուլ ինք, դարուլ:

ՍԱԼՕՄԷ, շարունակելով:

Աբն, մէ-մէ մանէթ վէր գանք ու մէ-մէ թուման վիկալինք, էրկու խաղ կ'օնէ, լմւ կու'լի:

ԲՈՂՈՐԵՔԵԱՆ

Լմւ, լմւ, լմւ:

ՓՕՓՕ, ծիծաղելով:

Վնյ, վնյ, վնյ, վնյ, քանդվի ձիր օջախը:

ՍԱԼՕՄԷ

Դուն էլ քու մարթու պէս սկուպօի մի ըլի, քն:

ՓՕՓՕ

Դիանխ, դիանխ, սաղ էլ գու քայ: (Փողը տալով):
Բունեցէք, տարէք, տարէք, ձիգմէն ո՞վ կու պրծնի:

ՍԱԼՕՄԷ, գրպանից տասը ռուբլիանոց հանելով:

էս իմ մանէթի ախղ, թումնանուց է գիդեննք:

Աբն, բերէք:

Դահլիճի աջ կողմից մտնում է Ալէքսանդրը:

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ

ՆՐԱՆՔ, ԱԼԷՔՍԱՆԴՐ

ՆԱՏՕ, մտենալով Ալէքսանդրին:

Ա՛խ, Սնշա, ինչի՞ ուշացար:

Նատօի եւ Ալէքսանդրի այս խօսակցութեան ժամանակ բոլոր ճիւղերը կարգով տալիս են Սալօմէին, միմեանց հասցնելով, փողեր, մատանիք, ապարանջան, մէղալիօն եւ այլն: Սալօմէն հաւաքում է այդ իրեղէնները իր առաջ, կարգով դարսում եւ լօթներով նշանակում:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, գլխարկը մի կողմը դնելով:

Բան ունէի: (Առաջ բերելով Նատօին, շփոթուած եւ կիսածայն:)
Մնւլափ, Նատնշա, բան իմ ասում:

ՆԱՏՕ, նմանապէս կիսածայն:

Ի՞նչ խաբար է, ձեռտ ինչի՞ է դողում:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Քու հօր վրայ գանգատ ին տուն տարի:

ՆԱՏՕ

Ի՞նչս ասում, Սնշա, ի՞նչ գանգատ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Օմքնու փուղ է պարտ:

ՆԱՏՕ

Ո՞վ ասաւ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Ինքը քու հէրը:

ՆԱՏՕ, բարձրաձայն ծիծաղում է:

Հն, հն, հն... (կիսածայն:)
Իմ հէրը պարտկ չունէ, Սնշա...

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Վննց չէ վուր ինքն ասաւ:

ՆԱՏՕ

Հանար է արի, Սնչա, ինչի՛ր իս ասում. (Ծիծաղելով): հա՛, հա՛, հա՛...

Մօտենում է իր ընկերուհիներին:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, առանձին, շուարուած:

Ա՛րի ու ընն հասկացրու... Նէտ, դուդկի, բրատ. ինչքու իմ փուղիբը թամամ շտան, էլ վուտս չիմ տուն դնի էստի:

ՍԱԼՕՄԷ, վերջացնելով փողերի նշանակելը:

Քա՛, տոպրակն ի՛նչ էլաւ:

ՆԱՏՕ, իր ընկերուհիների հետ մօտենում է Ալէքսանդրին եւ թեւ-թեւի տալով:

Ա՛խ, Սնչա, Սնչա... (Ծիծաղում է): Հա՛, հա՛, հա՛...

Գնում են դահլիճը, ուր Նատօն հիւրասիրում է

Ալէքսանդրին եւ կրկին իր ընկերուհիներին:

ՄԱՐԹԱ, Նատոյին:

Ի՛նչ խարրներումն իս, քա՛:

ՍԱԼՕՄԷ

Ո՞վ ունէ տոպրակը:

ՄԱՐԹԱ, բարձրացնելով տոպրակը:

Նս ունիմ, Նս, ա՛յ:

ՍԱԼՕՄԷ

Ի՛ս տու էստի:

ՄԱՐԹԱ

Զէ, Նս պիտի ասիմ ջեր:

ՍԱԼՕՄԷ

Քա՛, բի էսթէնը, կարբով գու քայ, էլի:

ՄԱՐԹԱ

Զէ, չէ, օշովու տուր չիմ տա, պիտի ջեր Նս ասիմ:

ՍԱԼՕՄԷ, նեղացած:

Դէ ասա՛. (Առանձին): ախավագլախ քու գլխին:

ՄԱՐԹԱ, շարժելով տոպրակը:

Բը՛խը, բը՛խը... (Հաղում է, յետոյ հանելով զարն-րը եւ բարձրանայն): Պիտղիսիա՛, վճ սիմդիսիա:

ՓՓՓՓ, ծիծաղելով:

Աբա՛, Մարթա, վունցոր գիղիս մէ:

ՄԱՐԹԱ

Տրօ՛իկա, (Մէկ բանի խաղացողներ իրանց մէջ լուռ՝ ամբօ-տէրնօ են խտղում): սիմնացէտ... տնդի սուղի՛... ստանրիկա... չօխլօխանա՛ չէտիբի է, գիղենաք... դէ-սէտնիկ Բէրօս... Սօրօկա:

ՍԱԼՕՄԷ

Ի՛նչ ասիբ, չիմացայ:

ՄԱՐԹԱ

Սօրօկա, քա՛... Դվաննցէտ... սէ մ... Պէտը Իվա՛նիչ... է՛լի Սօրօկա թավիս ջօխիթ:

Բոլոր հիւրերը ծիծաղում են:

ՓՓՓՓ, ծիծաղելով:

էտ էլ ի՛նչ վագլախ է:

ՄԱՐԹԱ

Սօրօկ աղին, քա՛... Սիմդիսիա սէ մ... պէտլած է... տրիցէ բօվնա... Բարարանի պակա:

ՍԱԼՕՄԷ

Կրի՛մ դրա գլուխը, հա՛:

ՄԱՐԹԱ

Սիմդիսիա դվա՛...

Տ Ե Ս Ի Լ Ժ Դ

ՆՐԱՆՔ ԽԱԽԾ

ԽԱԽԾ, տուն վազելով հիւրասենեակի ձախ դռնից ու Մար-
թային ընդհատելով:

Ա՛յ, չճու ու ցաւ ու Աստձու կրնա՛կ: Մճշլա արէք,
մճշլա արէք, անա՛ք անդնիր:

Ընդհանուր դարմանք:

ՍԱԼՕՄԷ

Ի՞նչ խարար է, ի՞նչ խարար, բասձո՛ս:
ԽԱԽԾ

Էլ ի՞նչ խարար պիտի ըլի, գեղինն ինք մտնում,
չուստ մճշլա արէք:

ՄԱՐԹԱ

Ինձ բաս մէմարթլէրի, վուր շօռ ու ցաւ իս ա-
սում:

ԽԱԽԾ

Էն վուր, դուն էլ սրանց խիլքի հիդ իս ննդի ու
վուրդիոր լօտօ ըլի բաց, գիլին դուն իս ձքած:

Հեռուից աղմուլի ձայներ է լսվում՝ Ա՛յ, հա՛, չէ...

Օսէփի ձայնը՝ Էկէք, Էկէք...

ՄԱՐԹԱ, վեր կենալով տեղից, բարկացած:

Նս էս արիդէն չիմ թողնի:

ԽԱԽԾ, Մարթային չանչ անելով:

Ը՛հ... (Սալօմէին:) Զիս իմանում, քա՛:



Տ Ե Ս Ի Լ Ժ Ե

ՆՐԱՆՔ, ՓԱՐՍԻՂ

ՓԱՐՍԻՂ, ներս է մտնում դահլիճի աջ կողմից եւ աջ
ձեռքը շարժելով:

Էս լաւ է, նս ու իմ հորին. նս կընձկընձալի
ապրիմ ու դուք էստի իմ փուղերով չընդդան սաբլի՛ք:
ԽԱԽԾ, Սալօմէին, մինչդեռ ամենքը շփոթվում են ու շուար-
է՞ս էիք ուզում, էլի: [վում:

ՍԱԼՕՄԷ, վեր կենալով:

Գժվի՛լ իս, պարուն. դուս արէք, դուս:

ՓԱՐՍԻՂ

Ա՛յ, նս ձիդ կու շանց տամ դուս արէքը:

ՍԱԼՕՄԷ

Փնայ ջան, մէ դուս արա էս մարթուն, է:

ԱԼԷՔՍԱՆԳՐ, Փարսիղին:

Ի՞նչ իս ուզում, պարուն, էտ ի՞նչ քաղաքավա-
րութի՛ն է:

ՓԱՐՍԻՂ

Քու բան չէ, պարուն, նս իմ փուղն իմ ուզում
ու թէ կանաս դուն էլ քունն ուղէ. մէքաչ չհամբրին,
ինչ խոստացել ին:

ԽԱԽԾ, Փարսիղին:

Նըգնքէն չիս վախենո՛ւմ:

ՓԱՐՍԻՂ

Նս իմ պարտին իմ ուզում, իմ պարտկը...

Դահլիճի աջ կողմից անմիջապէս լսվում է Օսէփի
աղաղակը՝ Էկէք, Էկէք...

Տ Ե Ս Ի Լ Ժ Զ

ՆՐԱՆՔ, ՕՍԷՓ, ԳԷՎՕ, ՍՈՒԴԷԲՆԻ-ՊՐԻՍՏԱՎ, պաշ-
տօնական շղթայով, նրա ԳՐԱԳԻՐԸ, ԳԱՐԶՕ, ԶԱ-
ՆԱԶԱՆ ՄԱՐԴԻԿ, տեղական եւ եւրոպական հա-
զուստով. մտնում են դահլիճի աջ կողմից:

ՕՍԷՓ, շարունակելով, խելացնոր նետվում է հիւրասենեակը:
Էկէք... (Միւսները մնում են խորքում:) Խաղացէք,
խաղացէք ու իմ բէարուութենի վրայ ծիծաղեցէք,
քանի կանար:

Հիւրերը շփոթուած վեր են կենում իրանց տեղերից:
ԽԱՆՍ, առանձին:

Հիմի կի բաթմիշ էլանք:

ՍԱԼՕՄԷ

Էս ի՛նչ խաբար է:

ՕՍԷՓ

Աստուծ վնչ զիղէ քու գլուխը, իմն էլ հիղը:
(Գառնալով դէպի Սուղէքնի-Պրիստավը եւ միւսները:) Է-
կէք, վի՛ր գրեցէք, մհրեցէք՝ տո՛ւն, ախի, ճանգ, մո՛ւս
ու (Յոյց տալով լստօի սեղանը:) Էս դագգէն էլ հիղը:

Գահլիճի ծախ կողմից մտնում են ծառաները եւ
մնում են այնտեղ անշարժ մինչեւ վերջը:

ՓԱՐՄԻՂ

Վի՛ր գրեցէք, վի՛ր գրեցէք էս սաաթիս:

ԽԱՆՍ, առանձին:

Էս ի՛նչ Աստձու բարգութին է:

Սուղէքնի-Պրիստավը իր գրագրի օգնութեամբ սկսում

է վեր դրել բեմի խորքում գտնուած առարկաները եւ
ըստ ստիղորուծեան նրանց վրայ թղթեր կպցնել: Հիւրերը
շուարուած հաւարվում են լստօի սեղանի ձախ կողմը:

ՍԱԼՕՄԷ, գլխին խփելով:

Վո՛յ, քօռացի, Սնլումէ:

ՄԱՐԹԱ

Էսէնց անպատվութի՛նն էլ ի՛նչ է:

ԽԱՆՍ, Մարթային, կիսաձայն:

Քան, ձէնդ կարէ, է:

ՕՍԷՓ

Իմ պատիւը թնղվեցաւ: (Մատնացոյց անելով Փար-
սիդին:) Սրանն ավէք պատիւ յօրէսի դէնը, սրան. լաւ
լստօն սա կու սարքէ ձիդ համա, սո՛՛ վուր շապիթը
վրէմէս հանից ու վուղշ կայինքս գավթից:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, առանձին:

Իմ քվիր աունը քանդէ Աստուծ, վուր ինձ էստի
դէվէր գցից:

ՕՍԷՓ, հեզօրէն:

Պարուն փեսայ, գլխիտ շարէն ախ. էլ 'ես վուղ
չունիմ քի տալու:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, սաստիկ վիրաւորուած:

'Ես քու մանխարէն իմ թէ ի՛նչ է, վուր վրէս ծի-
ծաղում իս էլ. 'ես քու բարեբար մարթ չիմ, պարուն:

ՕՍԷՓ

Հանն է, հանը, (Չարկելով գլխարկը լստօի սեղա-
նին:) հանը:

Գլխարկը թողնում է այն սեղանի վրայ:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, վերցնելով իր գլխարկը, բարկացած:

'Ես իմ պատիվն էնդու համա չիմ ճարի, վուր
էսէնց անպատվին:

ՕՍԷՓ, դառը ծիծաղով:

հա՛, հա՛, հա՛... Պանախը... հա՛, հա՛, հա՛...

ԱԼԷՔՍԱՆԴՐՐ, մտտենալով Նատոին:

'Ես քիզ շատ էի սիրում, նատա՛շա, ամա դուն ինքզ տեսնում իս' 'ես միզ շունիմ. մնաս բարով:

Գնում է: Փարսիղը ուրախութիւն է արտայայտում:

ՕՍԷՓ, յարձակուելով դէպի Սալումէն, որ շուարուած կանգնած է աջ կողմը, ձախ ձեռքով բռնում է նրա աջ թեւը, իսկ միւս ձեռքով մատնացոյց է անում Ալէքսանդրին:

Մտիկ, մտիկ. ա՛յ քու չինովնիկը:

ՆԱՏՕ, ձախ կողմը ընկողմարանի մօտ կանգնած՝ կանչում է:

Սա՛շա, Սա՛շա...

Ալէքսանդրը դուրս է գնում դահլիճի աջ կողմից:

Տ Ե Ս Ի Լ Ժ Է

ՆՐԱՆՔ, առանց ԱԼԷՔՍԱՆԴՐՐԻ

ՆԱՏՕ, շարունակելով:

Սա՛շա...

Ընկնելով ընկողմարանի վրայ, լաց է լինում:

ՍԱԼՕՄԷ, երկու ձեռքով գլխին խփելով եւ կիսածայն:

Գեղիներ պատուէ ու ինձ դէվէր տանէ:

ՕՍԷՓ, Սալումէին:

Աճկդ դուս էկամ: (Գառնալով դէպի Փարսիղը:) Հըն, բռնէ, կշտանցի: (Կաթէն հանում է:) Բռնէ, բռնէ, (Զրկում է Փարսիղի վրայ:) էս էլ քունն ըլի: (Վրայ է ընկնում լոտօի սեղանից վերջնում է իր գլխարկը եւ ձգում

Փարսիղի ոտքի տակ:) էս էլ վնասիդ տակը հաւարէ, էլ ինձ վունչիչ հարկաւուր չէ:

Խելագարի պէս այս եւ այն կողմն է ընկնում:

ՓԱՐՍԻՂ, ցածր ձայնով:

Բի, բի...

Գառնալով Սուդերնի-Պրիստավին, հետը խորհրդակցում է:

ՕՍԷՓ, լոտօի սեղանից զանազան առարկաներ դէն ձգելով:

Հըն, հըն, (Զգելով վառ կանդէլաբրը:) աճկդ դի, հըն...

ՀԻՐԵՐԸ, նոյն միջոցին:

Օ՛հ, Օ՛հ, խիլքէն էլաւ, խիլքէն էլաւ. մտիկ, մտիկ:

Նատօն շարունակ լախ է, բնկերուհիները մխիթարում են նրան: Սալումէի սիրտը նեղանում է:

ԽԱԽՕ, որ գտնվում է Օսէփի աջ կողմը:

Օ՛սէփ ջան, վնւրթի ջան:

ԳէՎՕ, փաթաթուելով Օսէփին միւս կողմից:

Օ՛սէփ ջան, Օ՛սէփ ջան, խիլքի արի, ի՛նչ իս անում:

ՕՍԷՓ, մի փոքր լուռութիւնից յետոյ, ուշքի գալով:

Ա՛խ, ա՛խ, ա՛խ... Ա՛խ, Գէվօ ջան, իմ խիլքն էնչախը կորաւ, վուր էս քախկումը 'ես տուն ու տիղ սարքեցի... Չղի՛մցայ, ախպէր ջան, չղի՛մցայ 'ես էս կիներին, ու թէ լաւ բարեկամ իս իմը, անրի, սաղ-սաղ ինձ գերեզմանը դի, վուր էլ աշխրբի էրես չտեսնիմ... 'ես փշանցայ, գնանցի, օջախս քանդվեցաւ, ու նա քովանայ յօրէսի դէնը, ով իր բանն ինձ վրայ լաւ բերէ...

Գուրս է գնում հիւրասննակի աջ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ը

ՆՐԱՆՔԻ, առանց ՕՍԷՓԻ

ՍԱԼՕՄԷ, ձեռքը ճակատին տանելով և ԸՆԿՆԵԼՈՎ աջ կողմը, բազմոցի վրայ, ցածր ձայնով երկար ողբոց է հանում:

Ա՛խ...

Մնում է անշարժ ԸՆԿՏՈՒԿԱԾ դրուժեան մէջ:

ԳԻՎՉ

ԱփսճԼԱ, ափսճԼԱ իմ Օսէփի...

Ձեռքը զլխին տանելով, մնում է տխրութեան մէջ խորատուզուած:

ՓԱՐՍԻՂ, որ խորհրդակցում էր Գարջօի հետ, նորից դառնում է Սուղէքնի-Պրիստավին:

Էլ ի՞նչ իք թամաշա անում, պարուն, վի՛ր գրեցէք զի՛վ մէտի...

Պրիստավը զզուանքով նայում է Փարսիղին, յետոյ առաջ դալով՝ նստում է լուսօի սեղանի մօտ և և իր պաշտօնը շարունակում:

ՄԱՐԹԱ, նոյն միջոցին, հիւրերին:

Մինք էլ ի՞նչ ինք շինում էստի, քան... (Երկու ձեռքով չանջ ուղարկելով Սալօմէի ու Խախօի կողմը և առանձին:) Լա՛ւ տարի ձիզ գայ, լաւ անում գնւք վի՛ր արիք:

Գնում է դէպի դահլիճի աջ կողմը, մի քանի կանայք հետեւում են նրան, միւսները մնում են սալշած դանազան դիրքով:

ԽԱԽՕ, նայելով դէպի երկինքը:

Վա՛ղ էի մեռի՛ էս օրը չէի աեսի:

ՏԵՍՍՐԱՆ: Վարագոյրը կամաց-կամաց իջնում է:

Վ Ե Ր Զ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

Բ Ե Մ Ա Կ Ա Ն Յ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն Ե Ր Ի

[Երէ՛ս VIII, ԳԻՎ 4 ԳԻՎԵ՛նց:]

սև շալ և նոյն շալից դօտի: Ոտնամանը՝ հին ձևի սև ծուղէք և տափակ կրնկանի սև քօշեր: Սկզբում՝ սպիտակ

[Ե- ԳԻՎ:]

[Երէ՛ս XI, ԳԻՎ 8 ԳԻՎԵ՛նց:]

ՄԱՐԹԱ, 50 տարեկան, կարմիր և լիքը երեսով, սև մազերով հաստափոր ու բարձրահասակ այրի կին: Բուրբուրովին

[Ե- ԳԻՎ:]

[Երէ՛ս XII, ԳԻՎ 4 ԳԻՎԵ՛նց:]

ԾԱՌԱՆՆԵՐ՝ մինը Քրակով և սպիտակ ձեռնոցներով, միւսը չէրքէզի ընտիր հագուստով:

[Երէն 3, հոռ 14 վերջին:]

Թողնի, վուրթի: (Ծալած դամիրքան դնում է տախտի քէչայի տակ եւ ոտները կախ դցած վրան նստում:) Վիհ, դէնացվա, էս քու-

[Եւ այն:]

[Երէն 7, հոռ 4 վերջին:]

Մէ նրի, աղլաջիջի, ձեւա իս աու, ծնգնիրս էլ չէ դալի:

Նստոն աշխատում է վեր կացնել:
ՍԱԼՕՄԷ, օգնելով:

Նս էլ օտկիմ, բատոնո ջան:

[Եւ այն:]

[Երէն 17, հոռ 6 վերջին:]

լով ներքեւ, Սալամէի օգնութեամբ բարձրանում է տախտի վրայ:) Դուն էն

[Եւ այն:]

[Երէն 45, հոռ 6 վերջին:]

վուրթի... (Տեսնելով Օսէփին:) Ա՛յ, մնացածն էլ իր հէքն օխնէ:

[Եւ այն:]

[Երէն 1, հոռ 3 ներջին:]

Եւ « 49, « 8 վերջին:]

Ուր հարկն է աթոռներ, բազկաթոռներ, հանգած լապտերներ և հանգած մոմերով աշտանակներ ու կանդէլարըններ: Յերեկ է:

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երևու: Տող: Տպրուած է: Պետք է:


III		цензрою	цензурою
3	2 ներջին	առուտեան	առուտէան *)
5	4 «	փանփելով	փամփելով
6	10 վերջին	տակն ու վրէն	տակն ու վրայ
8	14 ներջին	խնչ	խնչ
10	8 «	կուտօկը	կրուտօկը
11	2 վերջին	հան	հըան
«	13 «	մօշլա արան	մօշլա արա
15	ճաշարին	ԱՌԱՏԱՆ	ԱՌԱՏԻՆ
«	12 ներջին	չարանաս	չարանան
16	4, 3 «	բանը, բատոնո	բանը, բատոնո
21	3 «	զալի	զալի
22	13 «	զիզի	զիզի:
24	1 «	չինոփելի	չինօփելի
25	15 վերջին	անշխտում	անշխատում
26	7 «	մինխտար	մինխտար
27	ճաշարին	ԱՌԱՏԱՆ	ԱՌԱՏԻՆ
28	10 վերջին	տվի	տվի,
31	13 ներջին	լինում	լինում:
32	10 վերջին	էս	էն
«	9 ներջին	վունչինչ	վունչինչ
«	11 «	«	«

*) Ասում են ե՛ւ՝ առուտէան կամ առուտեան:

Նրևու: Տող: Տպրուսած է: Պիտր է:

35	13	վերելոց	քոռանամ	քոռանամ
«	2	հերակոց	շարժուարձներ	շարժուարձներ
37	13	վերելոց	հոգով	հոքով *)
39	3	«	քոռանամ	քոռանամ
«	4	«	լուսամտից	լուսամուտից
«	8	«	«	«
40	7	«	ախշկերանց	ախշկերանց
41	3	«	աչքիբը	աճկիբը
42	5	«	տակն ու վրէն	տակն ու վրայ
45	9	«	Օսէփ ջան	Օսէփ ջան
46	12	«	Համեցէք	Համեցէք,
«	5	հերակոց	ասէք	ասէք,
48	7	«	չինովնիկ	չինովնիկ
56	6	«	քոռանամ	քոռանամ
58	9	«	վրէմէդ	վրէմէտ
«	11	«	կօ'սէ	կ'օսէ
61	6	վերելոց	Մատնտնիշ	Մատնանիշ
95	1	հերակոց	Կռուժօկը	Կրուժօկը
«	4	«	Կռուժօկուամը	Կրուժօկուամը
96	2	վերելոց	Կռուժօկն	Կրուժօկն
108	8	հերակոց	էրեխեբը	էրեխեբը
121	7	վերելոց	լալու:	լալու: »
«	15	«	լալու: »	լալու:
128	11	հերակոց	զիզէ	զիզէ

*) Ուղղագրութիւնը յարմարեցրած է Թիֆլիզի բարբառի առողանութեանը:



17674
17675

8.2

6.8

2013

